


ՀԱՍԿԵՐ

մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք

Հովհ. Թումանյանի թանգարան

ՀԱՍԿԵՐ

մանկական գրականության և բանահյուսության
տարեգիրք

1



ԵՐԵՎԱՆ
2010

Տարեգիրքն հրատարակում է Հովհ. Թումանյանի թանգարանը՝ համագործակցությամբ Երևանի պետական համալսարանի

Նյութերը տպագրվում են Հովհ. Թումանյանի թանգարանի և ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի խորհուրդների երաշխավորությամբ

«Հասկեր» մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք:
Hasker: A Yearbook of Children's Literature and Folklore
Հովհ. Թումանյանի թանգարան: Եր.: — 208 էջ:

«Հասկեր» տարեգիրքը նվիրված է մանկական գրականության ու բանահյուսության ուսումնասիրությանը: Պարբերականն ունի գիտական, գեղարվեստական ու մատենագիտական բաժիններ: Գիտական բաժնում ընդգրկված են հոդվածներ ու սեղմ հաղորդումներ մանկական գրականության ու բանահյուսության տարբեր խնդիրների վերաբերյալ: Գեղարվեստական բաժնում ներկայացված են մանկական գրականության բնագիր ու թարգմանված փոքրածավալ ստեղծագործություններ, նաև քիչ հայտնի թարգմանական նմուշներ՝ վերցված հնատիպ կամ հազվագյուտ հրատարակություններից: Մատենագիտական բաժնում տրվում է մանկական գրականության և բանահյուսության ոլորտում վերջին տարիներին լույս տեսած կարևոր աշխատությունների ցանկ:

ISSN 1829–264X

ՏՊԱԳՐՎԵԼ Է «ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, ֆաքս՝ (+37410) 23 25 95
էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am

Տարեգրքի անվանումը փոխառված է «Հասկեր» (1905–1917, 1922)
մանկական ամսագրից: Նվիրվում է մեծ երախտավորներ
Ստեփան և Եկատերինա Լիսիցյանների հիշատակին



ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

Այսօր արդեն թերևս քչերը գիտեն, որ Հակոբ Պարոնյանը (1843–1891)՝ «հայ կյանքին և հայ բարոյականին վրա հսկող անաչառ դատավորը» (Մ. Ճանաշյանի բնորոշումն է), ում սրատես հայացքից չի վրիպել 19–րդ դարի երկրորդ կեսի մեր իրականության մեջ տեղ գտած գրեթե ամեն մի արատավոր երևույթ՝ լիներ դա քաղաքական թե սոցիալական, կենցաղային թե բարոյական, ում երգիծանքի սլաքներից սարսափում էին անգամ հայ ազգային երևելիները, և ով երկնել է համաշխարհային մրցակցության գնացող երգիծական բացառիկ ուժի երկեր, հեղինակն է նաև հայ մանկական առաջին պարբերականի: Նա Կ. Պոլսում 1876 թվականի հունվարի 1–ից, իր խմբագրած հիմնական՝ «Թատրոն» երգիծաթերթին զուգընթաց, հայ երեխաների համար սկսում է հրատարակել մի պատկերազարդ երկշաբաթաթերթ՝ «Թատրոն. բարեկամ մանկանց» անվանմամբ: Ինչպե՞ս՝ ոչ առանց հիմքի կարող են տարակուսել բանիմացները՝ մատնանշելով մինչև նշյալ թվականը հայ իրականության մեջ երևան եկած մանկական հատուկենտ պարբերականների փաստը, և ինչո՞ւ նման վերնագրով, ի՞նչ կապ ունի թատրոնը մանկական գրականության հետ՝ անպայման կհետաքրքրվեն հարցասերները:

Հիրավի, Հ. Պարոնյանի «Թատրոն. բարեկամ մանկանց»–ի լույսընծայումից դեռևս 22 տարի առաջ՝ 1854–ին, Մեսրոպ Նուպարյան վարժարանի սաների ջանքերով ու խմբագրությամբ Զմյուռնիայում լույս են տեսել «Թութակ Հայկազյան», իսկ հաջորդ տարի՝ «Երկասեր» պարբերականները, որոնք տարաբնույթ նյութերի հետ միասին տպագրել են նաև մանկական երկեր, հանելուկներ, զրույցներ ու հեքիաթներ... Թեև մեր հանրապետությունում այդ պարբերականների հավաքածուների բացակայությունը թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու դրանց հիմնական բնույթի, գաղափարական բովանդակության կամ գեղարվեստական արժանիք-

ների մասին, այնուամենայնիվ «Թութակ Հայկազյանի» երկու համարների (1855–ի 3–րդը և 5–րդը) միկրոֆիլմերից արված պատճենները ենթադրել են տալիս, որ դրանք եղել են վարժարանի աշակերտների գրական երախայրիքները՝ առաջին թոթովանքները, հիմնականում ներառել են կրոնաբարոյական միտվածությամբ գրաբար բանաստեղծություններ և ունեցել են «բարոյական, բանասիրական և ուսումնական» ուղղվածություն, որոնք «ավելի շուտ դպրոցականների ընթերցանության համար նախատեսված նյութերի ուրույն ժողովածուի տպավորություն են թողնում»[1]: Ասել է թե՝ մենք բավարար կռվաններ չունենք՝ վերոհիշյալ պարբերական–ժողովածուները համարելու իբրև հայ մանկական մամուլի առաջին օրինակներ:

«Թատրոն. բարեկամ մանկանց»–ի՝ հայ մանկական առաջին պարբերական համարվելու հաջորդ մրցակիցը 1872–ից Կ. Պոլսում լույս տեսնող «Ավետաբեր տղայոց»–ն է՝ մի պարբերական, որը «Միսիոներների ամերիկյան ընկերության»՝ «Ավետաբեր» լրագրի (1855–1915) հավելվածն էր: Հիմնականում օտար լրագրողների (Է. Բլիս, Ջ. Գրին, Հ. Բարնըմ, Հ. Ալեն...) կողմից խմբագրվող սույն պարբերականը հետապնդում էր, ինչպես Հ. Պարոնյանը կասեր, «աղետաբեր» նպատակներ. տասնամյակներ շարունակ լուսավորություն տարածելու քողի տակ արևմտահայոց շրջանում տենդագին ջանում էր տարածել բողոքականություն, ինչը կարող էր վտանգավոր դառնալ 19–րդ դարի երկրորդ կեսի հայ Ազգային զարթոնքի ու ազգային–ազատագրական ոգորումների պայմաններում: Կոնկրետ մեզ հետաքրքրող «Ավետաբեր տղայոց»–ի բոլոր համարներում կար, օրինակ, հատուկ բաժին՝ «Սուրբ գիրք կարդացող փոքրիկ տղայոց պատմություն» խորագրով, ուր զետեղվում էին ավետարանական զարմանահրաշ բազմաթիվ պատմություններ, որոնք վերաբերում էին հաշմանդամների բժշկությանը, մեռյալների հարությանն ու զանազան այլ հրաշքներին: ««Ավետաբերը» միայն լեզվով էր հայ,— իրավացիորեն նկատում է ուսումնասիրողը:— Նա չէր տպագրում հայ իրականության հետ կապված և ոչ մի նյութ, հայ ժողովրդի անցյալն ու ներկան արտացոլող որևէ պատմվածք, չէր հրատարակում առհասարակ աշխարհիկ որևէ բան: Ամբողջովին Ավետարանի ու Աստվածաշնչի առակներն ու բարոյախոսական պատմվածքներն էին թարգմանվում ջերմոցային մի հայերենով և հրամցվում հայ երեխաներին, նրանց մեջ առաջին հերթին մեռցնելով ազգային զգացումը, նաև աշխարհիկը, հաղորդակից չդարձնե-

լով նրանց այն գիտելիքներին, որ օգտակար էր լինելու կյանքում»[2]: Ուրիշ խոսքով՝ հայ մանկական պարբերականների համապատկերում մենք ո՛չ փաստացի և ո՛չ էլ բարոյական որևէ իրավունք չունենք թեև հայատառ, սակայն հայ երեխաներին կասկածելի՝ դեպի օտարացում ու հլություն, կամազրկություն ու կրոնական խորհրդապաշտություն տանող հանդեսին վերապահելու առաջնության պատվավոր իրավունքը, քանի որ վերջնահաշվում այն չի ծառայել իր բուն նպատակին:

Պատկերն ավելի ընդգրկուն դարձնելու և անարդար սուբյեկտիվիզմից խուսափելու նպատակով լսենք նաև այն հեռավոր օրերի ժամանակակցի՝ նշանավոր խմբագիր–հրապարակախոս Հովհաննես Գայսերյանի (1870–1924) կարծիքը՝ գրված այդ առիթով. «Մանկական ու պատանեկան գրականությունը ավելորդ է ըսել կարծենք թե մեծ դեր կատարած է մեր նորահաս սերունդին մեջ, ու քանի որ միշտ նորահաս սերունդ ունինք, ամեն ատեն ալ անոնց համար լրագրի ու գրքի հարցը ունինք մեր ազգին դիմաց:

Նախ դնենք ցանկը այն լրագիրներուն, որոնք մեր մանուկներուն համար տպված են:

1872, **Ավետաբեր Մանկանց** հայ. և հայատառ թրքերեն ամսաթերթ որ կը շարունակվի մինչև այսօր:

1876, **Թատրոն Մանկանց** միայն մեկ տարի:

1882, **Բուրաստան Մանկանց** մինչև 1888:

1889, **Ծաղիկ Մանկանց**:

Ինչպես կերևի վերոհիշյալ ցանկեն, մենք 4 մանկական թերթ ունեցած ենք թրքահայոցս մեջ. **Ավետաբեր Մանկանց**ը որ ամսաթերթ էր և կը հրատարակվեր Ամերիկյան միսիոնարաց կողմե, չէ կրցած իր նպատակին ծառայել որովհետև անի միշտ բողոքականության օռկանը եղած է և հոն մանուկներու հարմարագույն հոդվածներու քովիկ կրոնական հոդվածներ կը վխտան:

Ուրեմն **Ավետաբեր** թեև մանկանց համար, սակայն իր բուն նպատակին ծառայած չըլլալուն, չենք ուզեր առաջնության իրավունքը տալ անոր և կուտանք այդ իրավունքը **Թատրոն**ի Տեր–խմբագրապետին որ նկատի առնելով թե ո՛րքան կարևոր է երգիծանքը՝ ժողովրդին համար, նույնքան և թերևս ալ ավելի անհրաժեշտ է մանուկներու սիրտը ու հոգին կրթել, կըսկսի հրատարակել իր **Թատրոն**ին ճագուկը՝ **Թատրոն մանկանց** որ սակայն դժբաղդաբար միայն մեկ տարի կը տևե:

Թատրոն իր նպատակին կը հասնի, իր նյութերը միշտ օգտակար կըլլան տղաք– ներուն և Պարոնյան իր այդ գործունեության մեջ ալ իր դիրքը կստանա»[3]:

Պատմական արդարությունը, սակայն, պահանջում է մի հարցում, կրկնենք՝ միայն մի հարցում շնորհակալ լինելու օտարածին պարբերականին. այն ակամա անմիջականորեն խթանել է պարոնյանական «Բարեկամ մանկանց»–ի հրատարակությունը՝ իբրև իր հակադրության, եթե կարելի է այսպես ասել՝ իբրև «հակաավետաբերի» հանդես գալուն, առանց որի տեսանելիորեն կաղքատանար հայ մանկական գրականությունը: Իսկ սա սոսկ ենթադրություն չէ. Հ. Պարոնյանն իր «Թատրոն» երգիծաթերթի 1875–ի տարեվերջյան համարների հայտարարություններում խոստանում էր, որ իր կողմից շուտով կիրատարակվի մանկական մի պարբերական՝ «Թատրոն տղայոց» վերնագրով: Եվ քիչ անց թեև փոքր–ինչ սրբագրում է ակնարկված վերնագիրը՝ «տղայոց»–ը փոխարինելով «մանկանց» բառով, բայց և այնպես այդ փոփոխությունը բնավ չի ստվերում «Բարեկամ մանկանց»–ի՝ «Ավետաբեր տղայոց»–ի հենց միայն արտաքնապես հակակշիռը լինելու հանգամանքը: Ի դեպ, ամեն ինչից երևում է, որ մանկական լրջմիտ մի պարբերականի հրատարակությունը հայոց մեծ երգիծաբանի համար եղել է ազգասիրության ու քաղաքացիական պարտքի, հայ մտավորականի պատվախնդրության լուրջ հարց: Եվ դա նույնիսկ այն դեպքում, երբ 33–ամյա Պարոնյանն արդեն գրեթե լիովին հիասթափված էր լրագրության ապերախտ, միայն նյութական ու բարոյական զրկանքներ բերող բնագավառից, երբ հաճախ իր պարբերականների չվաճառված համարներն ստիպված քաշով ծախում էր նպարավաճառներին՝ գոյությունը մի կերպ պահպանելու համար:

Թուրքական բռնապետության մթնոլորտում, երբ, ինչպես Պարոնյանն էր ասում, «ժամանակը հայերեն չ՚հասկնար», երբ «էշ մը ունեցողն ավելի պատիվ և մեծարանք կը վայելե քան զայն, որ հանճար ունի», և երբ «մոլիներն ալ չեն դադրիր հալածելե երգիծաբանները», նա ունեցել է հոգեբանական, բարոյական, նյութական ու ստեղծագործական ծանր պահեր: «Պոլիսը թույլ տված էր, որ մեծ էտիրնեցին անոթի ապրի: Պոլսո հայությունը անոթութենե մեռցուց զայն»[4],— ցավով արձանագրում է Հրաչ Զարդարյանը: Հիշենք հենց երգիծաբանի՝ դեռ 1873–ի հուլիսի 7–ին «Մեղվում» տպագրած «Երեկ հուղարկավորության հանդես մը...» առաջնորդողը, որը բանասիրության մեջ հայտնի է «Ողբ» անունով: Միքայել Կյուրճյանն այն անվանում է «աղե-

խարշ դամբանական մը», ուր «գրագետին դառնությունը երկար ատեն զսպված, կը պոռթկա անօրինակ ուժգնությամբ»[5]: Սա մեծ երգիծաբանի և ընդհանրապես հայ մտավորականի կյանքի դժվար պահերից մեկի, «նեղ օրերից մեկի» ցնցող նկարագրությունն է. գրողը ցավով պատմում է, որ «Մեղու» երգիծաթերթի չվաճառված համարները, ինչպես ինքն է ասում, իր «զավկըները», ստիպված քաշով ծախել է նպարավաճառին. «Երթա՜յք բարյավ զավկըներս, երթա՜յք բարյավ. գիտե՞ք, թե ի՛նչ ցավեր քաշեցի ձեզի համար: Կին մը ամենեն շատը տարին անգամ մը կ՚երկնե, բայց ես ամեն գիշեր, ամեն ցերեկ երկնեցի, զձեզ հղացա և ի լույս ընծայեցի. դուք իմ զավկըներս եք»[6]:

Այս առաջնորդողն ուշագրավ է նաև ուրիշ առումներով. Պարոնյանը նախ՝ քաջ գիտակցում էր երգիծանքի բացառիկ ներգործուն ուժը, երգիծաբանի կյանքի տառապալից ուղին, որ լի է հալածանքներով ու զրպարտություններով, այնուհետև ընդգծում էր, որ իր ծաղրի սլաքներն ուղղված են եղել արատավոր երևույթների դեմ, դրանց մերկացնող ուժը բխել է խոր մարդասիրությունից՝ խայթել՝ ուղղելու, այլ ոչ թունավորելու համար, և ինքն իր կոչմանը վերաբերվել է ամենայն զգուշությամբ ու պատասխանատվությամբ. «Ձձեզ շատ բամբասեցին, ավրեցին ու զրպարտեցին, բայց ինչ ուզեն թո՛ղ ըսեն, դուք իմ զավըկներս եք, կը սիրեմ զձեզ... հայր մ՚եմ...:

Խեղճ զավկըներս, ձեզի համար չարաճճի են կ՚ըսեին, բայց դուք ձեր խայթելու պաշտոնն ամենայն զգուշությամբ կը կատարեիք, և եթե խայթեիք ալ չէիք թունավորեր. մինչդեռ ձեր մյուս լուրջ բարեկամները առանց մեկը մյուսը վիրավորելու երկու տող չեն կրնար գրել, և ասոր համար է, որ դատարանները կը դեգերին»[7]:

Ինչպես նկատելի է, մենք կանգնում ենք տարօրինակ երևույթի առջև. մի կողմից խոր հիասթափություն լրագրական գործունեությունից, մյուս կողմից՝ իրար հաջորդող պարբերականների շարան՝ «Մեղու» (1872–1873), «Թատրոն» (1874 – 1877), «Թիյաթրո» (1874–1875), «Թատրոն. բարեկամ մանկանց» (1876), «Լույս» (1879), «Ծիծաղ» (1883), «Խիկար» (1884–1888): Ո՞րն է խնդիրը: Ամենից առաջ Պարոնյան մարդու խորապես հայեցի կեցվածքը, ճշմարիտ մտավորականին հատուկ անձնազոհությունը, իսկ խնդրո առարկայի տեսակետից՝ այն, որ արևմտահայոց՝ 19–րդ դարակեսից ծայր առած հանրային–քաղաքական կյանքի բարդ ու ներհակ մթնոլորտում, Ազգային զարթոնքին հաջորդած և 1877–78 թվականների ռուս–թուրքա-

կան պատերազմին նախորդած տագնապահարույց շրջանում, երբ օտարերկրյա տերություններն արևմտահայոց մեջ պարարտ հող էին տեսնում՝ հոգեորսությամբ զբաղվելու և կրոնական խորհրդապաշտությամբ ու կամազրկությամբ վարակելու հայ շփոթահար մանուկներին, մեծ երգիծաբանն այս անգամ ևս իր ձեռքն է վերցնում գեղարվեստական խոսքի ծանրությունը և սկսում հայոց մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության դժվարագույն գործը՝ արժանի հակահարված տալով օտար ու վնասակար, ավելին, ազգաջլատիչ ազդեցություններին...

Ինչ վերաբերում է պարոնյանական հանդեսի վերնագրում տեղ գտած «թատրոն» բառին, կարելի է վստահաբար ասել, որ թուրքական գրաքննության բիրտ, հաճախ ծիծաղի ու անհեթեթության հասնող պահանջների առկայության պայմաններում իշխանություններից բնավ էլ դյուրին չէր վերստին նոր արտոնագրություն ձեռք բերելը, և Պարոնյանը, խուսափելով հնարավոր քաշքշուկներից ու առանց այն էլ իր նյութական սուղ միջոցների հնարավոր նոր զոհողություններից, նպատակահարմար է գտել հրատարակվելիք մանկական պարբերականը դիտարկել իբրև մայր թերթի՝ «Թատրոնի» հավելվածը կամ, ինչպես այն պատկերավոր անվանում է նրա ժամանակակիցը, «Թատրոնին ձագուկը»: Բացի այդ՝ առանձնահատուկ հետաքրքիր է, թե ինչու է Պարոնյանն իր մայր պարբերականն անվանել «Թատրոն»: Այդ խորագիրն ինքնին ընթերցողի գիտակցության մեջ կարող է առաջացնել համաբանական հետևյալ մոտավոր շարքերը՝ լուրջ // անլուրջ, խաղային // ոչ խաղային և այլն: Համաբանական այսպիսի խաղը կարող էր և՛ գիտակցվել, և՛ չգիտակցվել երգիծաբանի կողմից: Դա էական չէ. խնդիրն այն է, որ «Թատրոն» երգիծաթերթում միաժամանակ տպագրվում էին թե՛ լուրջ (հայ հանրության արատները քննադատող) և թե՛ անլուրջ (պարզապես զվարճալի) նյութեր, որոնցով (=խաղ) մերկացվում էր իրականությունը (=ոչ խաղայինը): Հայտնի է, որ թատերաբեմի վրա գրողները սովորաբար բացահայտում են կերպարների իրական դեմքերը, դեմք // դիմակ հարաբերությունը: Այսպիսի գործընթացն էլ ենթադրում է դեմքի և դիմակի փոխհարաբերություն: Ճիշտ նույն սկզբունքով է հեղինակն իր գլուծգործոց երկում՝ «Ազգային ջոջեր» երգիծական դիմանկարների շարքում, և այլ ստեղծագործություններում ծաղրում ու քննադատում հասարակության տարբեր շերտերի արատավոր կողմերը՝ արտահայտության ու բովանդակության պլանների աններդաշնա-

կությունը, դիմակի ու իրական դեմքի փոխհարաբերությունը: Ասվածից կարող ենք եզրակացնել, որ «Թատրոն» պարբերականի խորագիրն իմաստաբանորեն բավականին ծանրաբեռնված է:

Հաջորդ կարևոր հարցը, թերևս ամենաէականը, այն է՝ արդյոք Պարոնյանը կարողացե՞լ է պատվով դուրս գալ իր առջև դրված դժվարագույն խնդրից: Անտարակուսելի է, որ երգիծաբան գրողը կանգնած է եղել բարդության առջև. նախ՝ ժամանակի աղետալի սղությունը, ծայրահեղ զբաղվածությունը (բանասիրությունն արդեն վաղուց ապացուցել է, որ «Թատրոն» երգիծաթերթի բոլոր նյութերը, չնչին բացառությամբ, նրա գրչի արգասիքն են՝ ստորագրված մտացածին զանազան կեղծանուններով, և ահա դրանց ավելանալու էին գալիս նորերը՝ դարձյալ հիմնականում իր իսկ կողմից ստեղծվող), ապա՝ նորընտիր բնագավառի անսովորությունը՝ մանկական գրականության ինքնօրինակությունն ու մանկագրի այնքան փնտրված ճիրքը՝ ոչ միշտ հասու գրական հսկաներին, անգամ՝ հանճարներին: Եվ եթե այդ ամենին գումարենք նաև մի ուրիշ նուրբ ու փափուկ հանգամանք՝ երգիծաբանի դեռևս ամուսնացած չլինելը[8] և հետևապես երեխաների հետ շփման ու նրանց հոգեբանության քաջիմացության պակասը, ապա հարուցված դժվարություններն ավելի ակնառու կլինեն:

Բայց և այնպես, հայ ժողովրդի ծիծաղի հանճարը պատվով կատարեց ինքն իրեն առաջադրած հիմնախնդիրը. բնավ մանկական գրող համարվելու հավակնություն չունենալով՝ փայլեց նաև այդ ասպարեզում, որի պերճախոս վկայությունը երջանիկ բարեբախտությամբ այսօր պահպանված «Թատրոն. բարեկամ մանկանց» պատկերազարդ երկշաբաթաթերթի ամբողջական հավաքածուն է: Ասում ենք՝ երջանիկ բարեբախտությամբ, քանի որ Պարոնյանն ապերջանիկ էր ամբողջ կյանքի ընթացքում և, թող զարմանալի չթվա, անգամ մահվանից հետո. չպահպանվեցին նրա անձնական թղթերը, շիրմաքար չունեցավ, անդառնալիորեն կորսվեց նույնիսկ գերեզմանը, տխուր հանգամանքների բերումով նրա զավակները ևս չկարողացան հոգալ իրենց հոր թողած գրական ամբողջ ժառանգությունը, և հետագայում միայն որդին՝ Աշոտ Պարոնյանը, մեծ զոհողություններով ձեռք բերեց հոր «Շողոքորթը» կատակերգության ձեռագիրն ու «Թատրոն մանկանց»-ի հավաքածուն և իր մտերիմներից մեկի՝ գրող, մանկավարժ Գուրգեն Թրենցի (1888–1972) խորհրդով նվիրեց Երևանի Մատենադարանին[9]:

Այսօր, իհարկե, անառարկելի է, որ հասկանալի պատճառներով արևմտահայությունը չկարողացավ արևելահայոց պես ստեղծել մանկական հարուստ գրականություն, ուր, ասենք, միայն «Աղբյուր» և «Հասկեր» ամսագրերի շուրջը համախմբված էին նշանավոր այնպիսի հեղինակներ, ինչպիսիք էին Ղ. Աղայանն ու Հովh. Թումանյանը, Հովh. Հովհաննիսյանն ու Ալ. Ծատուրյանը, Ավ. Ահարոնյանն ու Ավ. Իսահակյանը, Վրթ. Փափազյանը, Ստ. Լիսիցյանը, Ա. Խնկոյանը և այլք, բայց և այնպես անժխտելի են նաև արևմտահայ հատվածի բերած պատկառելի նպաստն ընդհանրապես հայ մանկական գրականության զարգացման ընթացքին, մասնավորապես Պարոնյանի «Բարեկամ մանկանց»–ի՝ ժամանակին կատարած պատմական առաքելության շահեկանությունը: Այն, որ վերջինիս պարբերականն անմիջապես գերել է հայ մանուկներին, և չափազանց սերտ է եղել տեքստ–ընթերցող աղերսը, վկայում էին նրա «գրասեղանին վրա լեռան պես դիզված» նամակները, որոնց առիթով գրող–խմբագիրն իր հանդեսի էջերում բազմիցս շնորհակալություն էր հայտնում «մեծ ու պզտիկ, չափահաս ու անչափահաս կարդացողներեն, որոնք այս թերթին պիտանությունը կը գովին», խրախուսում ու երբեմն էլ տպագրում առանձնապես շնորհալիների նամակները: Ահա, օրինակ, դրանցից մեկը.

«Առած նամակներուս մեջ շատ կանոնավոր գրված նամակ մը տեսա՝ որ գիտուն տղու մը վայելուչ կերպով՝ ամսուն օրը, տեղը, թվականը, ստորագրությունը ամենքը շենք շնորհք իրենց տեղը գրված էին, ասոր համար հոս վարը կը դնեմ անոր օրինակը որ չգիտցողներն ալ սորվին նամակ գրել:

Իճապիե, 12 Հունվ. 1876

Խմբագիր Տեր

Թատրոն Մանկանց *ձեր թերթն առինք կարդացինք, շատ սիրելի եղավ մեզի. հասկցանք որ տասնհինգ օրն անգամ մը կը տպագրվի. երանի՜ թե ամեն օր հրատարակվեր. երանի՜ թե մեզի հասակակից տղայք ամենքն ալ առնեին այս թերթը՝ որուն մեջ սիրուն պատմություններ, գեղեցիկ խրատներ և աղվոր զվարճալիքներ կան:*

Ինձի հետ իմ փոքրիկ քույրս՝ Զապելն ալ իր շնորհակալությունը կը հայտնե ձեզ:

Հանելուկը կը լուծեմ, թե որ խոտպացած նվերդ ձեր դեմն ելնող աղքատ տղուն տալ ուզեք:

ՎԱՀԱՆ Մ. ԷՍԱՅԱՆ»[10]*:*

Բնորոշ են նաև հայ գրագետների՝ տասնամյակներ հետո արած խոստովանությունները «Բարեկամ մանկանցի»՝ մանուկ հասակում իրենց վրա թողած բարերար ազդեցության մասին: «1876–ին երբ **Թատրոն Մանկանց**ը կը հրատարակեր, հայրս կը բերեր ու ես կը կարդայի,— 1901–ին հուշագրում է, օրինակ, «Մանզումեի էֆքյար» լրագրի 30–ն անց խմբագիրը,— այն օրեն սկսա սիրել այդ մարդը որ ուղղակի սրտիս հետ կը խոսեր, իր ոճը մանկական և դյուրահասկնալի էր և սիրուն պատմություններով հաճելի կ՚ընծայեր մանուկներու, պզտիկ ոտանավորներ ու հանելուկներ լեցուն էին ամեն մեկ թերթին մեջ և գեղեցիկ պատկերներ կը զարդարեին **Մանկանց Թատրոն**ի էջերը:

Իմ մանկական հոգիս համակրած էր իրեն ու այն օրեն կ՚ուզեի տեսնել մանուկներու բարեկամ Պարոնյանը:

Օր մըն ալ **Թատրոն** չբերավ հայրս, և ես երբ ցավով կը հարցնեի պատճառը, հայրս ըսավ.

— Հոգ մի ըներ տղաս, Պարոնյան իր գործը թեև դադրեցուցած է, սակայն օր մը նորեն կ՚սկսի, անիկա համառ մարդ մըն է»[11]:

«Բարեկամ մանկանց»–ը հրատարակելու ընթացքում գրող մանկագիրն իրեն հաճախ անչափ վարձատրված է համարել՝ տեսնելով իր տված դասերի ու խորհուրդների շոշափելի, արդեն գործնականում կիրառվող առաջին պտուղները: Առօրյայում «տխուր երգիծաբանը» մի առանձին հրճվանքով է, օրինակ, գրում, որ բազմաթիվ մանուկներ (Սերովբե Պերպերյան, Մաննիկ Գոռանյան, Հովհաննես Փանոսյան...) հանդեսին իրենց «դողդոջուն մատիկներովը գրած սիրուն նամակներով» ապացուցում են, որ օժտված են ոչ միայն սուր մտքով, այլև արդեն «հասկըցուցած են թե ինչպես վայելուչ կերպով պետք է գրել նամակ մը, իմաստալից մեկնություն մը տալ բանի մը. հայտնի կերևի թե ասոնք կրցած են մեր թերթին մեջ երբեմն գրած նամակագրության վարժութենեն օգուտ քաղել» (48): Իսկ սա... հանդեսի ընդամենը վեց համար հրատարակվելուց հետո:

Այս ամենին կարելի է հավելել նաև երգիծաբանի ժամանակակիցների բարձր գնահատականը՝ տրված «Բարեկամ մանկանց»–ին: Զմյուռնիայում լույս տեսնող «Արևելյան մամուլ» հանդեսի խմբագիր Մատթեոս Մամուրյանը (1830–1901), օրինակ, խորապես հասկանալով Պարոնյանի պես գրական հսկայի՝ մանկական գրա-

կանության ասպարեզ մտնելու դժվարությունը, ողջունել է նրա այդ ձեռնարկը՝ մատնանշելով գործի լրջությունն ու պատասխանատվությունը. «Երբեմն **Մեղու**ի, այժմ **Թատրոն**ի հեղինակն ոչ միայն գիտե Թեմոկրիտեսի ծաղրն ու ծիծաղը մեր թերությանց վրա ցույց տալ և կծու ու մտացի սլաքներով մոլություն ու զեղծմունք հալածել, այլև տղայոց հետ պարզ, կրթական լեզվավ խոսիլ, միտք բանալու, սիրտ կրթելու համար հատուկ վեպեր և բարոյական խրատներ հորինել. և այս ավելի դժվարին արվեստ է քան մյուսը: Ազգին մեջ որչափ շատնան այսպիսի թերթեր, այնքան բարենշան երևույթ մ՝ է...»[12]:

Վերոբերյալները, կարծում ենք, Հ. Պարոնյանի՝ մանկական գրականության բնագավառում թողած վաստակի խոսուն վկայություններից են:

* * *

«Բարեկամ մանկանց»–ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ մանկական գրականության, դպրոցի ու մանկավարժության ասպարեզում Խաչատուր Աբովյանից (1809–1848) հետո առաջին լուրջ քայլերը կատարել է Հակոբ Պարոնյանը: Վերջինս նպատակ է հետապնդել իր հանդեսի միջոցով «գրական ծաղկոց մը հիմնել սակս (համար. — Ալ. Մ.) փոքրիկ տղայոց, և աստ կրկնել հանապազ այն բարոյական և կրթական դասերը՝ որով միայն կարելի է պատվավոր մարդ և ներհուն քաղաքացի ըլլալ» (8):

Իսկ ի՞նչ ծրագրով էր ներկայանում գրող–խմբագիրը՝ մտնելով գրական նոր ասպարեզ: Հանդեսի անդրանիկ համարի «Հառաջաբանում», որը զետեղվել է իբրև առաջնորդող հոդված ամանորյա շնորհավորանքներից անմիջապես հետո, Պարոնյանը հայտարարում է, որ «Բարեկամ մանկանց»–ի նպատակն է լինելու երեխաների կրթությունն ու դաստիարակությունը, որ այն պարունակելու է կրթական, բարոյախրատական, քաղաքավարական, պատմական, աշխարհագրական, ազգագրական, վիպական, հաշվակալական նյութեր, տնարարությանն ու արհեստներին վերաբերող օգտակար զանազան խորհուրդներ, նաև՝ խրատներ, առակներ ու պարզևաբաշխմամբ լուծվելիք հանելուկներ... Ասել է թե՝ Խ. Աբովյանի պես Հ. Պարոնյանը ևս հանդես է գալիս հայ մատաղ սերունդների մեջ ազգային լուսավորություն տարածելու

ամենալայն ծրագրով ու ամենաազնիվ միտումներով: Եվ գլխավոր նորությունը, որ ակնառու է դառնում պարբերականի հենց առաջին տողերից, երգիծաբանի պահպանած զարմանալի լրջությունն է, զուսպ ու չափավորված լեզուն, պարզ ու հստակ արտահայտվելու ջանքը՝ այնքա՜ն տարբեր «հայոց առաջին զվարթագիր հեղինակի» սովորական ոճից, այն գրչից, որ, ինչպես Մ. Մամուրյանն է բնորոշել, «մերթ մտրակ մ՛ էր որ կ՛արյուներ ընկերային թաքուն վերքեր, մերթ մահակ մ՛ որ կը ջախջախեր ամպածրար գլուխներ, մերթ սուր մ՛ որ հայության մարմնույն փտած մասերն կը ջարդեր, միշտ ուղղության և ճշմարտության քարոզ երևելով, և բարոյական հիվանդությանց սպեղանի մը ցույց տալով»[13]: Հանդեսում Պարոնյան մանկագրի լեզուն տեղ–տեղ անգամ ձեռք է բերում քնարականություն՝ խիստ անհարիր սրախոս երգիծաբանին, և ակամա զարմանում ես նաև դեռ չհայրացած մարդու՝ երեխաներին դիմելու և նրանց հետ մանկական լեզվով խոսելու հոգեբանական հմտություններից.

«Իմ պզտիկ ընթերցողներս, այս **Թատրոն** լրագիրը15 օրը հեղ մը պիտի տպվի հատկապես ձեզի համար: Ինտոր որ ձեր հայրերը կամ ձեր մեծերը ամեն օր խոշոր խոշոր լրագիրներ կը կարդան բան մը հասկնալու համար, նոր բաներ իմանալու համար, անանկ ալ դուք այս **Թատրոն**ը կարդալով ձեր չգիտցած շատ բաները պիտի սովրիք:

Շատ դասեր պիտի տամ ձեզի..., աղվոր պատմություններ պիտի պատմեմ, խաղեր պիտի սորվեցնեմ, հանելուկներ պիտի ըսեմ ձեզի որ լուծեք:

Եվ այս բաները աղեկ հասկցնելու համար՝ գեղեցիկ պատկերներ ալ պիտի դնեմ այս **Թատրոն**ին մեջ. անոր համար չ՛ըլլա որ այս լրագիրը պատռտեք կարդալեն ետքը, հապա պահեցեք, ինտոր որ ձեր խաղալիքը կը պահեք. գալ անգամ նոր **Թատրոն** մ՛ ալ պիտի խրկեմ ձեզի, ասոր քովը դրեք և իրարու կարեցեք. ասանկ ամեն անգամ մեյ մեկ նոր **Թատրոն** առնելով՝ մեկ տարվան մեջ խոշոր գիրք մը ունեցած կըլլաք:

...Սիրուն զավակներս, ըսի թե ձեզի շատ բան պիտի սովրեցնեմ. գիտե՞ք ինչ է սորվեցնելիքներս. ինչ որ պետք է ձեզի կրթյալ և գովելի տղա ըլլալու համար: Ձեր մեջ կան շատեր որ գիտուն տղու մը չվայլելիք բառեր կը գործածին անոնց հայերենը չգիտնալով. կան տղաքներ որ իրենց հորը **աղըպա** կը կանչին՝ չ՛գիտնալով որ հայրիկ պետք է ըսել. ասանկ ալ չեն գիտեր որ մայրիկ պետք է կանչել **տուտու** ըսելու տեղ:

Ասոր պես շատ բառեր կան՝ որոնց հայերենը չեք գիտեր դուք. ահա այս **Թատրոն**ին մեջ անանկ բառերուն ամեն մեկին առջև հայերենը պիտի դնեմ՝ որ դուք աշխա-

տելով սորվիք և պետք եղած ատենը սխալ բառ չ՛գործածիք: Մեծ ամոթ է հայ տղու մը համար երբոր չ՛գիտնա թե **օտա**յին հայերենը **սենյակ** կըսեն, **պաղչա**յին **պարտեզ** կըսեն, **իսկեմրի**ին **նստարան** կըսեն: Հապա ո՞րքան ավելի մեծ ամոթ է այն տղուն որ այս բառերուն հայերենը գիտե և չը գործածեր:

Պիտի սորվեցնեմ ձեզ թե ի՛նչպես պիտի վարվեք և խոսեք ձեզմե մեծին հետ, որ զմայլի ձեր վարքին վրա և սիրե ձեզ սրտանց. ի՞նչ պարկեշտ և խելացի տղա է սա, ըսե:

Երեք տարեկանեն մինչև տասնհինգ տարեկան թե աղջիկ և թե մանչ տղոց համար օգտակար բաներ պիտի գրեմ. պիտի սովրեցնեմ գիր կամ նամակ գրել, հաշիվ ընելու տետրակ բռնել այսինքն՝ եկած ստակը և խարճվածը գրել, տանը խնամատարությունը ընել, կերակուր եփել, առուտուրի մեջ չ՛խաբվել, հյուր ընդունել կամ ճամբու դնել, զբոսանքի ժամանակ խաղալ, երգել, պարել, մարմնամարզ ընել...» (1–2):

Տողեր ներքև շարունակվում են նույն՝ երեխաների հետ խոսելու զվարթ ու մտերմիկ ոճը, «խոսքը մեր մեջ մնա», «ականջդ բեր՝ ասեմ» փոխվստահություն ներշնչող խոսվածքը, նրանց՝ իբրև մեծերի վերաբերվելը, անկեղծ պահվածքը մանուկների՝ հանդեսի ծախսը սեփական ուժերով հոգալու և ծնողներին ավելորդ հոգս չպատճառելու առիթով. «Բայց խոսքը մեր մեջը մնա, գաղտուկ ըսելիք ունիմ ձեր ականջն ՚ի վար: — Ես այսչափ բաներ ձեզի սովրեցնել խոստացած ատենս, կան անանկ բաներ որ ես ալ ձեզմե սորվելով պիտի գրեմ, ինչպես որ այս **Թատրոն**ին մեջ գրած պատմություններուս շատը ձեզի պես պզտիկ տղոցմե սորված եմ:

... Սիրուն զավակներս, այս ամեն սորվեցնելուս համար մեկ բան մը պիտի ուզեմ ձեզնե. ամեն մեկ **Թատրոն**իս համար 50 փարա պիտի տաք ինձ, որ ես ալ թուղթի և մելանի տամ և որ գրեթե 100 տրամ խնձորի կամ ափ մը շաքարի գինն է: Բայց այս 50 փարան ձեր գանձանակեն պիտի տաք՝ ինտոր որ խաղալիքի կամ պտուղի համար կուտաք: Այս կերպով ձեր մեծերուն ծանրություն տված չեք ըլլա» (4):

«Բարեկամ մանկանց»–ում զետեղված նյութերն ունեն բավական լայն շառավիղ, և դրանք կարելի է բաժանել թեմատիկ բազմաթիվ խմբերի՝ ճանաչողական (աշխարհագրություն, պատմություն, ազգագրություն, մարդաբանություն, կենդանաբանություն, նշանավոր մարդկանց մասին զվարճալի զրույցներ...), բարոյախրատական (ազնվության դրվատում, գողության, ծնողներին չլսելու պատճառով փորձանքների մեջ հայտնվելու, ագահության կամ որկրամոլության և նման խնդիրների մասին

պատմող հեքիաթներ, զրույցներ ու առակներ), կրթական (գրավոր արտահայտվելիս միտքը գրագետ շարադրելու, օտար կամ բարբառային բառերի փոխարեն հայերեն համարժեքներ օգտագործելու, ընթերցասիրության և այլնի խորհուրդներ), քաղաքավարական (ճաշելիս կերակուրներից ու սպասքից ճիշտ օգտվելու, մաքրասիրության, վարքի, խոսվածքի ու տարբեր իրավիճակներում պահվածքի բազմաթիվ կանոններ), առօրյա–գործառական (հաշվակալական անհրաժեշտ գիտելիքներ ուսուցանող նյութեր, մթերքները տնականորեն ճիշտ պահելու, տնարարությանը, ասեղնագործությանն ու արհեստներին վերաբերող օգտակար խորհուրդներ) և ժամանցային (ձեռնածության, ծածկագրության, զանազան խաղերի վարժանքներ)...

«Բարեկամ մանկանց» հանդեսի մի պատկառելի մասն են կազմում նաև գրական երկերը, որոնք պայմանականորեն կարելի է դարձյալ դասդասել` հանդեսի ներքին կառույցն ավելի շոշափելի տեսնելու համար. դրանք նախ` հիմնականում ինքնուրույն, արձակ ստեղծագործություններ են (զանազան պատմվածքներ, նորավեպեր, առակներ, անեկդոտներ, հեքիաթների բավական հաջողված մշակումներ...)[14], որոնց մեջ փայլում է պարոնյանական հանճարը, և որոնք, լինելով միջժանրային ինքնօրինակ ներհյուսումների արգասիքներ, կարոտ են մի առանձին ու ծավալուն ուսումնասիրության: Հատկապես ինքնատիպ են «Մըռտո ախպարը և կատու–նապաստակը», «Կարմիր Վարդուկը» հեքիաթների պարոնյանական մշակումները: Հաջորդ խումբը չափածո երկերն են` ոտանավորներ, ինքնուրույն կամ ընթերցող երեխաների (օրինակ` Արա Գալենտերյանի) կողմից հյուսված հանելուկներ, թարգմանական առակներ Եզովպոսից, Լաֆոնթենից ու Կռիլովից` հիմնականում կատարված աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբոր` Գաբրիել եպիսկոպոս Այվազյանի և ժամանակին մեծ համարում ունեցող Խորեն արքեպիսկոպոս Գալֆայանի (Նար–Պեյ) եղբոր` Ամբրոսիոս Գալֆայանի կողմից, նաև ընթերցող աշակերտներից (օրինակ` Կարապետ Խոսքանցյանի) հրամցված առակներ: Գրական երկերի մեջ մի առանձին խումբ են կազմում եվրոպացի տարբեր հեղինակներից (Շառլ Պերրո, Էռնեստ Լըկուվիե...) կատարված թարգմանություններն ու փոխադրությունները, որոնք, կարծում ենք, արվել են հենց Պարոնյանի կողմից, քանի որ նա հրաշալի տիրապետել է 5 օտար լեզուների` հունարենի, ֆրանսերենի, իտալերենի, անգլերենի ու թուրքերենի[15]:

Իսկ «Բարեկամ մանկանց»–ում մի՞թե իսպառ բացակայում է աստվածաշնչյան թեման՝ այնքան սրտամոտ ժամանակաշրջանին ու այնքան հիմնական՝ «Ավետաբեր տղայոց»–ի համար: Անշուշտ կա, պարոնյանական հանդեսում ևս առկա է այդ թեման, սակայն միանգամայն այլ երանգավորմամբ: Նախ դրանք թվով սահմանափակ են՝ ընդամենը մի քանիսը՝ նվիրված Ադամի ու Եվայի, Հովսեփ Գեղեցիկի, Դավ-թի և Գողիաթի պատմություններին, և, բացի այդ, իրենց վրա կրելով անհատական մշակման թանձր ներկապնակը, հանդես են բերվում բոլորովին այլ՝ արդեն խորապես աշխարհիկ, բարոյախրատական հանդերձավորմամբ:

Որպես օրինակ՝ փորձենք քննել հանդեսի 2–րդ համարում տպագրված՝ «Ադամ Եվային խաբվիլը» զրույցը: Պարոնյանը «Ծննդոց գրքում» զետեղված հայտնի պատմությունը երեխաներին մատչելի՝ սեղմ տողերով ու զրույցի ձևով ներկայացնելուց անմիջապես հետո գրում է, որ «հիմա ասոր վրա շատ ծույլ մարդիկ սովորություն ըրած են մեղադրել Ադամ Եվան ու ըսել՝ թե ինչո՞ւ խաբվեցավ, որով չարաչար աշխատելու պարտավոր ըրին մեզ, եթե ոչ՝ հիմա մենք հանգիստ կյանք պիտի վարեինք», և ապա անցնում է ժամանակակից մի պատմության: Մի երկրի թագավոր որսի ելած ժամանակ կորցնում է ճամփան և յուրայիններին փնտրելիս պատահաբար հանդիպում է փայտահատ ամուսինների: Աղքատ կինը տրտնջում է «ծակաչք Եվայից»՝ ասելով, որ նրա պատճառով են հիմա իրենք աշխատում ու տառապում: Ամուսինն էլ իր հերթին Ադամին է քննադատում՝ ավելացնելով, թե ինչու վերջինս «իր կնկանը գեշ խրատին ականջ կախեց»՝ փոխանակ ապտակելու... Թագավորը, լսելով ամուսինների խոսակցությունը, նրանց տանում է պալատ՝ այդպիսով ապահովելով վերջիններիս անհոգ ու անքրտինք կյանքը: Մեկ ամսից հետո թագավորը կարգադրում է է՛լ ավելի ճոխացնել ամուսինների ապրելակերպը՝ «տասներկու տեսակ կերակուրին տեղ՝ քսանչորս տեսակ հրամցունեն անոնց, բայց սեղանին վրա ուրիշ գոց աման մըն ալ դնել տալով՝ կը պատվիրե որ մարդ չբանա անոր խուփը» (13): Քիչ անց, սակայն, ամուսինները չեն կարողանում դիմանալ գայթակղությանը, և փայտահատը, անսալով կնոջ տնական հորդորներին ու լացուկոծին, բարձրացնում է ափսեի կափարիչը, և այնտեղից անմիջապես դուրս է պրծնում մի մուկ ու անհետանում: Իսկ բարկացած թագավորը պալատից դուրս է շպրտում ապերախտներին:

Պատումի դիպաշարն առաջին հերթին ենթադրել է տալիս, որ այնտեղ ընդգծվում է մարդ արարածի ընդհանրապես մեղսագործ բնույթը, բայց հեղինակը վերջում անակնկալ անցումով այսպես է դիմում հանդեսի ընթերցողներին.«**Թատրոն**իս մեջ ինչո՞ւ դրի ես այս պատմությունը գիտե՞ք, խելացի տղայք. ուզեցի հասկցնել որ այս աշխարհքիս մեջ մարդիկ, թե մեծ ըլլան և թե պզտիկ, թե տղա և թե չափահաս, միշտ փորձության որոգայթին (տուզախ) մեջ կիյնան: Գիտե՞ք ինչ է փորձությունը. ամենուն գիտցած և շատ անգամ ամենուս գլուխը եկած բանն է որ **փորձանք** կըսվի. որո՞ւն գլուխը եկած չէ մեծ կամ պզտիկ փորձանք մը. բանն ան է որ օգուտ քաղե անկե և խրատվի» (14): Ինչ խոսք, սա հայտնի ավանդության՝ դրախում տեղադրված սահմանի արգելքը խախտել–չխախտելու շարժառիթի բոլորովին նոր՝ շրջված մեկնաբանությունն է՝ բարոյախրատական ակնհայտ միտվածությամբ:

Պարոնյան մանկագիրը, որքան էլ ձգտում է երեխաներին հրամցվող մանրապատումների մեջ հիմնականում մնալ զուսպ ու սքափ, երգիծանքից զերծ ոճի սահմաններում, այնուամենայնիվ, մերթընդմերթ ակամայից խախտում է իր սկզբունքը և լիաթոք ծիծաղում: Այսպես, օրինակ, «Քրիստոսի մեկ հրաշքը» մանրապատման մեջ անդրադառնալով Հիսուսի՝ Ավետարանից քաջահայտնի մի հրաշքին՝ ընդամենը հինգ հացով հինգ հազար մարդու կշտացնելու ավանդությանը, պատմում է անեկդոտախառն զրույց մի վարդապետի մասին, ով, երբ քարոզի ժամանակ շփոթվում ու ասում է, թե «հինգ հազար հացով հինգ հոգի կշտացան», ու արժանանում է ունկնդիրներից մեկի սրամիտ դիտողությանը, փորձում է արդարանալ հետևյալ կերպ.

« — Իրավունք ունիք, օրհնած, վրա կը բերե վարդապետը իր սխալմունքը պարտկել ուզելով, բայց ես գիտնալով այնպես ըսի, հասկնալու համար՝ թե արդյոք քարոզս մտիկ կընե՞ք, եթե ոչ կը քնանաք» (28):

Հիշենք նաև երգիծական սրախոսության մի ուրիշ օրինակ՝ այս անգամ գրված հանդեսում, ինչպես կանոն, զետեղված կենդանիների ու թռչունների (թվով 24՝ առյուծ, կապիկ, գայլ, նապաստակ, աղվես, փոկ, սամույր, չղջիկ, բու, սարյակ…) բնութագրումների «Եղնիկ» հատվածում: «Այս կենդանիին քաջությունն ալ Նապաստակին պես իր ոտքերուն վրա է. պզտիկ ձայն մը առնելուն պես կծիկը կը դնե. աչք բանալ գոցելու չմնար՝ դրե՛ր ես նե գտիր: Այս պատճառավ որսորդներեն շատերը **արծաթով** կը զարնեն Եղնիկը, երբոր չկրնան կապարով (դուրշին) զարնել. այսինքն՝ ստա-

կով ծախու կառնեն ուրիշեն՝ տուն դառնալով իրենց քաջության վրա պարծենալու համար: Ասանկ քաջ որսորդներն են որ Եղնիկին միսը շատ համով է կը զրուցեն, բայց եկու տես որ առանց զանազան համեմներով (թերպիյե) եփելու, ուտվելու բան չէ ասոր միսը» (40):

Պարոնյանը հանդեսում երբեմն էլ զետեղում է երգիծական երկխոսություններ, որոնք իրենց թեթև ու զվարթ ոճով առանձին կենդանություն և գրավչություն են հաղորդում պարբերականին: Ահա, օրինակ, դրանցից մեկը.

« — Հիմակվան երեկույթներուն (սոարե) մեջ ի՞նչ կընեն մինչև առտու:

— Զանձրացողները կաշխատին որ ուրիշներն ալ իրենց պես ձանձրացունեն:

— Ե՞րբ պիտի վերնա աս **մոտան**:

— Երբոր ամենքն ալ աղեկ մը ձանձրանան: Ամեն **մոտա** ձանձրությունով կը վերնա:

— Ե՞րբ պիտի ձանձրանան:

— Երբոր ձանձրութենեն ուրիշ անանկ **մոտա** մը ելնե՝ որ մարդ չձանձրացունե» (40):

«Բարեկամ մանկանց»–ն իր համարներում, ինչպես արդեն նշել ենք, պարբերաբար տպագրում էր նյութեր՝ նվիրված համաշխարհային և հայրենի աշխարհագրությանն ու պատմությանը, նշանավոր տարբեր քաղաքներին, նավահանգիստներին, բնության զարմանահրաշ երևույթներին, կենդանական ու բուսական աշխարհին... Այդ ընթացքում կարևորագույնը, սակայն, այն է, որ ուշարժան տեղեկությունները մատուցվում են ոչ ինքնանպատակ. դրանք բոլոր դեպքերում ուղղվում են մանուկների, ինչպես Մ. Թաղիադյանը կասեր, «մտացս զբոսանք» տալուն, ճարտարապետական կոթողների, պատմական հերոսական անցյալի, կենդանիների և այլնի նկատմամբ նրանց մեջ սեր ու հարգանք արթնացնելուն: Բերենք մի քանի բնորոշ օրինակներ:

Պարոնյանը մանուկներին ճանաչողական տեղեկություններ սկսում է հաղորդել հանդեսի հենց 2–րդ համարից՝ սկզբնամասում տեղադրելով «Կոստանդնուպոլիս» վերտառությամբ ակնարկ–հոդվածը: Պատկերավոր ոճով սկսելով Արևելքի ու Արևմուտքի հատման կետում գտնվող իր բնակած երկրի՝ մեկ միլիոն երկու հարյուր հազար բնակչություն ունեցող մայրաքաղաքի նկարագիրը՝ նա ծանրանում է հատկապես այնտեղ ապրող հայերի վրա, բացատրում նրանց մեծ մասի «դուրսեցիներ» լինելու հանգամանքը, ներկայացնում նաև անասելի թշվառության պայմաններում

ապրող շուրջ քառասուն հազար հայ տարագնացներին: «Հայերը այսօր ամենեն շատ են,— գրում է Պարոնյանը,— որոնց համրանքը երկու հարյուր հազար հոգիի չափ կը հաշվեն՝ կնիկ ու էրիկ մարդ, մեծ ու պզտիկ մեկտեղ սեպելով:

Ժամանակավ ալ Հայ կար այս քաղաքին մեջ, բայց խիստ քիչ. հազիվ 150 տարի կա որ մեր ազգեն շատեր եկան դուրսերեն հոս բնակելու. Հայաստանի և Պարսկաստանի քաղաքներեն, Վանեն, Մուշեն, Կարինեն, Ակնեն հարյուրավոր մարդիկ ամեն օր իրենց ծնած ու մեծցած տեղերը թողլով հոս կը թափեին: Պոլսեցի եմ ըսող ամեն Հայ թե որ այսօր քիչ մը հետաքրքիր ըլլա, իսկույն կը հասկնա որ կամ իր հայրը, կամ մեծ հայրը և կամ շատ շատ իր մեծ հորը հայրը Վանեն կամ Ակնեն կամ ուրիշ հեռավոր Հայու քաղաքե մը եկած է:

Ասկե կը հասկցվի որ Պոլսո այսօրվան Հայերուն ամենքն ալ պանդուխտ կը սեպվին. քառսուն հազարի մոտ ալ խեղճ խարիպներ կան՝ որոնք իրենց ընտանիքեն, տունեն տեղեն հեռու անտանելի խեղճության մեջ կապրին»(10):

Ինչպես նկատելի է, հեղինակը թաքնված ենթատեքստում ամենից առաջ մատնանշում է անում պոլսահայ գաղթօջախի ստեղծման բուն ակունքը՝ հեռուներում միայնության մեջ մնացած հայրենի եզերքը, և որոշ տարբերակում մտցնում «պանդուխտ» ու «ղարիբ» հոմանիշների միջև՝ վերջինիս մեջ իրավացիորեն ավելի խտացված տեսնելով տարագրության բերած ցավի խոսքիմաստային նշանակությունը: Այստեղից հասկանալի է դառնում նաև մեծ մտավորականի նպատակը՝ մատաղ սերնդի սրտում սեր արթնացնել ցավալի հանգամանքների բերումով աստանդական դարձած կարոտյալ հայրենակիցների նկատմամբ:

Ի դեպ, հետագայում հանդեսի 16–րդ համարում գրողը զետեղում է երկու մասից բաղկացած ազդեցիկ մի նկար, որի աջ կողմում տեղադրված է Կ. Պոլսի փողոցներից մեկի մի բեկոր՝ հեռվում երևացող մզկիթով և քայլող ու զրուցող մարդկանցով, իսկ ձախում՝ վանեցի չորս բեռնակիրների պատկերներ: Բնաշխարհից Կ. Պոլիս եկած թավ ընչացքներով այդ հայորդիները, որոնց կազմվածքները վկայում են իրենց ֆիզիկական ահռելի ուժի ու առողջության մասին, պարուրված են անծայր թախծով. նրանցից մեկը, բեռան վրա նստած, աջ ձեռքը գլխին հենած, լուռ մտորում է, մյուսը, ով բոկոտն է, և ձախ ոտքը դրել է համետին, նույն տրամադրությամբ նայում է գետնին, նրանց միջև կանգնած երրորդ ընկերը ևս իր հեռուն հառած տրտմալից հայաց-

քով մասնակից է ընդհանուր տրամադրությանը: Եվ միայն չորրորդն է, ով, հայրենակիցներից փոքր–ինչ հեռու կանգնած և համետը մի կողմ զցած, կողքանց նայող իր հայացքում արտահայտում է ինքնավստահություն ու զսպված զայրույթ... Բնորոշ է նաև նրանց մոտեցող թափառական ինչ–որ շան ներկայությունը, որը, բերանը բաց և պոչը խաղացնելով, ապշած նայում է բեռնակիրներին:

Հանդեսի խորաթափանց խմբագիրը, հատուկ միտումով մանուկներին ներկայացնելով այդ նկարի մեկնաբանությունը՝ «Ահա աշխարհ, ահա մարդ» վերնագրով, նրանց մատաղ հոգիներում սեր ու կարեկցանք է արթնացնում աշխատանքի ու գեղեցկության այդ ասպետների նկատմամբ: Չկարողանալով զսպել մեր գայթակղությունը՝ այն ներկայացնում ենք ամբողջությամբ՝ երկարաբանության համար կանխավ հայցելով ընթերցողի ներողամտությունը.

«Իմ պզտիկ բաժանորդներս՝ այս պատկերը տեսնելով շուտով պիտի ճանչեն իրենց ամեն օր տեսած Հայ բեռնակիրներու պատկերն ըլլալը, և առջի բերան շատ չպիտի զարմանան, բայց եթե անգամ մը ուշադրություն ընեն հոս ըսելիքներուս, այն ատեն պիտի հավնին և շատ աննման պատկեր մը ըլլալը պիտի խոստովանին:

Աշխարհիս ո՛ր կողմը կուզես ճանբորդե ո՛ր պատմիչին կամ ճանբորդին կուզես հարցուր, չես կրնար գտնել ազգ մը, ժողովուրդ մը, ցեղ մը՝ որ Վանա և Մուշի Հայերուն չափ վայելուչ կազմություն մը ունենա, մարմնով այնքան ուժեղ ըլլա, տեսքով՝ այնքան գեղեցիկ, և իր ահեղ կազմվածքովն հանդերձ՝ այնքան ալ խոնարհ ըլլա վարքով:

Իմ փոքրիկ սիրելի ընթերցողս, Վանցի բեռնակիրներն մեր ազգակիցներն ըլլալուն համար չէ իմ գովեստս. կորովի և բարձրահասակ ուրիշ ցեղեր ալ կան աշխարհիս վրա, բայց չկա անանկ ցեղ մը որ բնության ամեն կատարելությունն ունենա այս Հայերուն չափ. ո՞ր ցեղն ունի այս բարձր հասակը, այս հաղթանդամ մարմինը, այս սև ու ահարկու պեխերը, այս ջղոտ ազդրերն՝ որ մինչև 300 օխա[16] կշռող բեռան տակ պինդ կը կենան:

Շատերը մեղադրած են շատ անգամ այս Հայկա թոռները, թե ինչո՞ւ իրենք զիրենք անասնոց կարգը դասելով բեռ կրող կենդանյաց գործերը կը տեսնեն: Ես կը կարծեմ որ, եթե այս բեռնակիրներն իրենց այս տաժանելի աշխատանքին չպարապին և քաղաքացվոց հատուկ փափկասիրության հետևին, շատ չտևեր իրենց այս

անՆման ուժեղությունը կը կորսնցընեն, որովհետև ծանր աշխատությունները մարդույս մարմինը զորացնելու կօգնեն» (124):

Պարբերականում տպագրված ճանաչողական–հայրենասիրական նյութերի մեջ առանձնանում է հատկապես «Մասիս լեռը» հոդված–տեղեկատվությունը՝ զետեղված հանդեսի պատվավոր՝ առաջին էջում: Գովեստի նկատմամբ այնքան ժլատ ու խստապահանջ երգիծաբանի գրիչն այստեղ իրեն դրսևորում է տրամագծորեն հակառակ կողմով. գրողը ջանք չի խնայում դրվատանքի ու կարոտի ջերմ խոսքեր ասելու իր հայրենիքի հավերժ գոյության խորհուրդը մարմնավորող բիբլիական լեռան մասին, լեռ, «որուն աթոռը հարյուրավոր դարերե ի վեր իշխող թագավորի մը պես հաստատ կեցած է Հայաստանի մեջ»: «Եվ իրավցնե Մասիսեն ավելի ի՞նչ կա մեծ, վսեմ և հիանալի,— շարունակում է հեղինակը,— որ այնքան փառավորություն ունեցած ըլլա հիշատակությանց մեջ: Թող ըսեն մեզի թե Հայաստանեն զատ աշխարհիս մեջ ո՞ր երկիրն ունի քաղաք մը, շենք մը, տեղ մը, լեռ մը որ իր հնությամբ կարենա այսքան պարծել» (81): Պարոնյանը հանդեսի տիտղոսաթերթը զարդարող գեղադիր նկարի համապատկերում հայ մանուկներին այնուհետև բացատրում է, որ «պատկերին աջ կողմը, լերան քովիկը երևցած շենքերը Վաղարշապատ քաղաքին են. այս քաղաքը 2526 տարի առաջ Մեծն Երվանդ Հայոց թագավորը շինեց, որ ետքը Վաղարշ թագավորը նորոգելով իր անունը դրավ անոր»: Հոդվածում չեն մոռացվում նաև Աստվածաշնչում Մասիսի՝ Արարատ համարժեք անվամբ հիշատակվող սրբազան լեռան վրա իր տապանը կանգնեցրած Նոյ նահապետը, «Հայոց ամենամեծ և առաջին եկեղեցին՝ որ մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչը շինել տալով անունը դրավ Էջմիածին», այն, որ «ամեն Հայու սրտին մեջ ալ գծված է այս Կաթողիկե տաճարին սրածայր գմբեթներուն ձևը», և թերևս ամենակարևորը՝ «Աղավնին՝ որ ձիթենիի ճյուղ մը բերանն առած կը թռի Էջմիածնա թագադիր գմբեթներուն վրայեն: Ի՞նչ ուրախության ավետիս է այս որ կը բերե մեզի: Հարցուցեք անգամ մը իրեն» (82): Եվ այստեղ ահա կանգ ենք առնում ենթատեքստում թաքնված մեծ խորհրդի առջև՝ արդյոք աղավնին բերում է Երկրից՝ Համաշխարհային ջրհեղեղի նահանջելո՞ւ ավետիսը, թե՞ մի ուրիշ ավետիս՝ այնքան տանջող համայն հայությանը՝ Հայոց աշխարհի ազատագրությունը... Կարծում ենք՝ վերջինը, և հենց դա էլ նկատի ուներ գրողը: «**Թատրոն**ը գիտե ասոր բերած ավետիսը, բայց չուզեր ըսել մինչև որ վստահ չըլլա թե ուրիշի չպիտի

ընեք»,— այսպես խորհրդավոր էլ ավարտում է իր ակնարկ–հոդվածը հայ ժողովրդի արժանավոր զավակներից ամենասարամիտը:

«Բարեկամ մանկանց»–ում տեղ են գտել նաև տիեզերական, բնության արտասովոր երևույթներին նվիրված ինքնատիպ տեղեկություններ, որոնք կարող էին զարգացնել հայ մանուկների միտքը: Ընդ որում, դրանք շարադրված են պատկերավոր ու հյութեղ ոճով, վավերական իրողությունների ստույգ նշումներով: Ահա, օրինակ, «ատեն ատեն երկինքին երեսը տեսնված հիանալի երևույթներեն մեկին»՝ Հյուսիսափայլին նվիրված հոդվածը: Պարոնյանը հիշատակում է 1870–ի հոկտեմբերի 12–ի գիշերը, երբ Կ. Պոլսո բոլոր թաղերում մարդիկ, անհանգստացած հրագույն անսովոր հրավառությունից, փողոցներն էին թափվել՝ կարծելով, թե ահարկու հրդեհ է բռնկվել: Իսկ երբ համոզվում են, որ այդ հրավառությունը երկնային է, մեկ էլ սկսում են գուշակություններ անել գալիք մեծ աղետի մասին, ինչպես գիսավոր աստղերի՝ երկնքում երևալու ժամանակ: Հակոբ Պարոնյանը, որ Միքայել Նալբանդյանի պես գտնում էր, թե «մեր ազգը մինչև խելապատակը լցված է» սնոտիապաշտական տխմար գաղափարներով և «կավեղեն ոտքերով թավալգլոր կանգնած է անդունդի եզրին», վերոհիշյալ շարադրանքից անմիջապես հետո ավելացնում է, որ «այս գուշակությունը մարգարեական չէր», ընդհակառակն, քիչ անց (1871–ին) հաշտություն է կնքվում պատերազմող երկրների՝ Ֆրանսիայի և Պրուսիայի միջև: Ինչպես բոլոր դեպքերում, այստեղ ևս մանկագիր հեղինակն ուշադիր է. ջանում է մանուկներին հեռու պահել ժողովրդական սուտ ու պատիր հավատալիքների հյուսած որոգայթներից[17]: Ճիշտ է, նա դեռ չուներ և չէր էլ կարող ունենալ անհրաժեշտ գիտելիքներ՝ բացատրելու համար մագնիսական դաշտ ունեցող բոլոր մոլորակների մթնոլորտի վերին շերտերի լուսարձակումների, այդ թվում՝ Հյուսիսափայլի (լատ.՝ Aurora Borealis, Aurora Australis) առաջացման պատճառները՝ իբրև հետևանք մոլորակի մագնիսական դաշտի ու արևային քամու ազդեցության, այնուամենայնիվ, դա համարում է տիեզերական բնական երևույթ՝ չեշտադրելով բացառիկ հրաշքը՝ լուսարձակման գեղեցկության ցնծությունն ու երփնազան գույները. «Երևակայեցեք խավար գիշեր մը՝ սաստիկ մութ ամպերու մեջեն դեպ ի վար ծգված օձիկ օձիկ **տանթելայի** (ժանյակ. — Ալ. Մ.) ծալքերով լուսեղեն վարագույր մը ծիրանի գոտիի գույներով. կարմիր, կանանչ, մանիշագույն, կապույտ, դեղին գույներով հրեղեն վարագույր

մը, վրայի կողմեն ու երկու քովերեն շիտակ կտրված և իր շառավիղներուն հոսանքը դեպ ի վար ճառագայթած. այս լուսափոխփող վարագուրին թեպետ ճիշդ բայց քիչ մը ավելի աղոտ մեկ պատկերը վրայի կողմեն կերևի՝ որ բուն Հյուսիսայգին անդրադարձ ցոլացումը կամ ստվերը կը կարծվի: Այս բոցաճաճանչ վարագուրին վարի կողմեն ծովու ալիքներու նման լույս մը կը ցոլանա կանոնավոր օձիկ օձիկ ծևով և հիանալի շարժմամբ. վարագուրին ետևեն հրալից փամփշտի (ֆիշենք) պես անհամար կայծ-կըլտուքներ կը սլանան օձապտույտ ցայտումով՝ դեպ ի մութ ամպերուն մեջ» (58): Անտարակուսելի է, որ այսպես կարող էր գրել միայն բացառիկ երևույթի գեղեցկություննն ըստ ամենայնի ուսումնասիրած արտասովոր ընդունակ ու գեղագետ մարդը:

Գրող մանկագրի առջև դրված խնդիրներից մեկն էլ եղել է իր հանդեսի միջոցով հայ երեխաներին աշխարհի գիտական նորություններին և նշանավոր կառույցներին ծանոթացնելը: Այսպես, օրինակ, «Գետնափոր ճանբա» ակնարկում հաղորդվում է Անգլիայի Քենթի Ֆոլքսթոուն քաղաքը Ֆրանսիայի Կալե քաղաքին կապող Լա Մանշ նեղուցի թունելի շինարարական աշխատանքների սկսվելու մասին[18] և շեշտվում դրա օգտակարությունը եվրոպական երկրների մասին. «Այս օրերս սկսած են գետնափոր ճանբա մը բանալ ծովուն տակեն ճիշդ Գալեի նեղուցին ներքևեն, որ 25 մղոնի ճանբա ըլլալով՝ շոգենավը 2 $^{1}/_{2}$ ժամեն կը հասնի Գալեեն մինչև Տուվըր, գրեթե Պոլսո կամուրջեն մինչև Պեոյուքտերե» (53):

* * *

«Թատրոն. բարեկամ մանկանց» կիսամսյա պատկերազարդ հանդեսը, որի ամեն մի համար բաղկացած էր 8 էջից, ու բարեխղճորեն տպագրվում էր յուրաքանչյուր ամսվա 1–ին և 16–ին, հրատարակվեց 1876–ի հունվարի 1–ից մինչև դեկտեմբերի 16–ը՝ 193 էջերում ամփոփելով 24 համարներ (ներառյալ նյութերի ցանկը): Ինչպես հանդեսի առաջին համարում Պարոնյանը ժամանակին հրապարակավ բացատրել էր իր մանկական պարբերականի լույսընծայման անհրաժեշտությունը, հանդես եկել որոշակի ծրագրով ու խանդավառությամբ, այնպես էլ վերջին համարում՝ «Հրաժեշտ» վերտառությամբ հատվածում, անհրաժեշտաբար հրաժեշտ է տալիս իր մանուկ ընթերցողներին, բայց այս անգամ՝ խոր ցավով, իր գրչին ոչ հատուկ եղերական

երանգներով, որոնք մեծապես հիշեցնում են տարիներ առաջ «Մեղու» երգիծաթերթի չիրացված համարների՝ նպարավաճառին քաշով տալու առիթով գրված «Ողբը»: Պատճա՞ռը... Նյութական նույն անձուկ վիճակը, բաժանորդների խիստ պակասը (նրանք չէին անցնում 220–ից) և ընդհանրապես Թուրքիո մեջ հայկական պարբերական հրատարակելու անլուր տառապանքը: Այստեղ ամենից ուշարժանը, սակայն, պարոնյանական հրաժեշտի խոսքի նրբին ոճավորումներն են, արտահայտչամիջոցների ազդեցիկ պատկերավորությունն ու մանուկների մատաղ հոգիները գորովագութ մոր սրտացավությամբ հանկարծ չվշտացնելու զգուշավորությունը, նաև... գաղտուկ պատվիրանը՝ ասված դեռևս կարդալ չիմացող երեխաների ծնողների ականջներին՝ պարբերականի դադարեցման բուն պատճառի մասին լռություն պահպանելը: Եվ, վերջապես, գեղարվեստական մի ուրիշ հնարանքի կիրառում. եթե «Ողբում» հանդես էր եկել որդեկորույս հայրը, ապա այստեղ երևան են գալիս սեփական երեխաների պարզ կարիքները հոգալ չկարողացող, ծայրահեղ չքավորության մեջ հայտնված շփոթահար մայրն ու իր ուսերին կրակե մի քանի շապիկներ կրող և դրանցից մեկից ազատվելու փորձ կատարող գրողը...

«Ահավասիկ **Թատրոն՝ Մանկանց Բարեկամն** իր տարեկան շրջանը լրացուց՝ առանց բնավ իր վիճակեն դժգոհություն հայտնելու, մեկ տարի շարունակ ընթերցանության և հրահանգության զվարճալի նյութեր տված իր փոքրիկ բաժանորդներուն՝ առանց իր նեղ վիճակը բերան առնելու, որպեսզի չկոտրե անոնց փափուկ սիրտը: **Թատրոն** այն աղքատ մոր պես ըրավ՝ որ իր ունեցածը չունեցածը կը ծախե խնձոր կամ շաքար ուզող և **չկայն** չհասկցող իր անմեղ ու միամիտ զավակը գոհ ընելու համար: Այսուհետև չկրնար՝ իր այս վիճակը ծածկել, քանի որ իր հրատարակությունը դադրեցնելու ստիպված է, ուստի պետք է, որ այս դադարման պատճառը գաղտնի խոստովանի իր մեծ բաժանորդներուն ականջն ի վար, այնպես որ իր փոքրիկ բաժանորդներն իմանալով չվշտանան:

Հարկ չէ որ մեկը տպագրական գործերու հմուտ ըլլա, ամենքը կրնան մակաբերել թե ասանկ բազմապատկեր, գեղեցիկ տպագրությամբ և աժան թերթ մը չկրնար Մեկ Արծ. Մեճիտ տարեկանով և 220 բաժանորդով ապրիլ, որոց մեկ մասն ալ դեռ անվճար կը մնան տարին լրանալեն հետո: Անոնք որ կը կարծեն՝ թե նորանոր և գեղեցիկ պատկերներով ասանկ հրատարակություն մը կրնա 1000են պակաս բաժանորդով

շարունակվի, կը սխալին. դյուրին է ուրեմն հաշվել թե ո՛րքան վնաս կրած ենք: Փորձ մ՚ էր ըրինք, և մեծապես վնասվեցանք, ժամանակիս նեղությունն ալ ոչ նվազ ուղղակի պատճառ մըն էր մեր վնասը բազմապատկելու: Վնասը կրակե շապիկ է, կըսեն. չկա այսօր մեկը որ այս շապիկեն մեկ քանի հատ իրարու վրա հագած չըլլա, բայց մեր կրնակն ամենեն ավելի **Թատրոն**ին կրակե շապիկեն ա՛յնչափ սաստիկ տաքցավ՝ որ մազ մնաց **կրակ կա՜յ** պիտի պոռայինք, ուստի հարկադրեցանք գոնե այս շապիկը հանել մեր կրնակեն:

К сожалению, переводчики вообще упускают из виду явные мифологические сигналы, как правило, углубляющие лапидарно изложенный сюжет. Так сказка называется «О мертвой царевне…», а не спящей, как в западных вариантах сюжета (и в переделке Ат. Хнкояна), т.е. в такой важный элемент текста, как заглавие, уже выносится мифологическая характеристика сна как временной смерти: ведь назвать царевну совсем мертвой никак нельзя; это именно состояние между жизнью и смертью, что подчеркивается подвешенностью на цепях над матерью сырой землей, в которую положено зарывать мертвых, но и под землей («глубокая нора»).

В целом, однако, это царство смерти, или не-жизни, куда и спустился за своей невестой Елисей; это – важнейшая и потенциально опаснейшая часть его инициации, и здесь все детали существенны: «Не видать ничьих следов // Вкруг того пустого места» потому, что живые туда не заходят. В армянском тексте просто *Սարի չուրջը դատարկ վայր* (335). Другая, не менее важная и тоже упущенная деталь:

Там за речкой тихоструйной	*Գետից վերև կա մի սար,*
Есть высокая гора,	*Էն սարում մի հոր այր (335).*
В ней глубокая нора (338):	*(пер. Хнко Апера)*

Во-первых, отметим как специфически-армянское вертикальное членение мира (верх-низ), наличествующее также и там, где его нет в оригинале: Գետից վերև – это выше реки. Но в оригинале, в точном соответствии с мифологическими представлениями, царство смерти находится не только под землей, но и за рекой, которая является естественной границей двух миров, «она рубеж между этим

и тем, нижним миром, между своим пространством и чужим» (Топоров 1982: 376) – вспомним хотя бы античного Харона, перевозчика в царство мертвых. В сказках и ритуалах река продолжает выполнять свою пограничную функцию, но причины этого порою забываются. Итак, Елисей перешел границу, отделяющую живых от мертвых, затем сошел под землю, в царство мрака и вынес свою невесту на белый свет, то есть в наш мир. Думается вынес, а не вывел, чтобы в царстве смерти земля не задержала и не поглотила при соприкосновении с нею то, что ей предназначалось. Тем самым инициация Елисея с честью завершена: в архаических свадебных ритуалах по сей день путь жениха за невестой в ее дом и обратно к себе характеризуется как темный и опасный, что восходит, в конечном итоге, к мифу (Шагоян 2009: 92-95). Затем герои возвращаются в свой локальный мир, к себе и к счастливому финалу. Однако возвращаются они тоже по-разному – в армянском тексте *Սարեր, ձորեր շրջելով.*

Ту же формулу удаленности (заметим, она не фиксируется у Пушкина, потому что это не далекий, а иной мир), характерную именно для армянской картины мира, используют и другие переводчики, например, в «Сказке о золотом петушке»:

Негде, в тридевятом царстве,	*Անհայտ <u>հեռու</u> մի աշխարհում,*
<u>В тридесятом государстве</u>	*<u>Յոթ սարից դենն էր</u> ապրում*
Жил-был славный царь Дадон (340).	*Քաջ, փառավոր Դադոն արքան (338):*

О горизонтальном членении мира в национальном мировосприятии жителей равнинной России и вертикальном – горной Армении, пожалуй, впервые сказал, и именно в связи с переводом, Карен Мкртчян, к статье которого мы и отсылаем читателя (Мкртчян 2002). Для нас важно, что это не прихоть переводчика (более того – переводчиков), а национальное видение мира. Вот и в новом переводе «Сказки о рыбаке и рыбке» пушкинское «У самого синего моря» передано Ю. Саакяном как *Կապուտակ ծովի <u>քարշրադիր</u> ափին,* в то время как русским сознанием, привыкшим к бескрайним просторам, море, океан («морская гладь») воспринимались как естественное продолжение горизонтальной плоскости, водная равнина, о чем нам уже приходилось писать, и приводился как раз пример из «Сказки о царе Салтане»

(Хачатурян 2009: 17). Поэтому даже там, где эта бескрайность пространства есть в оригинале, она или смягчена, или опущена в переводе, поскольку чужда национальному восприятию пространства:

И в лазаревой дали
Показались корабли.
По равнинам океана
Едет флот царя Салтана,
И желанная страна (315).
Вот уж издали видна (317).

Եվ կապուտակ, անամպ հեռվում
Ահա նավեր են երևում:
Թրթռում է սիրտն իշխանի.
Այդ նավատորմն է Սալտանի:
(пер. А.Лусенца)

А вот пример из «Сказки о мертвой царевны...»,

Но царевна молодая,
До зари в лесу блуждая,
Между тем все шла да шла
И на терем набрела (325).

Էս կողմ, էն կողմ, վեր–վար տալեն,
Մութ անտառը տվեց անցավ,
Մի դղյակի նա մոտեցավ (329):
(пер. Хнко Апера)

Подспудно в оригинале опять-таки фиксируется протяженность расстояния, в том числе и через время («до зари», «все шла да шла»), а в армянском – трудность преодоления из-за неровностей ландшафта (*Էս կողմ, էն կողմ, վեր–վար տալեն*), а դղյակ расположен не в лесу, как терем, а за ним, там, где начинается привычная для армянина среда обитания.

Нами рассмотрены, разумеется, далеко не все значимые отклонения, обозначена лишь общая тенденция. Речь идет, повторяем, не об эстетических оценках переводов, тем более, что они словесно, как правило, очень выразительны. Речь о различиях в восприятии мира носителями русской и армянской ментальностей.

Для любой классики как текстов прецедентных желательна, а время от времени и необходима, реинтерпретация. И хотя в полемическом азарте всегда возможны перехлесты, попытка по-новому взглянуть на давно известное говорит и о жизнеспособности реинтерпретируемого объекта, и о любви и уважении к его неисчерпаемости. Именно этим продиктована и наша скромная попытка.

ЛИТЕРАТУРА

1. **Պուշկին Ա. Ս.** (1955), *Երկեր 5 հատորով*, հատ. 3, Երևան, Հայպետհրատ,
2. **Պուշկին Ա. Ս.** (1985), *Ընտիր երկեր,* ռուս դասականների գրադարան, Երևան, Սովետական Գրող:
3. **Аверинцев С. С.** (1980). Вода // *Мифы народов мира*, т. 1, М.: Сов. энциклопедия.
4. **Болотнова Н. С.** (2007). *Филологический анализ текста*. М.: Флинта-Наука.
5. **Булгаков М. А.** (1990). *Собрание сочинений в 5 т.*, т. 5, М.: Художественная литература.
6. **Зинченко В. Г., Зусман В. Г., Кирнозе З. И.** (2007). *Межкультурная коммуникация*. М.: Наука.
7. **Караулов Ю. Н.** (1987). *Русский язык и языковая личность*. М.: Наука.
8. **Левый И.** (1974). *Искусство перевода.* М.: Прогресс.
9. **Мкртчян К. Л.** (2002). Символы, которые нас выбирают // *Брюсовские чтения – 2002*, Ереван: Лингва.
10. **Новикова М.** (1995). *Пушкинский космос*. М.: Наследие.
11. **Пушкин А. С.** (1981). *Собрание сочинений в 10 т.*, т. 3., М.: Правда.
12. *Славянская мифология.* Словарь-справочник (1998). М.: Линор.
13. *Словарь русского языка в 4 т.* (Малый академический словарь) (1981-1984) .М.: Русский язык.
14. *Советский энциклопедический словарь* (1989). М.: Сов.энциклопедия.
15. **Топоров В. Н.** (1982). Река // *Мифы народов мира*, т. 2, М.: Сов. Энциклопедия.
16. **Хачатурян Н. А.** (2009). Фантастика волшебной сказки и национальная картина мира // *Ոսկե դիվան*, Պրակ 1, Երեվան. Հովհ. Թում. թանգ.:
17. **Шагоян Г. С.** (2009). Сюжет волшебной сказки в контексте армянской свадьбы. // *Ոսկե դիվան,* Պրակ 1, Երևան. Հովհ.. Թում. թանգ.:

Nelli Khachaturyan

NATIONALLY MOTIVATED TRANSFORMATIONS IN ARMENIAN TRANSLATIONS OF PUSHKIN'S FAIRY TALES

Summary

Equivalence of translation and of literary works in particular, is one of the central themes in the field of text interpretation and translation studies. The present paper deals with several Armenian versions of Alexander Pushkin's fairy tales. It looks through a variety of modifications introduced in the translated versions of the tales. Analogous language shifts, however, may often result in serious deviations in terms of culture and national mindset, even when the text is reinterpreted by outstanding literary figures that sometimes tend very much to 'nationalize' the literary work.

ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Այն հանգամանքը, որ արևելահայ պատկերազարդ առաջին ամսագիրը՝ «Աղբյուրը», ավելի քան երեք տասնամյակ՝ իր հիմնադրման թվականից՝ 1883-ից մինչև փակվելը (1917), «ստանձնել էր կրտսեր և միջին տարիքի դպրոցականների դաստիարակչի դերը», և իր գործունեությամբ մեծ նպաստ բերեց հայ մանկական գեղավեստական գրականության զարգացմանը, ինքնին վկայում է ամսագրի հսկայական արժեքի մասին: «Աղբյուրի» առաջին համարի ճակատին ընդգծված էր՝ «Միամսյա պատկերազարդ հրատարակություն երեխաների և դաստիարակների համար», և տպագրվող նյութերն էլ համապատասխանաբար ընդրգկվել են երկու բաժիններով՝ առաջին և ամենագլխավոր բաժնում մանուկների և պատանիների ընթերցանության նյութեր՝ հիմնականում պատմվածքներ, մանրապատումներ, բանաստեղծություններ, հեքիաթներ, զրույցներ, առակներ, այլ ժանրերի գործեր, ինչպես նաև գիտության, պատմության, արվեստի և այլ ոլորտների վերաբերյալ հանրամատչելի և հետաքրքիր տեղեկություններ: Երկրորդ բաժնի նյութերը՝ հոդվածներ, գրախոսականներ, նամակներ, խառը լուրեր և այլն, որ ավելի հաճախ լույս են տեսել առանձին հավելվածով, հասցեագրվել են մանկավարժներին ու ծնողներին և նրանց ծանոթացնում էին կրթության ու դաստիարակության նոր ու առաջավոր մեթոդներին: Ահա «Աղբյուրի» առջև դրված խնդիրներին ծանոթացնող մի քանի նշանաբան–պատվիրան՝ ամսագրի հրատարակման առթիվ գրված խմբագրական և այլ հոդվածներում. «Ճշմարիտ է, մենք ունինք պարբերական հրատարակություններ, որոնք ամենայն անձնվիրությամբ (ամեն մեկը իր ուղղության ու նպատակի համեմատ) առաջնորդում են հայ հասարակությունները, տալիս են նրանց հայտնի ուղղություն,

ծանոթացնում են նրանց գրականության, արդի քաղաքական աշխարհի հետ, մինչև անգամ իրենց շրջանակից դուրս նրանք հայ ժողովրդին ընթերցանության նյութ են մատակարարում, բայց մեր այդ թերթերը ծառայում են հասակ առած ժողովրդին և նրանց կողմից բոլորովին դուրս է և առաջնորդել մատաղ հասարակությունները, ցանել նրանց մեջ ազնիվ մարդ լինելու սերմեր, զարթեցնել և զարգացնել նրանց մեջ ազնիվ, բարի ձգտումներ և արմատախիլ անել չար, վնասակար որմն… Ահա այսպիսի հրատարակության անհրաժեշտությունն օր-օրի վրա խիստ զգալի էր լինում մեր առաջ և ահա ինչու մենք ձեռնարկեցինք այս տեսակ մի հրատարակություն»[1] : Եվ ապա շեշտադրվում է. «Հասարակությանը պիտանի անդամ, պատվասեր, ճշմարտությանը նախանձախնդիր, չարության վրիժառու ժողովուրդ պատրաստելու համար պետք է սկսել նրա մանուկ սերնդից»[2]: «Աղբյուրի» նպատակն է՝ հայ սերնդի մեջ զարթեցնել պատվասիրության զգացմունքները, զարգացնել հայ երեխայի մեջ սեր դեպի իր շրջապատողները, բարի նախանձ դեպի ամեն վսեմը, ազնիվը և ատելություն դեպի ամեն վնասակարն ու չարը…»[3]: Այդ ճանապարհին՝ իբրև վճռորոշ գործոն խմբագրությունը կարևորում է ժամանակի ամենանշանավոր գրողների ներգրավումը նրա էջերում, ապա և ժողովրդական բանահյուսության նշխարքների դերը՝ իբրև մանկական գրականության հիմք և այն մշտապես զորացնող ակունք: «Աղբյուրի ակները,— կարդում ենք հոդվածներից մեկում,— հոսում են ժողովրդական հեքիաթներից, զրույցներից, խաղերից, ավանդություններից, որոնք ոռոգելով մեր փոքրիկ և քաղցրիկ ընթերցողների հոգին և սրտերը՝ պարարտ հող պետք է նախապատրաստեն ապագայում պտղաբեր սերմեր աճեցնելու մարդկության…»: Եվ ապա՝ «…Մի՛ կեղծեք մանուկների առաջ: Ցույց տվեք նրանց և՛ կյանքի փշերը, և՛ վարդերը, միայն ասածների մեջ լինի ճշմարտություն»[4]: Ահա հիմնականում այս նշանաբաններով է առաջնորդվում «Աղբյուրը»՝ դրանց հավատարիմ մնալով իր գործունեության բոլոր տարիներին, և քանի որ ամսագրի երևան գալը զուգադիպում է ռեալիստական արվեստի և գրականության զարգացման նոր ժամանակաշրջանին… այդ հանգամանքը, ինչպես և կապը ռուսական, վրացական, արևմտաեվրոպական առաջադիմական գրականության և մանկական ամսագրերի հետ, իրենց դրական ներգործությունն են ունենում՝ նպաստելով «Աղբյուրի» թեմատիկայի ընդլայնմանն ու արտահայտչական միջոցների հարստացմանը: Այս առումով էլ շեշտենք, որ «Աղբյուրի»

գրական–դաստիարակչական «դասերը» ավանդել են ոչ միայն հայ գրողները, այլև ռուս և համաշխարհային գրական երևելի դեմքերը՝ նրանց լավագույն մանկապատանեկան ստեղծագործությունների հայերեն թարգմանություններով, մի ոլորտ, որի պատուհանը դեպի մեծ աշխարհի «փակ խեցու» մեջ գտնվող հայ ընթերցողի առջև լայնորեն բացեց ամսագիրը, և որի գործունեության ուղղություններից մեկը հենց այդ էր: Այդպես, հայ մանուկները ծանոթացան համաշխարհային գրականության հարուստ գանձարանի շատ երկերի հետ, որոնց բովանդակությունը հոգեհարազատ էր իրենց, և որոնք պատմում էին օտար, անծանոթ երկրների ու ժողովուրդների մասին, ներկայացնում իրենց հասակակիցների կյանքը: «Աղբյուրի» էջերում տարիներ շարունակ պարբերաբար տպագրվում էին թարգմանական կամ փոխադրված բազմաթիվ և բազմաժանր ստեղծագործություններ, այդ թվում՝ ռուս մեծ գրողներ Չեխովի «Փոքրիկ Վանյան», Կորոլենկոյի «Ստորերկրյա մանուկները», Տուրգենևի «Լորը», «Ճնճղուկը», Լև Տոլստոյի «Գայլը», «Ասարհադոն թագավորը», Պուշկինի, Նեկրասովի, Կռիլովի և ուրիշ ռուս գրողների երկերից, ապա նաև՝ Ֆիրդուսու, Շիլլերի, Հայնեի, Հյուգոյի, Դիկկենսի, Ալֆոնս Դոդեի, Հանս Անդերսենի, համաշխարհային գրականության, այդ թվում՝ մանկագրության ականավոր դեմքերի մանկապատանեկան գործերից, ինչպես և ծանոթագրական–տեղեկատվական նյութեր նրանց մասին: «Աղբյուրի» աշխատանքներին, նախնական շրջանում ակտիվորեն մասնակցող և նրա էջերում երեխաների կյանքը պատկերող փոքրիկ պատումներ հրապարակող՝ ռուս նշանավոր մանկական գրող Նիկոլայ Սոլովյով–Նեսմելովը Տիգրան Նազարյանին նվիրած իր լուսանկարի մակագրությունում այսպես է գնահատում հայկական ամսագրի դերը. «Աղբյուրը», որպես թարմ վտակ կարող է ձուլվել... մեծ գետին, ծովին, բայց երբեք չի կորչի նեղ պատերի արանքում, ճահճում, նա ունի իր ուղղությունը, իր խնդիրը՝ ափ դուրս բերել պարզ կանաչը... Ապրի՛ր, «Աղբյուր», ապրի՛ր, ժողովուրդ»[5]: Ահա այսպես, «Աղբյուրը» մեծ ծառայություն է մատուցել նաև թարգմանական գրականության զարգացման գործին, որ աշխարհին կապող զարկերակ դարձավ հայ մանկագրության մեջ և հետագայում մեր շատ անվանի մանկական գրողներ, ինքնուրույն ստեղծագործություններին զուգահեռ, զբաղվել են նաև ռուս և ուրիշ ազգերի նշանավոր գրողների տարաժանր երկերի թարգմանություններով:

Բայց, իհարկե, «Աղբյուրի» գրական դիմագիծը որոշվել է նրա գործունեության ժամանակի հայ նշանավոր գրողների ակտիվ մասնակցությամբ, որոնց ամսագիրն իր շուրջն էր համախմբել և հետևողական առաջարկ–խրախուսանքներով նրանց նպատակամղում էր ստեղծագործելու նաև երեխաների համար: Այդպես՝ «Աղբյուրի» ակունքներով տարբեր ժամանակներում «մանկաշխարհ» մտան ոչ միայն Ղազարոս Աղայանն ու Հովհաննես Թումանյանը՝ հայ դասական մանկագրության ամենաերևելի դեմքերը, այլև Րաֆֆին, Վրթանես Փափազյանը, Պերճ Պռոշյանը, Ալեքսանդր Ծատուրյանը, Նար–Դոսը (որ 1905-ից, «Նոր–Դար» թերթի փակվելուց հետո, նաև «Աղբյուրի» պատասխանատու քարտուղարն էր), Մուրացանը, Շիրվանզադեն, Հովհաննեսը Հովհաննիսյանը, Ավետիք Իսահակյանը և ուրիշներ: Այս ամսագրում են իրենց առաջին ստեղծագործական «մանկական» քայլերը կատարել ապագա հայ ականավոր մանկական գրողներ Խնկո–Ապերը, Հակոբ Աղաբաբը… Տարածանր ու տարաթեմա նրանց ստեղծագործությունները, հատկապես մեր ժողովրդի հերոսական անցյալի, ազատագրական պայքարի դրվագները, նրա ազատասիրական–հայրենասիրական ոգին, ապա և՝ բռնապետական անարդար կարգերում աշխատավոր մարդու ծանր կենսապայմանները, ցավերն ու տառապանքները, հույսերն ու երազանքները, մանուկների թշվառ առօրյան պատկերող չափածո և արձակ երկերը «Աղբյուրի» գրական կենսագրության ամենանշանակալից էջերն են: Հրապարակելով հայրենասիրական-ազատասիրական պոեզիայի լավագույն նմուշները և հաճախ հաղթահարելով գրաքննության արգելապատնեշները՝ «Աղբյուրը» իր ազատախոհ, համարձակ խոսքն է մատուցել ընթերցողին, նրան տոգորել հեղինակների սիրտն ու հոգին ալեկոծող նույն զգացումներով: Այսպես, նրա էջերից հնչել են Միքայել Նալբանդյանի «Ազատությունը», «Իտալացի աղջկա երգը», իսկ մեծ հեղափոխական–դեմոկրատին, մայր ժողովրդի ազատության պայքարի աննկուն մարտիկին նվիրված մի հոդվածում նա բնութագրվել է որպես «Հյուսիսափայլ» ամսագրի «լուսաշող աստղ», «գրական կյանքի մեջ շարժում առաջ բերող ոգի, մեր կյանքի ճահճի մեջ քար նետող խիզախ կտրիճ»: Առաջին անգամ «Աղբյուրում» են տպագրվել Ղազարոս Աղայանի «Ձմեռ» բանաստեղծությունը, որի այլաբանական պատյանի տակից «սլացող» նետը ուղղված է ցարական կարգերի ու նրա ազգահալած քաղաքականության դեմ՝ ի պաշտպանություն նրա լծի տակ տառապող ժողովրդա-

կան զանգվածների, «դաժան ձմռան» ցրտից կուչ եկող «սիրուն երեխեքի», որոնց նա ազատության կոչնակ է հնչեցնում.

Եկեք միասին մի հնար գտնենք,
Ձմռան ճանկերից մեր գլուխն ազատենք...

«Աղբյուրում» են տպագրվել նաև Աղայանի «Հիշողություն», «Ճախարակ», տասնյակ այլ բանաստեղծություններ, «Տորք Անգեղ» պոեմը, նրա հրաշալի ժողովրդական հեքիաթները: «Տարազ» շաբաթաթերթում (այն նույնպես Տիգրան Նազարյանի խմբագրությամբ լույս էր տեսնում 1890-ից) Ղազարոս Աղայանին նվիրված հոդվածում ընդգծվում էր, որ «Աղբյուրի» մեջ են սփռված Աղայանի ամենաընտիր գոհարները, և դրանք ամսագրի անվիճելի պարծանքն ու անգնահատելի գանձերն են»: «Աղբյուրում» են առաջին անգամ տպագրվել Հովհաննես Թումանյանի «Արև և լուսին», «Անխելք մարդը» և այլ ստեղծագործություններ: Ճիշտ է, «Աղբյուրի» աղայանական «բերքն» ավելի շատ է, քան՝ Թումանյանինը (հետագայում նա իր «գանձերը» շռայլորեն սփռեց «Հասկերում» և «Գառնիկ ախպերով» էլ բացվեց ամսագրի առաջին համարը), բայց հանճարեղ գրողը, անուամենայնիվ, նկատելի հետք թողեց արևելահայ այս հրաշալի պարբերականի էջերում և փոքրիկ ընթերցողների հոգում: Հայոց մանկագրության այս երկու մեծերից հետո Ալեքսանդր Ծատուրյանը թերևս երրորդ հեղինակն էր, որ ի սկզբանե ջերմորեն կապվեց «Աղբյուրի» հետ՝ գրական մկրտությունն ստանալով այս ամսագրում՝ իր «Ձմեռ» բանաստեղծությամբ: Այնուհետև «Աղբյուրում» նա հրապարակեց ժողովրդի թշվառ կյանքի ու բնության գեղեցիկ հակադրապատկերներով հյուսված տասնյակ, այդ թվում՝ մանկական ստեղծագործություններ («Գետակ», «Եկ, գարնան անձրև», «Գարուն», «Որբիկ» և այլն): Ազատ և երջանիկ կյանք, գարնան արշալույս երազող բանաստեղծն իր հուսավառ խոհերով պարուրում է նաև ընթերցողի հոգին.

Եկ, գարնան անձրև, թափվի՛ր հորդառատ,
Ցրտացած երկրի սառը կրծքի վերա,
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշե ազատ,
Թող նորա կրծքին ջերմ կյանքը եռա...

Հետագայում դպրոցական դասագրքերում տեղ գտած հանրահայտ «Գիր» բանաստեղծությունը նույնպես առաջին անգամ «Աղբյուրում» է տպագրվել: Այն մանուկների մեջ գիտելիքների, ուսման հանդեպ սեր ներարկելուն նպատակաուղղված բարոյախրատական ընդգծված խոհերգ է.

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,
Կարդա՛, գըրի՛ր պարին բոլոր,
Գիր կարդողի խելքն է կպրուկ,
Միտքը՝ պայծառ ու լուսավոր...

Վաղվա բացվող արշալույսի, հավատի ու հույս լուսավոր զգացումներով են հյուսված նաև այս ամսագրում իր ստեղծագործական կյանքն սկսած մեկ ուրիշ նշանավոր բանաստեղծի՝ Հովհաննես Հովհաննիսյանի «Աղբյուրում» տպագրված ստեղծագործությունները («Նոր տարի», «Մանկանը»...): «Նոր տարին» բանաստեղծության մեջ հեղինակը դժգոհում է, որ այդ գեղեցիկ տոնը ժողովրդի ցավերը չմեղմացրեց ու չիրականացան նրա երազանքները, բայց բացվող գարնան հետ կապած նրա հույսը դեռ չի մարել: «Մանկանը» բանաստեղծությունը «կյանքի դառը արտասուքը» դեռ չճաշակած «երջանկության սպասող» փոքրիկի ճակատագրի հանդեպ բանաստեղծի տագնապալից զգացումների արտահայտությունն է, որ համակում է նաև ընթերցողին.

Երանի՜ քեզ, անհոգ մանուկ,
Դու անարատ, դու դեռ անբիծ,
Դեռ չբացված գանչ ես ծածուկ,
Մաքուր շող ես գարնան երկնից...

Անշուշտ, և՛ Ալեքսանդր Ծատուրյանը, և՛ Հովհաննես Հովհաննիսյանը մանուկներին հասցեագրված «զուտ» մանկական ստեղծագործություններ չեն գրել, բայց նրանց շատ երգեր մանուկների մասին են, կյանքի ծանր պայմաններում ապրող ժողովրդի «փոքրիկ զավակների» մասին, ովքեր նույնպես տիրող դառը իրականության զոհերն են և երազում են «պայծառ գարուն», «մութ ամպերը ցրող լուսաշող արև»:

«Աղբյուրի» ընթերցողները սիրով են ընդունել տարբեր ժամանակներում նրա էջերից արձակ և չափածո ստեղծագործություններով իրենց հետ «խոսող» մյուս նշանավոր գրողներին: Պերճ Պռոշյանի՝ ամսագրում տպագրված «Տարվա ամիսները» ճանաչողական–բնապաշտական պատումնաշարը ոչ միայն հայրենի բնության գեղեցկությունների մասին հյուսված հուզական, գեղեցկահյուս պատկերներ են, այլև ժողովրդի կյանքը, կենցաղը, սովորությունները, լավ կյանքի երազանքը ներկայացնող հանրամատչելի զրույցներ: Այդ իմաստով ճանաչողական-ուսուցողական յուրօրինակ դասեր են նաև «Ծերունի դաշտեցու պատմածը», «Բարեկենդան» և այլ զրույցները, որոնցում Արարատյան դաշտի բնապատկերների ֆոնի վրա պատկերվում է շինականների աշխատանքային առօրյան, նրանց կյանքն ու կենցաղը: Իսկ «Արագիլ» հուզիչ պատմվածքը փոքրիկ ընթերցողներին պարուրում է կենդանական աշխարհի հանդեպ սիրո ու հոգածության զգացումներով. պատահաբար հրդեհի ճարակ դարձած խոտի դեզի մեջ բույն դրած արագիլները, չկարողանալով փրկել ձագերին, իրենք էլ նետվում են կրակի մեջ ու այրվում: Ինչ-որ տեղ ռուս մեծ գրող Իվան Տուրգենևի «Մայրը» պատմվածքը հիշեցնող այս պատումը տպագրելուց հետո «Աղբյուրը» փոքրիկ ընթերցողներից բազմաթիվ զգայացունց նամակներ է ստացել… Ցավոք, ժամանակի հայկական գյուղի կյանքը, գյուղացիական ցավերը, տառապանքները, ընդվզումի ոգին գեղարվեստական մեծ վարպետությամբ պատկերող անվանի գրողը՝ «Հացի խնդիր», «Ցեցեր», «Հունոն» և այլ վեպերի հեղինակը քիչ ստեղծագործություններ է գրել երեխաների համար, բայց ինչ որ գրել է, համարյա բոլորն էլ մեր մանկագրության 80–90-ական թվականների տարեգրամատյանի հետաքրքիր էջերից են և ունեն ճանաչողական–ուսուցողական որոշակի արժեք:

Արդեն իր «Սամվել», «Կայծեր», «Խենթը», «Խաչագողի հիշատակարանը» և այլ վեպերով համազգային սիրո արժանացած Րաֆֆին կյանքի վերջին տարիներին նույնպես ներգրավվեց «Աղբյուրի» աշխատանքներում՝ հրապարակելով մի շարք ստեղծագործություններ: Մանուկ ու պատանի ընթերցողների խանդավառ ընդունելությանն արժանացան նրա «Ջրաբերդ», «Պարույր Հայկազն» հայրենասիրական հրաշալի պատումները, «Կայծեր» վեպի «Վարազ» անտիպ գլուխը, որ նվիրված էր Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի լուսավորչական գործունեությանը: Հետաքրքիր է, որ

«Ջրաբերդ» գրույցի գեղեցիկ դրվագապատկերներից մեկը դրոշմվել է «Աղբյուրի» բազմաթիվ համարների կազմի վրա:

«Աղբյուրի» ակոսներում հատիկ-հատիկ ցանված գրական սերմերը ծլարձակեցին սերունդների հոգում՝ մեծ նպաստ բերելով նրանց կրթության ու դաստիարակության գործին: Այդ ստեղծագործությունները այնուհետև ընդգրկվեցին գրողների ընտրանի ժողովածուներում, դպրոցական դասագրքերում՝ շարունակելով իրենց վեհ առաքելությունը: Ընդգծելով «Աղբյուրի» մեծ դերը հայ մանկագրության զարգացման, հայ նշանավոր գրողների ջանքերը՝ նաև մանկական գրականության արժեքներ ստեղծելուն նպատակաուղղելու գործում, նշենք, որ ամսագիրն իր գործունեության ընթացքում չի խուսափել թերություններից, վրիպումներից, հետևողականություն չի դրսևորել առանձին հարցերում: Այսպես, ամսագիրը թեև ազդարարում էր, որ «մանկական գրքերը պետք է հեռու լինեն կրոնական ձգտումներից, որովհետև այդպիսիները գրվում են նախագծված նպատակներով, որն արդեն գիրքն անպետք է դարձնում՝ ձգտելով ուսուցանել բարոյականություն»[6], այնուամենայնիվ, նրա էջերում տեղ էին գտնում կրոնական բնույթի նյութեր ու նկարներ, քիչ չէին նաև բարձրահունչ բարոյախրատական, ներգործուն տպավորություն չթողնող, գեղարվեստական վարպետությունից զուրկ, խրթին լեզվով ու ոճով գրված նյութերը: Բայց այս ամենը «Աղբյուրի» գրական առողջ, բարեբեր հունձքի մեջ միայն փոքրիկ, որակ չկազմող հատիկներ էին: Երիցս իրավացի էր «Աղբյուրի» եռանդուն, խորագիտակ խմբագիր–հրատարակիչ, գրող–հրապարակախոս Տիգրան Նազարյանը, երբ գրում էր. «Մեր գրական երկնակամարի վրա ցոլացող պայծառ աստղերի մեծագույն մասը բխել է «Աղբյուրից» և հոսելով նրա անուշաբույր մարգագետիններով, չքնաղ լեռների լանջերով՝ բարձրացել է մինչև երկինք... Վիթխարի կաղնիներ է աճեցրել «Աղբյուրը», սակայն ինքը մնալով միշտ հեզահամբույր մանուշակից անբաժան»[7]: Ճշմարտացի գնահատական՝ հաստատագրված մեր մանկապատանեկան գրականությանը, հայոց սերունդների կրթությանն ու դաստիարակությանը մեծ ծառայություններ մատուցած մանկական ամսագրի ու նրա երախտավոր խմբագրի՝ Տիգրան Նազարյանի անձնվեր գործունեությունը բնութագրող խոսքերով: Իրենց հիշողություններում «Աղբյուրի» խմբագրի «տիտանական աշխատանքը» արժեքավորելով՝ Հովհաննես Թումանյանը, Շիրվանզադեն, Ալեքսանդր Ծատուրյանը, ամսագին աշխատակցող

ուրիշ նշանավոր գրողներ նրան մեծարել են ժամանակի խավար իրականությունում «լուսաշող մի փարոս», «ուղեցույց աստղ» և այլ խոսքերով: Իսկ վրացական «Թեատրի դա ցխովրեբա» («Թատրոն և կյանք») ամսագիրը Տիգրան Նազարյանին նվիրված հոդվածում, հատկապես գնահատելով նրա դերը ժողովուրդների միջև համերաշխության ու բարեկամության գաղափարների տարածման գործում, գրում է. «Նրա բարձր արժեքը նաև նրանում է, որ չի առաջնորդվում նեղ, շովինիստական հայացքներով: Նրա նպատակը շատ մեծ է, թո՛ղ ապրի նրա նպատակը և գործունեությունը մեր ժամանակի խավար կյանքում»[8]:

«Աղբյուրի» փակումից քիչ ժամանակ անց հաստատվեց խորհրդային իշխանություն, եկան նոր ժամանակներ, և ամսագիրը շարունակեց «ապրել» ոչ միայն ազգային գրադարանի արխիվներում, ոչ միայն ժամանակակիցների հիշողություններում, այլև հայ մանկանց և պատանի սերունդների հոգում՝ իր էջերում հրապարակված ճանաչողական–ուսուցողական հետաքրքիր նյութերով, ամենից ավելի՝ գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններով…

Եվ, բառիս իսկական իմաստով, շարունակում է ու կշարունակի ապրել…

«Աղբյուրին» զուգահեռ՝ դարասկզբի հայ մանկագրության մայրուղում հպարտորեն «ծլարձակեց» «Հասկերը»՝ մեր երկրորդ ամենաերևելի մանկապատանեկան ամսագիրը, որ մի նոր, կարկաչուն աղբյուր դարձավ մանուկներին ու պատանիներին հասցեագրված գրականության զարգացման ճանապարհին: Ավելին, «Հասկերը» իրավամբ համարվում է «նախախորհրդային հայ մանկական պարբերականների պսակը», մի ամսագիր, որի դերը դժվար է գերագնահատել մանկանց սերունդների կրթության ու դաստիարակության, հայ մանկապատանեկան գրականությունը նոր շերտերով հարստացնելու գործում: Երբ «Հասկերը» ծնվեց (1905-ին), «Աղբյուրն» արդեն շուրջ 22 տարվա ճանապարհ էր անցել, բայց նա նոր ժամանակների երկունք էր, և այդ ժամանակների միջով՝ ապագայի հույսը «սրտում» անցավ փառավոր ճանապարհ՝ «Աղբյուրի» լավագույն ավանդույթները շարունակելով՝ դրանք բարձրացնելով նոր աստիճանի: Հիշենք, որ դարասկիզբը քաղաքական–սոցիալական խոր հակասությունների բևեռացման, ցարական ինքնակալության հիմքերը սասանող հեղափոխությունների նախապատրաստման, ազգային-ազատագրական պայքարի թեժացման, ժողովուրդների նորագույն պատմության շրջադարձային փուլե-

րին նախորդող փոքորկուն ժամանակաշրջան էր: Գրականությունն ու մամուլն էլ (այդ թվում՝ մանկապատանեկան) հայտնվել էին նախահեղափոխական խմորումների հորձանուտում, և «այդ շրջանի հայ գրականության ամենաբնորոշ կողմը ժողովրդայնությունն էր, գրողները շատ խոր ու լայն կերպով պատկերեցին ազգային կյանքն ու հոգեբանությունը, ժողովրդի սոցիալական և ազգային վիշտը… Գրականության մեջ բարձրանում են վիթխարի մեծություններ, որոնք առաջ են մղում հայրենական գրականությունն ու կուլտուրան»: Գրական այդ «վիթխարի մեծությունները», առաջին հերթին՝ Հովհաննես Թումանյանը, Ղազարոս Աղայանը, ապա՝ Աքաբեկ Խնկոյանը և ուրիշներ, որ նաև «Աղբյուրի» էջերից էին իրենց հրաշալի ստեղծագործական ճառագումներով լուսավորել հայ մանկանց և պատանեկության սերունդների ճանապարհը, այս անգամ առավելապես համախմբվում են «Հասկերի» շուրջը և շարունակում զորավիգ լինել հայ մանկապատանեկան գրականության վերընթացին: Այո՛, Հովհաննես Թումանյանն ու Ղազարոս Աղայանը իրենց ստեղծագործություններով «Հասկերի» հենասյուներն են եղել, ու ամենից ավելի նրանց հեղինակավոր անունները են ապահովել ամսագրի մեծ հաջողությունը ընթերցողների շրջանում: Եվ քանի որ մենք մեր «Ոսկեդարից մինչև 21–րդ…» գրքում առանձին ակնարկներ ենք նվիրելու նրանց, այստեղ միայն հիշատակենք, որ «Հասկերը» Հովհաննես Թումանյանի «Գառնիկ ախպերով» է առաջին անգամ ընթերցողներին ներկայացել, առաջին անգամ նրա համարներում են տպագրվել «Գիքորը», «Չարի վերջը», «Դըժար տարին», «Գելը», «Արեգը սև աշխարքում», «Ամենից լավ տունը». այսպես բազմաթիվ այլ բանաստեղծություններ, բալլադներ, պատմվածքներ, բայց ամենից ավելի՝ հեքիաթներ, այդ թվում՝ նրա թարգմանությամբ՝ ռուսական «Գեղեցկուհի Վասիլիսան», իտալական «Որոտ թագավորը», իռլանդական «Կախարդի քսակը» և շատ ուրիշ գործեր: Այդպես նաև՝ Ղազարոս Աղայանի մանկական շատ բանաստեղծություններ ու հեքիաթներ «Հասկերի» էջերից են «խոսել» փոքրիկ ընթերցողների հետ: Եվ Աքաբեկ Խնկոյանն էլ՝ սկսելով «Աղբյուրից» իբր մանկագիր հասունացել է «Հասկերում»: Նրա շատ բանաստեղծություններ և առակներ նույնպես առաջին անգամ հրապարակվել են այս ամսագրում: Ու թեև նրա խմբագիր հրատարակիչները՝ Եկատերինա և Ստեփան Լիսիցյանները, նույնպես ժամանակի երևելի մանկավարժներ և գրական գործիչներ են եղել, ու թեև «Հասկերի» էջերում հաճախ էին հանդես գալիս արդեն

համբավավոր գրողներ Ալեքսանդր Շիրվանզադեն, Ավետիք Իսահակյանը, Վրթանես Փափազյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Ալեքսանդր Ծատուրյանը, Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշներ, բայց ամսագրի ոգին հրաշալի «մանկական եռյակն» էր՝ Հովհաննես Թումանյանի առաջնորդությամբ: Այո՛, հենց այդպես ու հենց «Հասկերի» հպարտ խոստովանությամբ, երբ յուրաքանչյուր տարվա բաժանորդագրության հայտարարագիրը տպագրելիս՝ շեշտվում էր «Հովհաննես Թումանյանի մշտական աշխատակցությունը», հաճախ էլ նույնիսկ ընդգծվում՝ «անմիջական ղեկավարությամբ Հովհաննես Թումանյանի և մշտական աշխատակցությամբ Ստեփան Լիսիցյանի»: Ահա գրական այս աստղաբույլի համախմբումով էլ՝ «Հասկերը» ծնվեց, ապրեց և հայ մանկապատանեկան մամուլի գագաթ բարձրացավ՝ լուսավորելով նաև հայ մանկագրության ճանապարհը ամբողջ 18 և մեկ (1922) տարի:

«Հասկերի» հենց առաջին համարի խմբագրականում ընդգծվում են այն հիմնախնդիրները, որոնք ամսագրի խմբագրությունը ձգտելու էր լուծել իր գործունեության ընթացքում. «Ամսագրի նպատակն է՝ ա) ներշնչել մանուկ ընթերցողներին վսեմ ձգտումներ՝ արծարծելով նրանց մեջ սեր դեպի մարդը և դեպի հայրենի միջավայրը, բ) տալ նրանց ճիշտ հասկացողություններ բնության և մարդու մասին, գ) զարգացնել նրանց ճաշակը, դ) ուրախություն և աշխուժություն մտցնել մանկական կյանքի մեջ»[9]: Մի՞թե այս չորս պատվիրաններում չեն կիզակետվում այն գաղափարները և ուսուցողական–դաստիարակչական այն ճշմարիտ նպատակները, որ այս կամ այն չափով իրենց գործունեությամբ ձգտել են իրականացնել «Հասկերին» նախորդող մանկական առաջավոր ամսագրերն ու հայոց մանկավարժական միտքը, այդպես նաև՝ հայ մանկապատանեկան գրականությունը: Բայց «Հասկերը», որ իր գործունեությունը հստակորեն կառուցում էր և՛ նախադպրոցական, և՛ դպրոցական տարբեր հասակի երեխաների տարիքային առանձնահատկությունների ճիշտ հաշվառման հենքի վրա, իր առջև դրված նպատակները հետևողականորեն իրականացնում էր ստեղծագործական ամենաբազմազան ձևերով՝ ժողովրդական բանահյուսության նշխարքներ, չափածո և արձակ ստեղծագործություններ, գիտության տարբեր ոլորտների, հատկապես բնագիտության վերաբերյալ հետաքրքաշարժ, հանրամատչելի զրույցներ, զվարճալի խաղեր, տարաբնույթ այլ նյութեր: Հանդեսի մանկավարժական–ուսուցողական, գիտական տարբեր բնագավառներին, արվեստին վերաբե-

րող նյութերը պատրաստում էին այդ ոլորտների ճանաչված գիտակները՝ Ստեփան Լիսիցյանը (մանկավարժական-ուսուցողական նյութեր), Հ. Տեր-Միրաքյանը («Նախադպրոցականի դաստիարակումն ընտանիքում», «Մանկապարտեզն ընտանիքում» և ամենափոքրիկներին հասցեագրված այլ նյութեր), Գարեգին Լևոնյանը (գեղագիտական դաստիարակության հարցերին նվիրված հոդվածներ) և ուրիշներ: Ամսագրի գեղարվեստական ձևավորման աշխատանքները ղեկավարում էր ականավոր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը: Սակայն «Հասկերը», բոլոր այդ ոլորտների վերաբերյալ հրապարակումների զորակցությամբ հանդերձ, մանուկների ու պատանիների, ինչու չէ, նաև մեծահասակ ընթերցողների շրջանում ունեցած հեղինակությամբ թերևս ամենից ավելի պարտական է բանահյուսական, գրական–գեղարվեստական բարձրարժեք տարաժանր նյութերին, որոնց հեղինակները, կրկնում ենք, հայ ամենաերևելի գրողներն էին: «Հրաշալի եռյակի» ստեղծագործություններից բացի, «Հասկերի» էջերում տարբեր ժանրի բարձրարժեք ստեղծագործություններով (թվենք միայն մի քանիսը) ուսուցողական–դաստիարակչական չափազանց հետաքրքիր դասեր են ավանդել Ավետիք Իսահակյանը («Ամենապետքական բանը աշխարհում», «Արևի մոտ», «Երգի հրապույրը» հեքիաթ–զրույցները), Վրթանես Փափազյանը («Թղթի նավակ», «Քարափոսիկը», «Խաղ», «Ծիլն ու ապառաժը» պատմվածքները, «Փիրուզե» հեքիաթը…), Շիրվանզադեն («Տասիս պատմությունը», «Մեր թթենիները», «Պատերազմ», «Ավետի քիթը» և այլ պատմվածքներ, «Իմ կյանքից» հուշագրությունը), ինքը՝ ամսագրի խմբագիր–հրատարակիչ Ստեփան Լիսիցյանը (պատմվածքներ, ժողովրդական ավանդություններ, այդ թվում՝ «Աբու–Հասանի մաշիկները» զավեշտալի հեքիաթ–զրույցը, որ մտել է դասական մանկական ստեղծագործությունների շարքը) և ուրիշներ: «Հասկերում» են նաև իրենց «մանկական մկրտությունն» ստացել ապագա մեր նշանավոր այլ մանկական գրողներ՝ Հակոբ Աղաբաբը, Հայրապետ Հայրապետյանը՝ հատկապես ամենափոքրիկներին հասցեագրված իրենց պարզ ու անպաճույճ հրաշալի բանաստեղծություններով, հանրաճանաչ մանկավարժ–արձակագիր Սիմակը՝ իր հետաքրքրաշարժ և ուսանելի պատմվածքներով, բնագետ-գրող Ռուբեն Գաբրիելյանը՝ իր բնագիտական պատմվածքներով ու զրույցներով, Գևորգ Մեսյանը՝ իր արձակ (ավանդություն, առակ, հեքիաթ, պատմվածք) և չափածո բազմաթիվ ստեղծագործություններով… Այս թվարկումը կարելի է և շարու-

նակել: Բայց նշված անուններն արդեն խոսուն վկայագրեր են այն մասին, թե «Հասկերում» տեղ գտած նրանց ստեղծագործությունները որքան մեծ դեր են խաղացել հայոց սերունդների կրթության ու դաստիարակության, հայ մանկապատանեկան գրականության զարգացման գործում: Մենք նկատի ունենք հատկապես այն գրողներին (Դերենիկ Դեմիրճյան, Հակոբ Աղաբաբ, Հայրապետ Հայրապետյան), ովքեր հանդես եկան ոչ միայն «Հասկերում», այլև հետագայում շարունակեցին հրաշալի շատ ստեղծագործություններ «նվիրել» երեխաներին և որոնց «մանկական» դիմանկարներին (այդ թվում՝ Ավետիք Իսահակյանի), առանձին ակնարկներով մենք հանգամանորեն անդրադարձել ենք 20–րդ դարի մեր մանկապատանեկան գրականությանը նվիրված «Դասը վարում է գրողը» մատենաշարի պրակներում:

«Հասկերը» մեծ դեր է խաղացել նաև թարգմանական մանկական գրականության ոլորտում, իր էջերից առաջին անգամ հայ երեխաներին մատուցելով տարբեր ազգերի՝ ռուս և արտասահմանյան նշանավոր գրողների լավագույն մանկական ստեղծագործություններից՝ նաև դրանցով ավանդելու նպատակադրած ճանաչողական–դաստիարակչական «դասերը»: Այդպես՝ ամսագրի ընթերցողները սիրով «հյուրընկալել» են աշխարհահռչակ գրողներ Գրիմմ եղբայրներին, Հանս Անդերսենին, Ալեքսանդր Պուշկինին, Լև Տոլստոյին, Անտոն Չեխովին, Իվան Կռիլովին, Մարկ Տվենին, վրաց ականավոր գրող Ակակի Ծերեթելուն և այլոց:

Իհարկե, կարելի էր ավելի հանգամանալից անդրադարձ կատարել «Հասկերին» աշխատակցած գրողներին և նրա էջերում հրապարակված ստեղծագործություններին, հայ մանկապատանեկան գրականության զարգացման գործում ներդրած ավանդին, շեշտադրել այլ արժանիքներ, բայց ասվածն էլ բավական է վերստին հաստատագրելու, որ, իրոք, այդ ամսագիրն իր գործունեությամբ հսկայական դերակատարում ունեցավ ինչպես դասական, այնպես էլ նրա ավանդույթների հենքի վրա հետագա տարիներին որոշակի նվաճումներ արձանագրած հայ նորագույն մանկագրության վերելքի ճանապարհին: Իր փակումից (1917) չորս տարի անց՝ 1922–ին, արդեն խորհրդային իշխանության հաստատումից հետո, «Հասկերը» մի վերջին անգամ փորձեց նորից վերածնվել, բայց ընդամենը մեկ համարի կյանք ունեցավ…

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Աղբյուր», 1883, N 1, բ. II, էջ 1:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. «Աղբյուր», 1884, N 3, բ. II, էջ 3:
5. «Աղբյուրի ակունք» 1908, պր.1, էջ 6:
6. «Աղբյուր», 1884, N 3, բ. II, էջ 3:
7. «Աղբյուրի ակունք»,1908, պր. 1, էջ 6:
8. «Աղբյուր»,1908, N 1, էջ 6:
9. «Հասկեր», 1905, N 1, էջ 5:

Ludwig Karapetian

EAST ARMENIAN CHILDREN'S PERIODICALS

Summary

The article is a brief historical and literary review of East Armenian children's periodicals. Two of them *Hasker* and *Aghbyur* have often been in the centre of bibliographical studies on Armenian children's literature and culture. We have tried to focus on the historical development of these magazines, their publishers and outstanding contributors, their evolution from birth to survival under different social and political circumstances.

ЕЛЕНА КАРАБЕГОВА

ЭВОЛЮЦИЯ ОБРАЗА «ВОЛШЕБНОЙ ДЕВОЧКИ» В ЕВРОПЕЙСКОЙ И ЛАТИНОАМЕРИКАНСКОЙ ЛИТЕРАТУРНОЙ СКАЗКЕ XX ВЕКА

(«Пеппи-Длинный Чулок» А. Линдгрен, «Момо» М. Энде и «Ева Луна» И. Альенде)

Эволюция литературной сказки в XX-XXI веках обусловлена, как известно, следующими факторами: происходит углубление и переосмысление связи с фольклорной сказкой; выявляется зависимость поэтики литературной сказки от данного этапа литературного процесса (в особенности – от фэнтези); специфика внутренней связи этого жанра с остальным творчеством ее автора и в первую очередь – с особенностями его творческого метода. Художественная система трех произведений – «Пеппи Длинный Чулок» А. Линдгрен, «Момо» М. Энде и «Ева Луна» И. Альенде – организуется вокруг образа сказочной девочки, и анализ черт сходства и различия между Пеппи, Момо и Евой Луной в контексте эволюции литературной сказки в целом представляет, на наш взгляд, определенный научный интерес.

Если воспользоваться терминологией и научными идеями исследования Фридель Ленц «Образный язык народных сказок» (Ленц 2000), то можно примерно определить место «девочки» в фольклорной образной системе и, в частности, в системе волшебной сказки. «Дух человека, его вечная энтелехия, его «я» появляются в мужском образе, и все подчиненные ему силы представляются как мужские. Душа открывается в образном языке всех народов как женское существо, и все душевные качества появляются в женских образах» (Ленц 2000: 13). И далее – «Девочка, девушка,

женщина и старуха – ступени развития души... Если душа-дочь – становится самоотверженной, любящей, одухотворенной душой, то душевно-женственное становится Вечно-Женственным» (Ленц 2000: 324-326). Забегая несколько вперед, отметим, что именно душевная и духовная сторона всех этих трех образов и будет представлять наибольший интерес и фактически составляет архетип девочки в волшебной сказке. Она не вступает в брак, не связана с мотивом «героического сватовства» героя-протагониста, но является носительницей добра и сострадания, и именно поэтому она может творить сказочные чудеса. И Пеппи, и Момо, и Ева, как мы увидим, обладают доброй и чистой душой, и в то же время все трое оказываются прекрасными психологами и способны не только распознать истинную сущность всех тех, кто встречается им на пути – будь то люди, животные или волшебные существа,– но и оказать не только действенную, но и психологическую помощь тем, кто этого заслуживает – попавшим в беду добрым героям. Но такая модификация образа волшебной девочки могла появиться только во второй половине XX века, после кризисов и потрясений, когда во всем мире особенно остро стала ощущаться потребность в «сказкотерапии».

У истоков такой модификации жанра литературной сказки, в центре художественной структуры которой находится образ девочки, стоит «Алиса в Стране чудес» Льюиса Кэррола. Девочка в народной и литературной сказке, как известно, выступает в двух ипостасях – добрая и злая, причем добрая получает за свою доброту и усердие награду – ей открывается путь в волшебный мир и приходят на помощь волшебные помощники. Злая же получает вполне заслуженное ею наказание. До появления сказки Кэррола наиболее интересные, на наш взгляд, сказочные девочки – это юная Золушка из сказки Ш. Перро, Герда из сказки «Снежная королева» и Русалочка из одноименной сказки Г. Х. Андерсена. «Алиса» Кэррола становится той вехой в истории развития литературной сказки, которая обозначает переход к более сложной тематике и проблематике сказки, в нее включаются научные проблемы и символы, углубляется ее содержание. Но Алиса при этом остается вполне нормальным и воспитанным ребенком, хорошо помнящим, как ей надо себя вести, соблюдая правила приличия, и в то же время и автор, и девочка весело смеются и над правилами, и над неразумными и «закомплексованными» существами из Страны чудес и Зазеркалья. Основ-

ную коллизию сказки составляют полный чудес сказочный мир и здравый смысл и любознательность девочки, познающей открывающуюся ей жизнь в ее волшебном обличьи. И Алиса еще достаточно далека по своей художественной природе и роли в сказочном повествовании как от наших трех героинь, так и от фольклорной девочки.

В литературной сказке XX века образ волшебной девочки претерпевает значительные изменения. Интересно отметить, что самой близкой по времени создания волшебной девочкой и фактически пародией на Алису становится Мальвина из сказки А.Толстого «Буратино или Золотой ключик».

Поэтика сказки «Пеппи Длинный Чулок» А. Линдгрен многими нитями связана с богатой традицией скандинавской литературной сказки, но в то же время находится в состоянии полемики с некоторыми ее крупными произведениями. Пеппи – в какой-то степени антитеза Нильсу из сказки С. Лагерлеф «Чудесное путешествие Нильса с дикими гусями». Нильс наказан за свое озорство и на протяжении всего повествования искупает свою вину перед обиженным им гномом. Озорство Пеппи составляет, как мы увидим, суть ее характера, оно жизнеутверждающее и веселое. Пеппи – образ того же ряда и, отметим, снискавший такую же популярность, как и знаменитый Карлсон, который живет на крыше, вышедший из-под пера той же писательницы.

Для скандинавской сказки характерно, в первую очередь, острое ощущение связи с природой Скандинавии, с ее добрыми и злыми силами. Г. Х. Андерсен, опираясь на широкую фольклорную традицию и на эстетические принципы немецких романтиков, видевших в сказке «канон поэзии» и способ претворения высокого поэтического начала в обыденную жизнь, – открывает «закон сказки» – любая вещь может быть очеловечена, опоэтизирована и включена в сказочный «универсум», который, однако, сохраняет свою связь с человеческим социумом. Недаром про Андерсена говорили, что он может в любой сточной канаве найти прекрасный жемчуг. Интерес к творчеству Андерсена не ослабевает и в наше время, постоянно выходят новые исследования, уже не говоря о переиздании его сказок (Андерсен 2008). Сказочное творчество Андерсена и всего несколько сказок, написанных Сельмой Лагерлеф (но в их числе – знаменитое «Путешествие Нильса с дикими гусями»!), составляют вершину богатой традиции скандинавской литературной сказки, а в XX веке ее продолжили

Туве Янсон и Астрид Линдгрен, которую называли «Андерсен наших дней» (Брауде 1974: 153).

Уже первая опубликованная Линдрген, скромной конторской служащей, книга – литературная сказка «Пеппи Длинный Чулок» – получила в 1945 году литературную премию, за ней последовали «Пеппи Длинный Чулок на борту корабля» и «Пеппи Длинный Чулок в Южном море». Само имя – Пеппилотта, Пеппи – тоже придумано автором, точнее ее дочкой, которая, лежа в постели больная попросила свою маму Астрид рассказать ей сказку о девочке «Пеппи Длинный чулок».

Сказка о Пеппи задала тональность всему остальному творчеству Линдгрен, предназначенному детям (но с какой охотой читают их взрослые!), его главными героями стали тоже дети. Переведенные на многие иностранные языки сказки Линдгрен вошли в золотой фонд мировой детской литературы. Как отмечает Л. Ю. Брауде, ее книги «учат правдивости, доброте, честности, гуманности. Учат не только детей, но и взрослых. Им они подсказывают вдумчивое, серьезное отношение к ребенку, уважение к нему, умение видеть в нем хотя и маленького еще, но человека» (Брауде 1974: 153). Следует отметить, что в Советском Союзе выход в свет этой сказки, а затем и других ее сказок («Карлсон, который живет на крыше», «Мио, мой Мио», «Рони, дочь разбойника») в блестящем переводе Лилианны Лунгиной и с ее же предисловиями были настоящим прорывом в контексте советской литературы для детей и открытием нового образа ребенка и нового сказочного мира (Лунгина 2010).

Пеппи это не только первый образ «волшебного ребенка» в творчестве А. Линдгрен, но и своего рода модель, мифологема, по которой будут строиться и образы детей в других ее сказках. В «Пеппи» фактически повторяется одна и та же ситуация. Пеппи как бы олицетворяет мечту ребенка о том, чтобы, с одной стороны, освободиться от зависимости от взрослых, от их поучений, запретов, советов и т.д., а с другой – создать свой собственный мир, в котором он мог бы быть счастливым и свободным, и где исполнялись бы его любые желания. И как бы «за кадром» остаются те последствия, которые могло бы повлечь за собой такое поведение ребенка в реальном мире.

Пеппи – дочь капитана корабля «Попрыгунья» – в один прекрасный день сходит на берег, держа в руке чемодан с золотыми монетами и неся на плече обезьянку по

имени господин Нильсон. Она отправляется на купленную ее отцом виллу «Курица», в первый же день покупает себе лошадь и держит ее в доме, а поскольку Пеппи обладает огромной физической силой, она, когда лошадь ей начинает мешать, легко поднимает ее и относит на руках в сад. Огромная физическая сила Пеппи, ее отвага, щедрое и доброе сердце делают ее носительницей идеи Добра. Она не только не позволяет полицейским отправить себя в детский приют, но и выкидывает их из сада, она сражается с хулиганами, а на острове Веселия – и с пиратами; в зверинце и цирке она побеждает змею и тигра, а в море она хватает акулу за хвост, крутит ее над головой и забрасывает далеко в море. Пеппи способна на самопожертвование и настоящий подвиг – она спасает детей из горящего дома.

Пеппи сразу же подружилась с соседскими детьми – Томми и Анникой, а затем и со всеми детьми в городе. Пеппи устраивает для детей городка постоянный праздник – дарит им леденцы, игрушки и золотые монеты. С появлением Пеппи жизнь в городке, которая до этого текла тихо и однообразно, преображается. Пеппи принципиально отказывается подчиняться предписанным детям правилам поведения – она перебивает взрослых, вмешивается в их разговоры, лазает по деревьям и крышам, в театре во время спектакля она разговаривает с артистами на сцене, скачет на лошади по улицам. Она все делает наоборот и даже спит ночью, положив ноги на подушку.

Внешний вид Пеппи тоже необычен – у нее ясные синие глаза, торчащие вверх рыжие косички и веснушки. Когда она выходит из дому, то надевает большую шляпу и обувает огромные туфли на каблуках. У нее на ногах чулки разного цвета – черный и коричневый. Здесь можно уловить некоторое сходство с экранным образом Чарли Чаплина, с трагикомической фигурой нелепо одетого маленького человека, наделенного большим сердцем, добротой, но обреченного на одиночество и несчастья.

В книге Линдгрен явственно представлена та реальность, в которой живут сверстники Пеппи – строго дидактическая система воспитания, предписываемые детям жесткие правила поведения в школе и дома и т.д. Апофеозом этой системы выступает «благотворительница» фрекен Розенблюм, которую боятся и дети, и взрослые, и все «благодеяния» которой выглядят скорее как наказание. (В сказке о Малыше и Карлсоне появится фрекен Бок – домоправительница, которую Малыш назовет «до-

момучительница»). Пеппи в пику этой наводящей на всех страх и уныние даме тут же одаривает леденцами всех тех детей, которым «должно быть стыдно» и которые не заслужили поощрения от фрекен Розенблюм.

Пеппи не желает ни ходить в школу, ни становиться взрослой. Да и одинаково трудно было бы представить себе выросшую Пеппи, которая либо сохраняет свои детские привычки и озорство (это бы выглядело уже только нелепо и некрасиво), либо оставляет их в далеком прошлом (но тогда это была бы уже не Пеппи).

Սակայն ինչպես վերը նշեցինք, մանկական շարքի լույս աշխարհ գալը կապվում էր նաև Ա. Ղանալանյանի «Ավանդապատումի» հրատարակության հետ, քանզի բացառապես բոլոր 13 բանաստեղծությունների հենքն էլ հայ ժողովրդական ավանդազրույցներն են, փաստացի աղբյուրը՝ «Ավանդապատում» ժողովածուն:

Պ. Սևակի մանկական ստեղծագործությունները՝ իբրև սկզբնաղբյուր, «Ավանդապատումում» ունեն իրենց համապատասխան ավանդություններն ու դրանց տարբերակները:

Բնությունն իր խորախորհուրդ գաղտնիքներով միշտ էլ գրավել է մարդ արարածին, ստիպել թափանցել նրա խորքերն ու գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները:

Վաղնջական ժամանակներում մարդուն շրջապատող երկրային ու երկնային առարկաներն ու երևույթները կենդանացնելով և անձնավորելով, ոմանց էլ նույնիսկ սրբացնելով՝ մեր նախնիներն իրենց «մանուկ» հասակում փորձել են մեկնել դրանք:

Այդ մեկնությունները՝ իբրև բնության առեղծվածները «բացող» բանալիներ, նրանք ավանդազրույցների տեսքով ի պահ են տվել գալիք սերունդներին:

Սևակը, «մանուկ» մտածողության արգասիք հանդիսացող այդ մեկնություններից 13–ին նորովի մեկնաբանություն տալով, կրկին վերադարձրել է դրանց հասցեատիրոջը՝ մանուկներին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի. Ռոստովցևա, Միոտանի արագիլը, «Գրական թերթ», 30.03.1984, էջ 43:
2. Պ. Սևակի «Երկերի ժողովածուից (Ե., «Հայաստան» հրատ., 6 հատորով, 1972–1976, կազմող՝ Ա. Արիստակեսյան) կատարվող մեջբերումների աղբյուրները այսուհետև կնշվեն բնագրում:
3. «Գարուն», 1967, հ. 9, էջ 90:
4. Ղողանջ հիշատակի, Ե., 1991, էջ 131:
5. Պ. Սևակ, Սայաթ – Նովա, Ե., 1969, էջ 282:
6. Մարո Աբրահամյան – Թաթիկյան, Փառք և օրհնություն հիշատակին քո, Ե., 1993, էջ 47:
7. Նույն տեղում, էջ 20:

8. Վ. Բալայան, Հրդեհվում, այրվում էր…, «Ավանգարդ», 6.02.1974:
9. Պ. Սևակ, Սերունդների երթը, «Սովետական գրականություն», 1960, հ. 11:
10. Ե. Չարենց, Երկերի ժողովածու՝ 6 հատորով, հ. 6, Ե., 1967, էջ 214:
11. Արևին ընդառաջ, Ե., 1951, էջ 113:
12. Ա. Բարտո, Մանուկների համար, Հայպետհրատ, Ե., 1951:
13. Ջ. Ռոդարի, Բարև՛, երեխաներ, Ե., 1956, Հայպետհրատ, 37 բանաստեղծություն:
14. Ս. Յափուջյան, Պարույրի հետ, «Հայաստանի հանրապետություն», 14.06.1994:
15. Թե՛ Պ. Սևակի երկերի վեցհատորյակում, թե՛ Ա. Արիստակեսյանի կազմած մատենագրության մեջ և թե՛ բանաստեղծի որդու՝ Արմեն Ղազարյանի կազմած «Պարույր Սևակ, Եղիցի լույս» ժողովածուում նշվում է գրելու ոչ թե 1960թ., այլ 1962թ. հոկտեմբերի 26–ը:
16. Ս. Յափուջյան, Պարույրի հետ, «Հայաստանի հանրապետություն», 14.06.1994:
17. Նույն տեղում:
18. Նույն տեղում:
19. Լ. Հախվերդյան, Պ. Ղազարյան, Գեղեցիկ և որակյալ գրքի համար, «Գրական թերթ», Ե., 24.05.1950:
20. Պ. Սևակ, Լ. Փարսադանյան, Արժեքավո՞ր, թե՞ խոտելի դասագիրք, «Գրական թերթ», 7.02.1964:
21. Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Ե., 1969:
22. Ն. Հովսեփյանի կազմած «Պարույր Սևակ. կենսամատենագիտության» մեջ 1970թ. հրատարակված գործերի թվում «Չըջիկի» փոխարեն նշված է «Աղջիկը», որը, անշուշտ, տպագրական վրիպակ է (Պարույր Սևակ. կենսամատենագիտություն, 2–րդ մաս, կազմող՝ Նինա Հովսեփյան, Ե., 1983, էջ 55):
23. Պ. Սևակ, Ձեր ծանոթները, Ե., «Հայաստան», 1971:
24. «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» («Սովետական մանկավարժ» ամսագրի հավելված), Ե., 1974, հ. 2, (մարտ–ապրիլ):
25. Նույն տեղում:
26. Նույն տեղում:
27. Ա. Վ. Արիստակեսյան, Պարույր Սևակ, Ե., 1974, էջ 443:

Armen Sargsian

PARUYR SEVAK AS A CHILDREN'S AUTHOR

Summary

Though Paruyr Sevak's works can be positively categorized as adult literature, he has written pieces specifically for child readers. However, Sevak as a children's author, has been unduly overlooked and very few publications have been devoted to this aspect of the poet's interests. The article is an attempt to consider the obvious intertextual relations of Sevak's nursery poetry with certain genres of Armenian folklore, fables and legends in particular.

ԱԼՎԱՐԴ ՋԻՎԱՆՅԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

Մանկական գրականությունը կազմում է ազգային գրականության առանձնահատուկ՝ ուրույն շերտ: Պատմական զարգացման ընթացքում այն ձեռք է բերել գծեր, որոնց շնորհիվ սահմանազատվում է մնացյալ գրականությունից: Ամենագլխավոր յուրահատկությունը հասցեատեր–ընթերցողն է, որով և պայմանավորված են մանկական գրականության թեմատիկ հնարավորություններն ու ոճական բնութագիրը՝ պոետիկան:

Փոքր–ինչ այլ մոտեցման դեպքում մանկական գրականությունը մանկության պատմության մի մասն է, որ գեղարվեստորեն արտացոլում ու պահպանում է մարդկային քնքուշ տարիքի կենսակերպը, յուրօրինակ մտայնությունն ու փիլիսոփայությունը:

Մանկական գրականության վերաբերյալ աշխատություններն ունեն պատկառելի պատմություն ու ծավալ, մինչդեռ միջմշակութային–զուգադրական ուսումնասիրությունները համեմատաբար քիչ են, ոլորտը՝ նոր: Վերջիններս կարող են լինել տարաբնույթ՝ կախված ընտրված սկզբունքից:

Ժանրային սկզբունքը ենթադրում է մանկական գրականության որևէ ժանրի (հեքիաթ, պատմվածք, վեպ, բանաստեղծություն…) համեմատական ուսումնասիրությունը տարբեր մշակույթներում:

Պատմական մոտեցումը հնարավոր է ընկալել թե՛ որպես տարբեր մշակույթների պատկանող գրականությունների ուսումնասիրություն՝ տրված պատմական ժամանակահատվածում, թե՛ որպես տվյալ ազգային գրականության քննություն պատմական տարբեր փուլերում:

Հեղինակային մոտեցումը տարբեր մշակույթներ ներկայացնող առանձին հեղինակների ստեղծագործությունների զուգադրական ուսումնասիրությունն է:

Մանկական գրականությունների միջմշակութային – զուգադրական մեկնության դաշտում կարևոր տեղ է հատկացվում թարգմանական կամ փոխադրական նյութին, որը բնույթով միջմշակութային կարևոր օղակ է երկու մշակույթների միջև:

Միջմշակութային ուսումնասիրությունները կարող են ընդգրկել այնպիսի կարևոր և ուրույն երևույթ, ինչպիսին մանկական գրքի պատկերազարդումն է: Մանուկ ընթերցողին ուղղված ստեղծագործությունն ամենահաճախ, ավելին, գրեթե անխուսափելիորեն նկարազարդվող տեքստ է, որի ընթերցողը կարող է մերժել պատկերազուրկ գրքի գոյության իրավունքը: Եթե ներմուծենք գրքի պատկերազարդելիության աստիճան եզրը, ակնհայտորեն պատկերազարդելիության ամենաբարձր աստիճանը նկատվելու է մանկական գրքում:

Մանկական գրքի նկարազարդումը կարող է իրականանալ որպես արմատապես տարբեր մշակույթների դիրքերից հանդես եկող մեկնություն: Նման մեկնության փայլուն նմուշ է Օսքար Ուայլդի մի շարք հեքիաթների ռուսական հրատարակությունը՝ նկարազարդված Վարդգես Սուրենյանցի կողմից:

Ստորև քննենք այն տարաբնույթ փոփոխությունները, որ տեղի են ունենում մանկական գրականության որևէ տեքստում մեկ միջավայրից մյուսը տեղափոխվելիս: Միջավայր եզրն այստեղ ընկալվում է ամենալայն իմաստով՝ թե՛ որպես ազգային, մշակութային կամ ժամանակային համատեքստ և թե՛ որպես նյութական տարբեր բառային կամ վիզուալ համատեքստեր:

Գրական հորինվածքի հարատևությունը հաճախ ենթադրում է նրա զարգացման հետհրատարակման փուլ, որի ընթացքում այն կարող է ենթարկվել տարաբնույթ փոխակերպումների: Վերջիններս կարելի է դիտել որպես սկզբնաղբյուր տեքստի ինքնօրինակ մեկնություններ: Որպես նշված պրոցեսի հարմար օրինակ՝ կարող է ծառայել դասական հեքիաթն իր հնարավոր տարբերակներով ու մեկնություններով: Այսպես, «Կարմիր գլխարկի» ինվարիանտտեքստ պետք է համարել Շարլ Պերրոյի տարբերակը, թեև հայտնի են ավելի վաղ ֆրանսիական բանահյուսական տեքստեր: Գրիմ եղբայրների «Կարմիր գլխարկը» որոշ տեսաբանների կարծիքով հիմնված է Պերրոյի տեքստի վրա:

Հնարավոր է՝ ոչ մի այլ տեքստ այդքան չի վերապատմվել, զտվել ու պարզեցվել՝ փոփոխվելով անճանաչելիության աստիճան ու կրելով ոչ միայն ոճական, այլև իմաստային անդառնալի կորուստներ: Հեքիաթի տեքստի շրջանակներից դուրս Կարմիր գլխարկը հայտնվում է բեմում, անիմացիոն ֆիլմերում, երաժշտական հեքիաթներում:

Հեքիաթի մի սեղմ վերլուծության մեջ Ումբերտո Էկոն գրում է, որ Կարմիր գլխարկը վաղուց դուրս է եկել մայր տեքստից ու ձեռք բերել ինքնուրույն քաղաքացիություն: Խորհրդային մանկանոցում այն վայելում էր արտասովոր հանրաճանաչություն, որի համար, անտարակույս, կային մի շարք օբյեկտիվ պատճառներ. ոչ մի հնօրյա զրույց այդչափ ներդաշնակ չէր խորհրդային մանկանոցի գաղափարական ոգուն, որքան Կարմիր գլխարկը: Կարմիրը բոլշևիկյան նեոհեթանոսների խորհրդանիշն էր՝ երիտասարդ կոմունիստների վզկապների ու կրծքանշանների գույնը:

Հանրահայտ այս կերպարը թափանցեց անգամ հրուշակեղենի արտադրություն. «Կարմիր գլխարկ» կոնֆետն ունեցավ բազմաթիվ՝ անգլիական, իսրայելական, ռուսական, լիտվական, նաև հայկական «թողարկումներ»՝ հեքիաթը տեղափոխելով քմային հաճույքների տիրույթ:

Զուգադրական ուսումնասիրության համար ուշարժան նմուշ է ամերիկյան մանկագիր Ֆրենկ Բաումի «Օզի հրաշալի կախարդը» (*The Wonderful Wizard Of Oz)* ստեղծագործությունը: Փորձենք քայլ առ քայլ դիտարկել այս պատմության մեզ հայտնի ներմշակութային և միջմշակութային փոխակերպումները՝ համատեղելով միջավայրի վերը նշված երկու ընկալումներն էլ:

Բնագիր տարբերակը հրատարակվել է 1900թ. ու ելակետային է հաջորդ բոլոր մեկնությունների նկատմամբ: Տեքստային նույնալեզու տարբերակներ են «Օզի…» շարքի մի քանի մասերի սեղմավեպերը: Այդպիսին է *Oxford Bookworm Library*–ի կողմից հրատարակված «Օզի կախարդը» վիպակը՝ Ր. Բորդերի մշակմամբ (Baum 2000): Տեքստի սեղմ տարբերակն իր գեղարվեստական արժանիքներով, անխոս, զիջում է բնագրին: Բնագրից սեղմավեպ անցումը, սակայն, տեքստաբանության ու ոճագիտության տեսանկյունից կարող է հետաքրքրություն ներկայացնել: Նման փոխակերպման ընթացքում տեղի են ունենում մի շարք փոփոխություններ՝ առաջին հերթին տեքստի ծավալի ակնհայտ կրճատում:

Որպես այլալեզու տեքստային տարբերակ կարող են հանդես գալ նաև տեքստի փոխադրական կամ մշակված/վերափոխված տարբերակները: Առավել հայտնի օրինակ է Ա.Մ. Վոլկովի «Զմրուխտե քաղաքի կախարդը վեպը», որը, ըստ էության, Բաումի երկի վերապատումն է: Թարգմանության ընթացքում Վոլկովը մի քանի անգամ փոխել է փիպաշարային գծերը, ներմուծել նոր գլուխներ և պատմությունն ազատել բարոյախոսական ընդգծված տրամադրությունից: Վոլկովի ազատ փոխադրությունն իր հերթին թարգմանվել է տասներեք լեզուներով՝ հանդես գալով որպես ինքնուրույն երկ (Будур 2005: 83):

Ոչ գծային, վիզուալ մեկնողական տարբերակ է պատկերազարդումը: Բաումի նման մեկնություններից առավել հայտնի են Ու. Ու. Դենսլոուի և Ջ. Ր. Նիլի նկարազարդումները: Տրված ստեղծագործության տեքստային ու վիզուալ մեկնությունների բարդ համադրում են ֆիլմ–տարբերակները (Բաումի ստեղծագործությունն էկրանավորվել է բազմիցս):

Վիզուալ յուրատիպ մեկնություն է Բաումի պատմության տարրերի ներթափանցումը բարձր նորաձևության համատեքստ: Բերենք մեկ օրինակ: Անգլիացի Գարեթ Փյուի 2008թ. աշուն–ձմեռ հավաքածուի նմուշները Ֆրենկ Բաումի «Օզի հրաշալի կախարդը» հեքիաթ–վեպի մոտիվներով նկարահանված ֆիլմի անդրադարձներն են (Vogue 2008: 210): Համանման սկզբունքով են ստեղծված Իգոր Չապուրինի զգեստների ուսագլուխները, որոնք արտացոլում են Բաումի հեքիաթ–փիպաշարի կերպարներից մեկի՝ թիթեղյա փայտահատի, որոշ տարրեր (Vogue – Россия 2009: 66):

Բերենք ևս մեկ օրինակ: Հետևենք՝ ինչպես է փոխակերպվում Լյուիս Քերոլի «Ալիսը հրաշքների աշխարհում» և «Ալիսը հայելու հետևում» հեքիաթներն ու նրանց առանձին տարրերը պատմական, մշակութային և նյութական տարբեր միջավայրերում:

Քերոլի պատմությունները գրվել են 1865 և 1871թթ.: Բնագրի հրատարակումից որոշ ժամանակ անց հայտնվում են նույնալեզու սեղմավեպ տարբերակներ: Վերջիններիս թիվն այժմ մեկ տասնյակից ավելին է: Նշենք *Oxford Bookworm Library*–ի երկու «Ալիսների» սեղմավեպերը Ջենիֆեր Բասեթի մշակմամբ (Carroll 2000): Հասկանալիորեն, սեղմավեպ տարբերակներն ունեն գործառութային հստակ կիրառություն. ծառայում են գլխավորապես որպես ուսումնական նյութ՝ Քերոլի պատմությունները մատչելի դարձնելով ընթերցողների համար, որոնց անգլերենի իմացությունը թույլ չի տալիս

երկը կարդալու բնագրով: Սեղմ տարբերակներն կարող են ընձեռել ուշագրավ նյութ տեքստաբանական ուսումնասիրությունների համար: Կախված պարզեցման աստիճանից՝ բնագիրը սեղմվելիս կրում է իմաստային որոշակի փոփոխություններ: Հնարավոր է իմաստի կորուստ, իմաստային անորոշություն, առանձին դեպքերում կարող են գոյանալ իմաստային նրբերանգներ, որոնք բացակայում են սկզբնաղբյուր տեքստում:

Թարգմանական փոխակերպման ուշագրավ օրինակ է Լ. Քերոլի «Ալիսը հրաշքների աշխարհում» հեքիաթի ռուսերեն թարգմանությունը Վլադիմիր Նաբոկովի կողմից: Գրողն այն թարգմանել է որպես «Аня в стране чудес» (Кэрролл 1989): Բնագիր տեքստի տարրերի նման արմատական փոփոխությունները ճիշտ է դիտարկել ու վերլուծել հոգեբանական գրականագիտության տեսանկյունից՝ հաշվի առնելով Նաբոկով թարգմանչի կենսագրական որոշ փաստեր: Ալիս–Անյա և նման այլ փոխակերպումների ակնհայտ պատճառներից մեկն այն է, որ Նաբոկովն առաջնային է համարել ոչ այնքան համարժեք թարգմանությունը, որքան հերոսներին ռուսական միջավայրին հարազատ դարձնելը: Թարգմանությունն արվել է վտարանդիության տարիներին՝ հանգամանք, որ կարոտախտի երանգ է հաղորդել ռուսերեն երկին՝ հեղինակի մանկության մինչխորհրդային Ռուսաստանը նույնացնելով անիրական «հրաշքների աշխարհի» հետ:

1954–ին լույս տեսած «Այլ եզերք» ինքնակենսագրական երկում Նաբոկովն ասես վերստեղծում է իր մանկությունն ու պատանեկությունը. ամառն անկացնում էին Պետերբուրգի մերձակայքում՝ Վիրայի ընդարձակ մարգագետիններում ու թավ անտառներում, Օրեդեժի կարմրկեկ ավազոտ ափերին: Գետը քմահաճ առաջ էր քշում ջրերը հյուսիսի գունատ երկնքի տակ: Ձմռանը մնում էին մայրաքաղաքի տանը՝ Մորսկայա փողոցի վրա: Նաբոկովների երեխաներին դաստիարակում էին անգլիական ձևով, և Քերոլի հեքիաթն անվերապահորեն մտնում էր մանկական ընթերցանության շրջանակ: «Ալիսը» թանկ էր Քերոլին նաև որպես մանկության քաղցր հուշ (Набоков 1988):

Նաբոկովի թարգմանության մեջ կան նաև այլ ակնհայտ փոփոխություններ: Այսպես, Քերոլի պատմության գլխավոր կերպարներից մեկը՝ Ճագարը, ռուսերեն տեքստում ձեռք է բերում Кролик Трусиков անունը: Վերջինիս Փեթ և Բիլ ծառաները վերանվանվում են Петька և Яшка (Кэрролл 1989: 53; 58; 60).

Հետաքրքրական մի փաստ. Քերոլի ու Նաբոկովի որոշ հետազոտողներ անգամ ենթադրում են, որ Քերոլի վեպը խթանել է հետագայում «Լոլիտայի» ստեղծմանը: Եթե համաձայնենք այս ենթադրության հետ, հնարավոր կլինի «Լոլիտա» վեպը դիտել որպես Ալիսի միջմշակութային փոխակերպման օրինակ (Будур 2005:18):

Գեղարվեստական տեքստի յուրատիպ մեկնություն է նրա նկարազարդ տարբերակը: Ալիսի պարագայում առավել հայտնի են Ջոն Թենիելի և հենց Քերոլի նկարազարդումները: Իսկ Ալիսի պատմության առանձին տարրեր՝ դրվագներ, կերպարներ, հագուստի պարագաներ, պարբերաբար դառնում են նորաձևության հավաքածուների, լուսանկարչական փորձերի առարկա: Այսպես, Պավել Կապլևիչը ստեղծել է լուսանկարչական մի «բեմադրություն», ուր անձամբ կատարում է Ճագարի դերը. լուսանկարի միջավայրը մասնակիորեն հիշեցնում է Քերոլի պատմության համատեքստը (Каплевич 2004):

Քերոլի հեքիաթի որոշ տարրեր երբեմն հայտնվում են բարձր նորաձևության դաշտում: Այսպես, իտալական *Corneliani* նորաձևության տունն իր բաճկոններից մեկը ցուցադրել էր ճագարի գլխով «մոդելի» հագին, ինչը քողարկված անդրադարձ է Քերոլի հայտնի կերպարին (Esquire 2006):

2007–ին Մոսկվայում բացվեց «Գաղտնի պարտեզ» նորաձևության սրահը: Նախաձեռնողների ցանկությունն էր, որպեսզի սրահը, ինչպես նաև վերջինիս անվանումը, հնարավորինս հիշեցներ «Ալիսը հայելու հետևում» հեքիաթի «Կենդանի ծաղիկների պարտեզը»: Հետաքրքրական է, սակայն, որ անվանումն ավելի ակնհայտ անդրադարձ է անգլիացի նշանավոր մանկագիր Ֆրենսիս Հոջսոն Բերնեթի «Գաղտնի պարտեզը» վիպակին, թեև պատվիրատուները կարող էին անտեսել կամ պարզապես իրազեկված չլինել տեքստային այս առնչությանը:

Ալիսից առանձին դրվագներ և պատկերներ են թափանցել նաև սննդի արտադրություն՝ հրուշակեղենի ու թեյի փաթեթավորման ոլորտ: Թեմատիկ առումով առանձնապես հարմար դրվագ է «Ալիսի» «Խելագար թեյըմպում» գլուխը: Անգլիական *Warren Ford of London* ֆիրման *Earl Grey Tea* տեսակի թեյի համար գործածում է թիթեղյա տուփեր, որոնց չորս նիստերին դաջված են «Ալիսի» չորս դրվագների պատկերներ՝ համապատասխան տեքստային հղումներով: Տուփի կափարիչին՝ սուրհանդակ Ճագարի գլխավերևում և ոտնատակին, մեջբերված է Ալիսից մի նախադասություն. *“It’s always tea time”* (Միշտ էլ թեյի ժամ է):

Գրական իրողությունների թափանցումը ոչ գրական ոլորտ կարելի է բացատրել արդարացի մի ձգտումով՝ հենվել գրական մեծ երկերում ամփոփված բարոյական ու գեղարվեստական հիմնարար արժեքների վրա: Անժխտելի է նաև, որ գրական երկի՝ առևտրային ոլորտ հայտնվելը նպաստում է նրա հանրաճանաչության աճին:

Անդրադառնանք Գրիմ եղբայրների «Հենզելն ու Գրետելը» հեքիաթի հայերեն մի թարգմանությանը, որն այսօր հայտնի է ընթերցողների շատ նեղ շրջանակի: Հայերեն տարբերակը, որ կոչվում է «Օնիկը և Մարգարիտը», գերմաներենից թարգմանել է Տիրուհի Կոստանյանցը: Այն տպագրվել է 1897թ. Թիֆլիսում՝ Մ. Շարաձեի տպարանում.

Լինում է, չէ լինում, մեկ փայտ կտրող է լինում: Նա ապրում էր մի մեծ անտառի առաջ իր կնոջ և իր երկու երեխաների հետ միասին: Նորա տղայի անունն էր Օնիկ, իսկ աղջկանը Մարգարիտ: Նա աշխատանք քիչ ուներ և մեկ անգամ, երբ այդ երկրում շատ թանկություն ընկավ, մինչև անգամ օրական հաց չէր կարողանում ձեռք բերել (Գրիմ 1897, 3):

Հնարավոր է՝ թարգմանչի համար առաջնային խնդիր է եղել գերմանական հեքիաթին հայկական ազգային ոգի հաղորդելը՝ հնարավորինս մոտեցնելով և հարազատ դարձնելով այն հայ մանուկների ճաշակին: Նման մոտեցման դեպքում Գրիմների հայացման խնդիրն ավելի է կարևորվում, քան համարժեք թարգմանութան հարցը: Չի բացառվում նաև Մարթա Ռոբերի ֆրանսերեն թարգմանության ազդեցությունը՝ *Jeannot et Margot*, թեև դեռ չի հաջողվել ճշտել վերջինիս հրատարակման թիվը: Նշված անուններն ակնհայտ ընդհանրություն ունեն Կոստանյանցի տարբերակի հերոսների անձնանունների (Օնիկ և Մարգարիտ) հետ:

Նման փոխակերպումները սակավադեպ չեն հեքիաթի թարգմանության պատմության մեջ: Նույն Գրիմ եղբայրների «Ձյունանույշը» հեքիաթի ռուսերեն վաղ թարգմանություններից մեկում, որ կատարել է Պ. Պոլեվոյը, գլխավոր կերպարը հանդես է գալիս որպես *Снегурочка*՝ Ձյունե դիցուհի, Ձյունանույշ: Սնեգուրոչկա անվանումը շարունակում է պահպանվել նաև ավելի ուշ թարգմանություններում, օրինակ, Գ. Պետնիկովի տարբերակում (Гримм 2005):

Ռուսական տեքստերում հերոսուհու անվան մեջ տեղ են գտել իմաստային էական փոփոխություններ. հողեղեն մանուկը փոխակերպված է ձյունից ծնված

գերբնական էակի՝ Չյունանույշի: Գրիմ եղբայրների հերոսուհին ձյան պես սպիտակ է: Ռուսական հեքիաթների Սնեգուրոչկան՝ Չյունանույշը, տառացիորեն ծնվում՝ արարվում է ձյունից՝ անշունչից շնչավորի փոխակերպման, ձյան մարդացման շնորհիվ:

Հերոսուհու նման անվանափոխությունը կարելի է բացատրել թարգմանչի միտումով՝ հեքիաթին հաղորդել տեղական՝ ռուսական երանգավորում՝ գերմանական հեքիաթի պերսոնաժներին հարմարեցնելով ռուսական գերբնական կերպարների միջավայրին: 1898թ. ռուսական հրատարակության առաջաբանում Պ. Պոլեվոյը գրում է, որ Գրիմ եղբայրների հեքիաթները համարժեք թարգմանելու համար անհրաժեշտ է ոչ միայն լավ տիրապետել գերմաներենին ու նրա բարբառներին, այլև իմանալ ռուսական հեքիաթը, ինչը թարգմանչի համոզմամբ՝ զարմանալի ընդհանրություններ ունի գերմանական հեքիաթի հետ (Гримм 1893, xii):

Անտարակույս, անունների նման շփոթն ունի նաև առավել օբյեկտիվ, հնարավոր է, ոչ ամբողջովին գիտակցված հիմնավորում: Ինչպես ռուսական դիցաբանական պերսոնաժի, այնպես էլ գերմանական հեքիաթի հերոսուհու մոտ պահպանված են հին հավատքներից մնացած մեռնող ու հառնող աստվածներին բնորոշող տարրեր. այս համանմանությունը, սակայն, արդարացվում է սոսկ ծագումնաբանական տեսանկյունից, մինչդեռ տեքստային ու իմաստային մակարդակներում նրանց նույնացումը ցանկալի չէ:

Համեմատության համար նշենք, որ Ու. Դիսնեյի տարբերակի հայկական առաջին թարգմանությունը ճիշտ այդպիսի փոխակերպման նմուշ է. ձյան պես սպիտակ աղջիկը դառնում է Չյունանույշ, որ փոխառություն է ռուսական դիցաբանությունից: Չյունանույշը ձյան փերի է, ոգի, ռուսական Սնեգուրոչկայի հաջողված համարժեքը և ամենևին էլ ոչ ձյան նման սպիտակ աղջիկ:

Այսպիսով, գրական երկերը կարող են հարատևել՝ անցնելով փոխակերպման փուլ՝ կրկին ու կրկին շրջանառության մեջ դրվելով թարգմանության, փոխադրության, վերապատումների, նկարազարդման կամ էկրանավորման միջոցով: Այս անդրադարձներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես ելակետային տեքստի ուրույն մեկնություն, որի հետևանքով սկզբնաղբյուրը ենթարկվում է կառուցվածքային, իմաստային, ոճական, գործառութային և համատեքստային փոփոխությունների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գրիմ Յ. և Վ.** (1897), *«Օնիկը և Մարգարիտը»,* թարգմ.՝ Տիրուհի Կոստանյանցի, Թիֆլիս,1897, Մ. Շարաձեի տպարան:
2. **Baum, L. F.** (2008). *The Wonderful Wizard of Oz*. Oxford University Press.
3. **Baum, F.** (2000). *The Wizard of Oz*. Adapted by Rosemary Border. Oxford Bookworm Library.
4. **Burnett, F. H.** (2004). *The Secret Garden*. London: Collector's Library.
5. **Grimm, J. et W. Grimm.** (1976). Jeannot et Margot. Trad. de Marthe Robert // Grimm. *Contes*. Paris: Gallimard.
6. **Carroll, L.** (2002). *Through the Looking Glass*. M.: Raduga.
7. **Carroll, L.** (2000). *Alice's Adventures in Wonderland.* Adaped by Jennifer Bassett. Oxford University Press.
8. **Carroll L.** (2000). *Through the Looking Glass*. Oxford University Press. Retold by Jennifer Bassett.
9. **Esquire** (2006). Декабрь, с. 253.
10. **Vogue** (2008). Декабрь, с. 210.
11. V**ogue–Россия.** 2009. Март. с. 66.
12. **Будур, Н.** ред. (2005). *Сказочная энциклопедия*. М.: Олма–Пресс.
13. **Гримм, Вильгельм и Якоб.** (2005). *Сказки* (пер. Г. Петникова). М.: Эксмо.
14. **Каплевич, П.** (2004). // *AD Architectural Digest*. N 12.
15. **Кэрролл, Л.** (1989). *Аня в стране чудес*. Пер. В. Набокова. Л.: Детская литература.
16. **Набоков, В.** (1988). *Другие берега.* М.: Художественная литература.
17. **Полевой П. Н.** (1893). Предисловие// Гримм Вильгельм и Якоб. Сказки братьев Гримм, Санкт-Петербург: Изд. А.Ф. Маркса.

Alvard Jivanyan

INTRACULTURAL AND CROSSCULTURAL TRANSFORMATIONS OF CHILDREN'S FICTION

Summary

The article focuses on the variety of modifications, which take place inevitably when a children's story appears in different settings: translation, illustration, film adaptation, simplified or abridged versions, high fashion and even sweet industry. The changes happening in each of the mentioned milieu are of different nature: semantic, structural, stylistic and functional. The mentioned changes can be grouped as intracultural and cross-cultural. The examples considered are taken from classic fairy tales and children's literature.

ГОАР МЕЛИКЯН

О РОЛИ СМЕХА В СКАЗКАХ ДЛЯ ДЕТЕЙ

Всего много, все есть, чего душа хочет; а никогда она не улыбалась, никогда не смеялась, словно сердце ее ничему не радовалось.

Несмеяна-царевна

Современные исследования стали уделять больше внимания вопросам детства и их отражению в детской литературе и фольклоре. Исследования показывают, что мир детства чрезвычайно сложное явление, требующее междисциплинарного подхода.

Смех – один из универсалий человеческой природы. Смех рассматривается нами как способ самовыражения и познания детьми себя и окружающий мир, как средство коммуникации и придания детям хорошего настроения. Ведь в сказках для детей смех является одним из организующих составных коммуникации, обеспечивающих понимание и восприятие текста.

На наш взгляд, детская смеховая культура сводится к сущности образной концепции смеховой культуры, раскрытой М.М. Бахтиным. Она заключается, во-первых, в трактовке художественного мира (в нем устанавливаются связи особого типа, в основе которых лежит отступление от социальных и моральных норм и правил); во-вторых, в трактовке художественного образа, носителя амбивалентных начал, в-третьих, в характере их восприятия (Бахтин 1990).

М. М. Бахтин подчеркивает, что для ренессансной теории смеха характерно именно признание за смехом положительного, возрождающего, творческого значения, что резко отличает ее от последующих теорий и философий смеха до бергсоновской включительно, выдвигающих в смехе преимущественно его отрицательные функции (Бахтин 1990).

Смех как грань сознания и поведения человека, является выражением жизнерадостности, искренней веселости, душевного наслаждения, жизненных сил и прилива энергии, и при этом – неотъемлемым звеном доброжелательного общения. Известно, что уже у первобытных народов смех символизировал «дружественную и добрую компанию». Подобный смех тесными узами связан с непринужденным, доверительным общением (Хализев 2005: 86).

В составе художественного творчества чрезвычайно важна его коммуникативная сторона. «Хорошая шутка нуждается в слушателе; цель ее – не только обойти запрет, но и подкупить этого слушателя, подкупить смехом, создать в смеющемся союзника» (Фрейд 2006: 157). Пожалуй, самое замечательное качество смеха – его несравненная способность объединять людей (Козинцев 2007: 6). Это чувство особенно важно для детей, поскольку человек, рассмешивший его, несомненно, станет ему родным, и ребенок будет доверять ему.

Наибольший интерес к сказкам проявляют дети в возрасте от 3 до 7 лет. Р. Киплинг в автобиографической книге «Кое-что о себе для моих друзей, знакомых и незнакомых» *(Something of Myself)* заметил: «Расскажите мне о первых шести годах жизни ребенка, и я расскажу вам все остальное» (Kipling 1999: 1). Особенность этого детского возраста заключается в том, что мышление ребёнка становится наглядно-образным, иными словами у ребёнка складывается именно сказочно-мифологическое мышление – характеристикой которого является опора на представления и образы. Очень важная особенность образного мышления – установление непривычных, невероятных сочетаний предметов и их свойств, что отражают большинство сказок.

Сказки-небылицы, перевертыши – часто вызывают у детей смех. Нелепые строчки воспитывают в ребенке чувство юмора и помогают развить логику. Малыш, который недавно усвоил, что дом стоит, а собака лает, с восторгом слушает, что дом лает. Подобные алогические поступки являются элементами развлечения, сохранения жизнеутверждающего настроя ребенка в целом.

Хотя анализ сказок показывает, что сказки изначально не предназначались детям, однако благодаря своей трансформабельности и доступности сегодня они являются одним из самых важных достояний детской литературы. Ярким примером может послужить русская народная сказка о Несмеяне царевне, где алогические поступки

вызывают смех царевны. Эта сказка сегодня весьма популярна в детском фольклоре, однако, фундаментальная работа В.Я. Проппа «Проблемы комизма и смеха. Ритуальный смех в фольклоре» доказывает обрядовую функцию смеховой традиции в вышеупомянутой сказке и в фольклоре в целом (Пропп 2005) (1).

Язык сказки доступен для понимания и устного усвоения. В сказках для детей часто встречается юмористическое отношение к жизни, к проблемам, к персонажам. Е. Масленникова выделяет несколько видов смеха в русской народной сказке. Это сказки о животных, и волшебные сказки, богатырские и бытовые, сатирические и докучные сказки, страшилки, небылицы, присказки, прибаутки. В каждом из этих видов сказки встречается свое особое отношение к смеху и к юмору. Сказки-былины, волшебные и богатырские сказки наиболее архаичны, в них в большей степени можно встретить сюжеты, берущие свое начало в славянской мифологии. Совершенно иные юмористические приемы и функции смеха в сатирических и бытовых сказках, сказках о животных и сказках-страшилках (Масленникова 2002).

Особый интерес для детей представляют сказки, относящиеся к жанру *нонсенс*, которые содержат элементы комизма и вызывают смех. Вслед за А. Дживанян подобные сказки можно охарактеризовать как алогические (Дживанян 1991). Хотя эти сказки являются «бессмысленными», они помогают устанавливать правильный тон для дальнейшего повествования. Так, появление алогических образований в сказке может мотивироваться желанием привлечь внимания слушателей к повествованию.

Безусловно, фольклорные сказки привлекают внимание и необычайностью повествования, однако алогические образования, функционирующие в его составе, благодаря своей неординарной структуре, создают эффект комичности. Одна из важнейших функций подобных сказок – вызвать смех слушателей. Эффект развлечения достигается за счет нелепости и комичности зачина. Переворачивание предметов и действий, нарушение логических последовательностей, пространственно временных отношений, изменение функций субъекта и объекта – которые являются структурообразующими элементами сказок-небылиц, закрепляются в художественном сознании ребенка. Интересно что, только убежденность в правильных логических отношениях ведет ребенка в «комический мир всеобщего беспорядка» (Лифшиц 1973: 152).

В числе юмористических сказок британской фольклорной традиции особенно популярны так называемые сказки о глупцах «Умники из Готтема» *(The Wise Men of Gotham)* (2). Они пользуются большой популярностью у детей. Об «алогических» проделках умников из Готтема находим стишок в английском сборнике «Мелодии Матушки Гусыни» (1760):

Three wise men of Gotham
Went to sea in a bowl;
If the bowl had been stronger
My song had been longer.
(Mother Goose 2003: 114).

Три мудреца в одном тазу
Пустились по морю в грозу.
Будь попрочнее
Старый таз,
Длинее
Был бы мой рассказ.
(Mother Goose 2003: 250).

Аналогичный текст функционирует в качестве присказки к самой сказке «Умники из Готтема» в сборнике «Фольклорные сказки Британских островов». Здесь тоже очевидны характерные элементы нонсенса:

Tell me no more of Gotham Fools,
Or of their eels in little pools,
Which they were told were drowning;
Nor of their carts drawn up on high
When King John's men were standing by,
To keep a wood from browning.
(Folk Tales of the British Isles. 1987: 114).

Абсурдные действия глупцов приводят к серьезным последствиям, но в этих сказках главный акцент делается на самой природе глупцов, как бы иллюстрируемой их поступками, а не на сюжете.

Алогические тексты действуют по совершенно иной *грамматике поведения*, иной логике поступков. Вопрос в том, как воспринимают ее окружающие. Такой алогический зачин сообщает слушателям и читателям, что сказка принадлежит к жанру *сказок о глупцах (fools' tales),* чем и готовит слушателей к последующему повествованию, к восприятию любых несуразиц, которые могут быть описаны в тексте. Подобное начало повествования приводит в восторг маленьких слушателей: они сразу же сосредотачиваются и приковывают внимание на сказителе.

Функция подобного начала повествования – создать особый настрой. Можно предположить, что в данном случае стихотворная форма используется для привлечения внимания слушателей. В приведенном примере рифмовка созвучных слов, у которых совпадают конечные звуки *fools – pools, drowning – browning, high – by,* выполняет композиционно звуковую функцию, стилистически «правильно» организовывает речь. Ведь известно, что частое употребление различных созвучий – рифмовок, аллитераций, ассонансов делают восприятие повествования на слух более приятным, и они чрезвычайно нравятся маленьким детям, демонстрируя глубокое проникновение в детскую психологию. Это приемы рассказчика, при помощи которых он воздействует на слушателя. Они имеют цель придать мелодичность высказыванию и создать необходимую атмосферу коммуникативного сотрудничества. В данном примере наблюдается «алогичная рифма», так как рифмуются случайные, не связанные по смыслу слова. Алогичность фрагмента осуществляется на когнитивном уровне. Перечисление алогичных поступков в нашем примере выступает как поэтическое средство описания явлений и поступков, содержащих элементы нонсенса. Перечисление выглядит как цепочка однородных членов с их последующими действиями, соединенными союзной связью *or of their eels in little pools, nor of their carts drawn up on high.* Зачин уникален тем, что рассказчик намеренно говорит от имени слушателей, которые якобы не хотят больше слышать о глупцах из Готтема. Возможно, он делает это из чувства повествовательной солидарности.

В. Я. Пропп не согласен с мнением исследователей, считающих, будто подобные сказки имеют сознательную сатирическую направленность и преследуют цель активной борьбы с глупостью (Пропп 2006: 101).

Смеясь, человек невольно сравнивает того, над кем смеется, с самим собой, и у себя этих недостатков не предполагает. Такое объяснение впервые было дано Т. Гоббсом. Он искал причину удовольствия от комического в чувстве нашего превосходства над слабостями того, кто осмеивается. Н. Г. Чернышевский заметил: «Смеясь над глупцом, я в это время кажусь себе много выше его. Комическое побуждает в нас чувство собственного достоинства» (Чернышевский 1949: 194).

Сюжет следующей, ирландской, сказки «Батрак и фермер» сам по себе не содержит элементы нонсенса. Алогическим является только первый зачин, который можно рассматривать отдельно, поскольку он не связан с текстом сказки:

> *Long ago, and a long time it was. If I were there then I wouldn't be there now. If I were there then and now, I would have a new story or an old story, or I would have no story at all. In any case, however well off I am tonight, may ye not be half so well off tomorrow night. Well, the sons and daughters of some of the smaller farmers and the labourers around here used to go down The County Limerick working as servant boys and girls (Folk Tales of the British Isles. 1987: 257).*

Функция подобного начала повествования – вызвать смех слушателя, привести его в замешательство, настроить слушателя на комический лад. Между рассказчиком и слушателями налаживаются хорошие отношения с начала повествования, и они притягивают слушателя. Такие зачины особенно нравятся детям, поскольку этот пример ярко демонстрирует нарушение пространственно-временных отношений, создание обратной координации. Рассказчик описывает неопределенное, нереальное время, таким образом путая слушателя, смешивая описание нереального сказочного времени с неопределенным временем, когда он слышал сказку. Естественный ход повествования, в частности, традиционная формула *long ago* ломается, образуется пробел, и рассказчик неожиданно представляет свою личность. Формула *long ago*, при помощи которой дана неопределенная временная установка и цель которой – настроить слушателя, перенести его в возможный сказочный мир, перебивается, и впе-

ред выступает образ рассказчика. Здесь проиллюстрировано несоответствие грамматического и смыслового движения речи. Рассказчик применяет прием алогического параллелизма. Сопоставление реального и нереального времени *If I were there then I wouldn't be there now. If I were there then and now*…., противопоставление реального и возможного миров становится своего рода риторической «игрой» рассказчика. Сочетание структурного параллелизма и логического нарушения создает комический эффект. Ребенок путается в реальности рассказчика, возможно полагая, что он живет «со стародавних времен». С одной стороны, рассказчик готовит ребенка к «погружению» в возможный мир, а с другой – представляет себя и внушает ребенку, что он часть реального мира. Хотя рассказчик не нарушает синтаксические правила построения предложений, его речь экспрессивна именно из-за нелогичности, абсурдности и отсутствия ясности мысли.

За художественным миром нонсенса стоят важные психологические константы (переживание предмета, пространства, времени), которые создают в воображении детей особые образы. Они, по выражению К. Юнга, обладают *психической энергией* и имеют опору в коллективном бессознательном (Юнг 1991: 99). Так, алогические элементы в сказке рассматриваются как психическое явление, выражающее насущную потребность ребенка в юморе (там же).

Многие исследователи, соглашались, что тема смеха оказывается «заветной», то есть одновременно приятной и трудно достижимой. С развитием ребенка смех тоже развивается, естественно, вместе с ним (не избежав влияния окружающего мира). Младенческая улыбка загадочна и символична. Смех взрослого отличается от смеха ребенка. Однако в фольклоре, в сказках в частности, действует единая грамматика смеха, способная рассмешить и детей и взрослых.

ПРИМЕЧАНИЯ

1. В. Я. Пропп рассматривает смех как понятие — проявляющееся не во внешних формах и способах создания комического эффекта, а как отношение к социальному явлению. В анализируемой В.Я. Проппом сказке о Несмеяне, проявляется отношение к смеху, как к ритуальному действию. В.Я. Пропп приходит к выводу, что Несмеяна является продолжением образа рождающейся и умираю-

щей богини плодородия, от улыбки или смеха которой распускаются цветы и природа оживает для плодоношения. Смех в данном случае символизирует живительную и рождающую силу природы и богини плодородия, которую «изображает» Несмеяна (Пропп 2005). Этот пример показывает, что корни смеха уходят вглубь веков, и что смех в древности выполнял ритуальную функцию. М.М. Бахтин считает, что в догосударственный период развития общества смеховые обряды стояли наравне с серьезными, были настолько же «официальны», он делает вывод о существовании «двумирности» в жизни народа, серьезного и сатирического миров, не умаляя значения ни одного, ни другого (Бахтин 1990).

2. В истории фольклористики сказки о глупцах из Готтема входят в особую группу сказок о «глупых» жителях определенной местности. У армян сказки об апаранцах, у русских – о пошехонцах, у болгар – о габровцах, у шведов – о жителях местечка Седерталь близ Стокгольма, у финнов героями подобных сказок были обитатели Хеме и т. д.

ЛИТЕРАТУРА

1. **Бахтин, М. М.** (1990). *Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса.* Москва: Художественная литература.
2. **Дживанян, А. А.** (1991). *Лингвистические и логикокогнитивные параметры алогических образований в художественном тексте.* Диссертация на соискание уч. степени к.ф.н., Москва.
3. **Козинцев, А. Г.** (2007). *Человек и смех.* Санкт-Петербург: Алетейя.
4. **Лифшиц, М. А.** (1973). Критические заметки к современной теории мифа.// *Вопросы философии*, N 8.
5. **Масленникова, Е.** (2002). Смех и юмор в русской народной сказке. //*Конференция «История в XXI веке: историко-антропологический подход в преподавании и изучении истории человечества».* // конф. РУДН. http://www.auditorium.ru/aud/v/index.php.
6. **Пропп, В. Я.** (2005). *Проблемы комизма и смеха. Ритуальный смех в фольклоре.* Москва: Лабиринт.
7. **Фрейд, З.** (2006). Остроумие и его отношение к бессознательному. *// Я и Оно*. Москва: Эксмо.
8. **Хализев, В. Е.** (2005). *Теория литературы*. Москва: Высшая школа.
10. **Чернышевский, Н. Г.** (1949). Возвышенное и комическое. //*Полное собрание сочинений*. Т. II. Москва: Художественная литература.
11. **Юнг, К. Г.** (1991). *Архетип и символ.* Москва: Ренессанс.
12. **Kipling, Rudyard** (1994). *Just So Stories.* Penguin Books.
13. ***Mother Goose Rhymes*** (2003). Comp. by K. Atarova. Пер. русских текстов С. Маршака и др. Moscow: Raduga Publishers.
14. ***Folk-Tales of the British Isles*** (1987). Comp. by J. Riordan. Moscow: Raduga Publishers.

Gohar Melikyan

THE ROLE OF LAUGHTER IN CHILDREN'S TALES

Summary

Recent years have shown obvious interest upon problems of childhood and their representation in folklore and children's literature. The multidisciplinary approach to the issue definitely sheds light on the problem. Laughter is one of the unique phenomena of human nature. It is a means of children's self-expression, self-discovery and communication. The paper focuses on laughter as a unique device of text organization in children's lore. Laughter is a key notion in many fairy tales. It is used as a signal for being part of a group and signals positive interactions with others. When shared, laughter binds the child and the storyteller together and increases the child's intimacy with the teller. Child's mentality is visual and figurative. The most important feature of figurative thinking is the establishment of unusual and extraordinary relations of objects and their properties found in nonsense tales for children. The lack of reason in nonsense stories helps to develop children's logic and sense of humour.

ЛУСИНЕ ТОВМАСЯН

СТИЛИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ОБРАЗА ЧЕШИРСКОГО КОТА В СВЕТЕ ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТИ

В 1864 году Л. Кэрролл написал знаменитое произведение «Алиса в Стране Чудес», а шесть лет спустя — сказку «Алиса в Зазеркалье».

В статье «Льюис Кэрролл» Г. К. Честертон пишет, что для любого образованного англичанина «Алиса в Стране Чудес» — классика, а это значит, что люди превозносят это произведение, ставят его рядом с творениями Мильтона и Драйдена (Кэрролл 1982: 3).

По мнению Ф. Дж. Харви Дартона, виднейшего исследователя английских детских книг, «сказки Кэрролла, — произведения новаторские, совершившие подлинный революционный переворот» (Darton 1970: 268) в английской детской литературе.

Однако, как отмечает Н. М. Демурова, сказки Л. Кэрролла нельзя считать произведениями лишь детской литературы. Сказочные образы, созданные писателем, непрестанно проникают во взрослую литературу, английские словари обогащаются кэрролловскими неологизмами, виднейшие писатели и критики занимаются исследованием его творчества. Чтобы нагляднее представить сказки Л. Кэрролла, следует отметить, что в англоязычных странах они «занимают одно из первых мест по количеству упоминаний, цитат и ссылок, уступая лишь Библии и Шекспиру» (Демурова 1991: 2). «Происходит «втягивание» двух небольших детских сказок в серьезную литературу, взрослую классику» (Gardner 1967: 22).

Г. К. Честертон считает «Приключения Алисы в Стране Чудес» сказкой для детей, но не сказкой о детях (Кэрролл 1982: 7). «Кэрролл всего лишь играл в Логичес-

кую Игру; его великим достижением было то, что игра эта была новой и бессмысленной, и к тому же одной из лучших в мире» (там же).

По мнению Н. М. Демуровой сказки Л. Кэрролла раскрывают характер их создателя, а порой они выходят за рамки субъективных намерений самого автора (Демурова 1991: 3). Осознавая это, Л. Кэрролл заметил: «Слова, как вы знаете, означают больше того, что мы имеем в виду, пользуясь ими, а потому целая книга означает, вероятно, гораздо больше того, что имел в виду писатель» (Gardner 1967: 22).

В предстоящей статье проведем небольшое лингвистическое исследование в области интертекстуальности, которая на сегодняшний день выступает одним из актуальных направлений в изучении текста сказки. Мы попытаемся дать стилистическую характеристику образа Чеширского Кота из сказки «Алиса в Стране Чудес» с учетом интертекстуальных отношений с другими сказками, в частности с фольклорными.

На протяжении сказок Л. Кэрролла о приключениях Алисы неоднократно выступает образ кота. Причем образ кота играет существенную роль в организации повествования. Сказки Л. Кэрролла являются сказками-снами. Именно введение образа кота является одним из способов создания атмосферы сказочного сна. Приступим к рассмотрению текста сказки.

Так, в «Приключении Алисы в Стране Чудес» в первой же главе Алиса вспоминает кошку Дину:

> *There was nothing else to do, so Alice soon began talking again. "Dinah'll miss me very much to-night, I should think!" (Dinah was the cat.) "I hope they'll remember her saucer of milk at tea-time. Dinah my dear! I wish you were down here with me! There are no mice in the air, I'm afraid, but you might catch a bat, and that's very like a mouse, you know. But do cats eat bats, I wonder?" (Carroll 1939: 17).*

Обратим внимание на следующее обстоятельство: несмотря на то, что Алиса, падая в глубокий колодец, уже находится во сне, тем не менее введение образа кота будто заново вводит ее в сон:

And here Alice began to get rather sleepy, and went on saying to herself, in a dreamy sort of way, "Do cats eat bats? Do cats eat bats?" and sometimes, "Do bats eat cats?" for, you see, as she couldn't answer either question, it didn't much matter which way she put it (Carroll 1939: 18).

В последующих главах в мыслях Алисы продолжает витать кошка Дина. Плавая в озере слез и беседуя с мышью, она вновь вспоминает Дину, оскорбив при этом мышь. Несмотря на недоумение мыши, Алиса с любовью продолжает описывать свою кошку:

And yet I wish I could show you our cat Dinah: "I think you'd take a fancy to cats if you could only see her. She is such a dear quiet thing," Alice went on, half to herself, as she swam lazily about in the pool, "and she sits purring so nicely by the fire, licking her paws and washing her face – and she is such a nice soft thing to nurse – and she's such a capital one for catching mice – oh, I beg your pardon!" cried Alice again, or this time the Mouse was bristling all over, and she felt certain it must be really offended (Carroll 1939: 29).

В главе «Билль вылетает в трубу», будучи на побегушках у кролика, Алиса принялась выдумывать, будто вместо кролика Дина: *"How queer it seems,"* Alice said to herself, *"to be going messages for a rabbit! I suppose Dinah'll be sending me on messages next!"* (Carroll 1939: 38).

А теперь сосредоточим наше внимание на образе кота в сказке «Алиса в Зазеркалье». Эта сказка-сон также начинается с подробного описания Дины и ее котят. Беседуя с Китти, Алиса попадает в Зазеркальный мир:

Let's pretend there's a way of getting through into it, somehow, Kitty. Let's pretend the glass has got all soft like gauze, so that we can get through. Why, it's turning into a sort of mist now, I declare! It'll be easy enough to get through. And certainly the glass WAS beginning to melt away, just like a bright silvery mist.

In another moment Alice was through the glass, and had jumped lightly down into the Looking-glass room (Carroll 1939: 134-135).

В обеих сказках погружение Алисы в сон происходит через контакт с котами. Подобным же образом происходит и ее пробуждение в сказке «Алиса в Зазеркалье». Алиса трясет Черную Королеву, которая в ее руках превращается в котенка:

> *The Red Queen made no resistance whatever; only her face grew very small, and her eyes got large and green: and still, as Alice went on shaking her, she kept on growing shorter – and fatter – and softer – and rounder – and – and it really WAS a kitten, after all. (Carroll 1939: 246).*

Несмотря на то, что в ходе повествования сказки «Алиса в Зазкркалье» Алиса меньше упоминает кота, тем не менее, после пробуждения она говорит, что котенок был всегда с ней во время путешествия по Зазеркальной Стране, то есть в течение всего сна:

> "*Your majesty shouldn't purr so loud," Alice said, rubbing her eyes, and addressing the kitten, respectfully, yet with some severity. "You woke me out of oh! such a nice dream! And you've been along with me, Kitty – all through the Looking-Glass world. Did you know it, dear?" (Carroll 1939: 247).*

Круг замыкается: образом кота вводится сон, то есть начинается сказка, его образом и завершается сон (сказка).

> *The instant he said the word a tremendous blast of wind crashed in a board of the wall and swept the clothes off Diamond. Leaning over him was the large, beautiful, pale face of a woman. From her head streamed out her black hair in every direction so that the darkness in the hay-loft looked as if it was made of her. Her hair began to gather itself out of darkness and fell down all about her again, till her face looked out of the midst of it like a moon out of a cloud (MacDonald 1994: 19).*

In this episode the personage experiences intended metamorphosis to be close to the child's belief in the supernatural; the North Wind changes into a woman. On the one hand, it realizes through personification: an inanimate object, the north wind, is personified into a woman. On the other hand, the text suggests an implicit comparison, a simile: the blowing of the North wind is associated with the woman's streaming hair, which symbolizes freedom and power at the same time. With care the author prepares the reader for North wind's numerous alterations:

> *If you see me with my face all black, don't be frightened. If you see me flapping wings like a bat's, as big as the whole sky don't be frightened. ... Even if you see me looking in at people's windows like Mrs. Eve Dropper, the gardener's wife, you must believe I am doing my work. Nay, Diamond, if I change into a serpent or a tiger, you must not let go your hold of me, for my hand will never change in yours if you keep a good hold. If you keep good hold, you will know who I am all*

> *the time, even when you look at me and can't see me the least like the North Wind. I may look something awful (MacDonald 1994: 22).*

In the passage above, North Wind as if reveals herself; though her words seem simple, she says a little *more* than a child *can* understand. She stirs curiosity and wonder in the mind of little Diamond. Her speech sounds mysterious and significant and the reader becomes well aware of her mission.

> *She looked down at him and Diamond saw the loving eyes of the great lady beaming from the depths of her falling hair. And North wind was now tall as a full-grown girl. Her hair was flying about her head, and the wind blowing a breeze down the river. But she turned aside and went up a narrow lane, and as she went her hair fell down around her (MacDonald 1994: 42).*

Transformation here draws the reader's attention to North Wind's loving eyes full of maternal affection. *'The depth of her flowing hair'* signifies her mysterious nature. She possesses magic and power, and her next metamorphosis reveals her hidden wild essence, thus giving the story a powerful emotional charge: *"At the foot of the stair North wind stood still and Diamond, hearing a great growl, started in terror and there instead of North Wind was a huge wolf by his side"(MacDonald 1994: 43).*

In many cases MacDonald does not describe the process of metamorphosis and shows the personage already transformed as can be seen in the passage above. North Wind appears as a wolf. At first sight the reader gets the impression that she is a harmful malicious beast, but the wolf here is the symbol of an affectionate parent. In fact, in each stage of North Wind's metamorphosis there is a hint of wisdom. She does not eat small children as little Diamond fears, but needs the form of a giant female wolf to scare a drunken nursemaid, to punish her as she was calling the little child bad names. The transformation also shows the implicit identity of human and beast.

In her next metamorphosis North Wind appears as a tiniest creature speaking to Diamond in a gentle, merry childish voice. She is taking care of a bumble-bee, who flies out of one of the tulips:

> *And there was the tiniest creature sliding down the stem of the tulip. ... And, as she spoke, a moan of wind bent the tulip almost to the ground and the creature*

> *laid her hand on Diamond's shoulder. In a moment he knew it was North Wind (MacDonald 1994: 65).*

All the metamorphoses are really a certain kind of discovery revealing the unique fairy tale rhetoric, making the tale narrative expressive and beautiful, and disclosing facets of psychological and philosophical nature.

> *... there the form sat, like one of the great figure at the door of an Egyptian temple, motionless, with drooping arms and head. ... He was sure it was North Wind, but he thought she must be dead at last. Her face was white as snow, her eyes were blue as the air in the ice-cave, and her hair hung down straight, like icicles (MacDonald 1994: 117).*

In this scene North Wind changes into a motionless figure. Her metamorphosis is paralleled by a powerful interplay of metaphor and simile. On the one hand, the similarity of the North Wind to one of the figures at the door of the Egyptian temple reminds the reader of her power, on the other hand, the two similes expose her cold appearance: *"her face was white as the snow, her eyes were blue as the air in the ice-cave."*

When Diamond returns from her back North Wind turns into a humblebee, she changes into a minute creature to see if Diamond is brave without her support. Her intentional metamorphosis carries a hidden hint of wisdom. She wants to penetrate into Diamond's heart. Through different stages of metamorphosis the reader has to deal with different semantics. North Wind's power is unlimited; and her transformations call up strong contradictory emotions and associations:

> *She jumped from his shoulder, but when Diamond looked for her upon the ground, he could see nothing but a little spider, with long legs that made its way over the ice toward the south. ... And the spider grew and went faster and faster, till at once Diamond discovered that it was not a spider but a weasel. ... And the weasel grew and grew, till at once Diamond saw that weasel was not a weasel but a cat. ... But the next time he came up with the cat, the cat was not a cat but a hunting-leopard. ... And the hunting-leopard grew to a jaguar, all covered with spots like eyes. And the jaguar grew to a Bengal tiger and tiger flew over the snow in a straight line for the South, growing less and less to*

> *Diamond's eyes till it was only a black speck upon the whiteness, and then it vanished altogether (MacDonald 1994: 131).*

The quoted sequence of metamorphoses builds a distinctive narrative and poetic structure, thus contributing to the unique aesthetics of the tale. The passage is packed densely with metamorphoses. It is the summit of North Wind's transformations throughout the tale. From an *insect*, a harmless creature, she changes into animals of different sizes. With every new animal shape she becomes more and more powerful. Doubtless North Wind's disguises are often hierarchic. The choice of the animals reveals some logical sequence and gradation, a movement from a smallest insect to a powerful animal, the Bengal tiger. Of interest, most of the chosen animals: cat, leopard, jaguar and tiger are from the cat family. MacDonald seems to be relating cats to femininity, at the same time cats are associated with aloofness, pride, independence and beauty.

In the next episode the hair and the eyes become the central images. North Wind takes Diamond into her arms and dances with him. Affection towards the child turns out to be of vital importance:

> *To his unspeakable delight, he found his uplifted hands lying in those of North Wind's, who was dancing with him round and round the long bare room, her hair now falling to the floor, now filling the arched ceiling, her eyes shinning on him like thinking stars, and the sweetest of grand smiles playing breezily about her beautiful mouth. ... There she placed him on her lap and began to harsh him as if he were her own baby (MacDonald 1994: 371).*

The way North Wind appears causes a feeling of mystery and magic power. There is both light and darkness in this personage. This is how she explains her metamorphosis: "*I have to shape myself various ways to various people. But the heart of me is true. Sometimes people call me Bad Fortune, sometimes Evil Chance, sometimes Ruin."(MacDonald 1994:377).*

In the last part of the story North Wind appears making Diamond feel cold: at the finale of the tale Diamond dies, he goes to the back of the North Wind which is real paradise. Through the child's death MacDonald shows death is merely a second birth into a higher existence. And it is no wonder North Wind is a woman; death is seen as a female figure in many cultures.

MacDonald takes up the theme of metamorphosis in another fairy tale *The Princess and the Goblin*. Metamorphoses in this tale are unique in their own way. They too reveal both as rhetorical and narrative devices. Irene's great-great grandmother in the secret attic is the central image. The metamorphosis of the heroine does not entail change of shape; instead we find a flexible trope through which the author fills the reader with an almost inevitable feeling of wonder. Metamorphosis occurs with Irene's all-wise, all-knowing, all-loving great-great grandmother, who lives in a secret, mysterious place accessible only to those she chooses. She evokes a timeless mother figure that is always there when the child needs comfort or protection. Her metamorphoses possess rich symbolic meaning. This is how Princess Irene sees her for the first time:

> *Her hair was combed back from her forehead and face, and hung loose far down and all over her back. That is not much like an old lady-is it? Ah! But it was white almost as snow. And although her face was so smooth, her eyes looked so wise that you could not have helped seeing she must be old (MacDonald 1986: 17).*

Macdonald's detailed descriptions invoke amazing imagery. It is evident that great-great-grandmother has taken a kind of disguise. She is old and at the same time she is young. Her transformation aims at intensifying some inner qualities. She is shown spinning, an activity usually seen as an attribute of a wise old woman:

> *The princess opened the door, and entered. There was the moonlight streaming in at the window, and in the middle of the moonlight sat the old lady in her black dress with the white lace, and her silvery hair mingling with the moonlight, so that you could not have distinguished one from the other (MacDonald 1986: 76).*

She wears a black dress, indicative of her advanced age, whereas the white lace emphasizes her youth. Her silvery hair is interlocked with moonlight and an effect of perpetuity is created. The focus is again on hair, which changes its colour continually; a metaphoric relation is established between the hair and the silvery moon.

> *Her grandmother was dressed in the loveliest pale-blue velvet, over which her hair, no longer white but of a rich gold color streamed like a cataract,*

here falling in dull gathered heaps, there rushing away in smooth shining falls. As even as she looked, the hair streamed pouring down from her head, and vanishing in a golden mist ere it reached the floor. It flowed from under the edge of a circle of shining silver, set with alternated pearls and opals (MacDonald 1986: 96).

The black dress changes into blue velvet, showing her younger than before, the blue colour evoking a feeling of eternity and calmness. If in the previous passage her silver hair was mingled with the light of silvery moon, now her dress of blue velvet fits the blue sky. Great-great grandmother's hair is of rich gold colour, it is like a stream cataract, the shining beauty of nature that is pure and invincible. Metamorphosis of her hair colour can be viewed as an extension of simile; her hair bears resemblance to precious gold. Her old age means strength and beauty, mirth and courage. The soft moonlight and the milkiest pearl bring the child to the wonderful world of dreams and to fairyland.

Thus, in both tales metamorphosis figures as an individual feature of style closely linked both with the story line and the rhetoric, and should be estimated as the product of the author's unique style and unparalleled imagination. The attentive reading of metamorphosis provides a different and a deeper understanding of the fairy tale.

REFERENCES CITED

1. **Jivanyan, Alvard** (2007). *The Fairy tale as Archetext.* Yerevan: Zangak-97.
2. **MacDonald, George** (1994). *At The back of the North Wind*. Hertfordshire: Wordsworth Classics.
3. **MacDonald, George** (1986). *The Princess and the Goblin.* New York: Books of Wonder, William Morrow & Company.
4. **Mikkenon, Kai** (1996). Theories of Metamorphosis: from Metatrope to Textual Revision. // *Style.* Vol. 30, N 2, pp.1-20.
5. **Todorov, Tzvetan** (1975). *The Fantastic: a Structural Approach to a Literary Genre.* New York: Cornell University Press.

Դիանա Հայրոյան

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՃԱԿԱՆ ՈՒ ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՀՆԱՐ ՋՈՐՋ ՄԱԿԴՈՆԱԼԴԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Ամփոփում

Հոդվածի շրջանակներում փորձ է արվում ուսումնասիրել կերպարանափոխությունը որպես ոճական ու պատմողական հնար շոտլանդացի մանկագիր Ջորջ Մակդոնալդի հեքիաթներում: Տեսական նյութի ուսումնասիրության ու օրինակների վերլուծության շնորհիվ հնարավոր է դառնում կերպարանափոխությունը քննել տարբեր տեսանկյուններից: Արդյունքում կերպարանափոխությունը հնարավոր է դառնում բնութագրել թե՛ որպես ոճական, թե՛ որպես պատմողական հնար: Հաճախ այն հանդես է գալիս այլ ոճական հնարների, համեմատության, փոխանունության հետ զուգորդված: Այսպիսով, լայն կիրառություն ունենալով հեքիաթներում՝ կերպարանափոխությունն իր ուրույն տեղն է զբաղեցնում հրաշապատում ժանրերի ոճական հնարների շարքում: Առանձնահատուկ իմաստ հաղորդելով նկարագրվող իրադարձություններին՝ այն միաժամանակ բացահայտում է հեքիաթի ուրույն պոետիկան և նպաստում հեքիաթի տեքստի առավել խոր ընկալմանը:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

Bibliography

1. **Կարապետյան, Լյուդվիգ,** (2009), *Ոսկեդարից մինչև 21–րդ., հայ մանկապատանեկան գրականության ուրվագծեր,* 2 գրքով, Երևան, Ծիծեռնակ:


2. **Messenger Davies, Maire** (2010). *Children, Media and Culture.* Open University Press.

3. **Montgomery, Heather and Nicola J. Watson eds.** (2009). *Chidren's Literature: Classic Texts and Contemporary Trends.* Palgrave Macmillan. The Open Unversity Press.

4. **Rudd, David ed.** (2010). *The Routledge Companion to Children's Literature.* Routledge.

5. **Костюхина, Марина** (2008). *Золотое зеркало. Русская литература для детей XVIII-XIX веков.* Москва: О.Г.И.

ԳՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ



ՀՈՒՇԻԿ ԹԱՐԳՄԱՆԱՑ



ԳՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ

ԱՍՏՂԷ ԴՐԱՄ

(թարգմ. գերմաներենից՝ Տիրուհի Կուսպանյանցի առաջին տպ. Թիֆլիս, Մ. Շարաչեի տպարան)

Ապրում էր մէկ անգամ մի լաւ աղջիկ, որի հայրն ու մայրը մեռել էին և նա այնպէս աղքատ էր, որ չունէր ո՛չ մի անկիւն ապրելու և ո՛չ էլ անկողին քնելու համար: Ա՜խ, այդ աղջիկը ոչ մի բան չունէր, բացի իր հագի շորերից և բացի մի պստիկ կտոր հացից, որ մի բարեսիրտ մարդ տուել էր նորան:

Եւ որովհետև այդ լաւ ու հեզ աղջիկն այդպէս մոռացուած էր ամբողջ աշխարհից, նա իր յոյսը դնելով Աստուծոյ վերայ և վստահ քայլերով գնաց դուրս, դէպի դաշտ մի պատսպարան գտնելու:

Այդ ժամանակ նորան պատահեց մի աղքատ մարդ, որն ասաց՝ «ա՜խ, ես շատ քաղցած եմ. մի բան տո՛ւր ինձ ուտելու:» Աղջիկն իսկոյն մօտեցրեց նորան իր ունեցած հացը, ասելով՝ « թո՛ղ Աստուած քեզ օրհնէ.» և շարունակեց ճանապարհը:

Յետոյ եկաւ մէկ երեխայ, որը հառաչեց և ասաց՝ «գլուխս սաստիկ մրսում է. խնդրեմ ինձ մի բան ընծայիր»: Նոյն րոպէին աղջիկը հանեց գլխից իր գտակը և տուեց նորան: Եւ երբ նա մի քիչ ժամանակ էլ առաջ գնաց, նորից պատահեց մէկ ուրիշ երեխայի, որը վերնազգեստ չունէր և դողում էր ցրտից: Աղջիկը նորան էլ տուեց իր բաճկոնը: Երբ նա աւելի առաջ գնաց, տեսաւ մէկ ուրիշի, որը նորանից խնդրեց մէկ պարեգօտ: Աղջիկը նորան նոյնպէս չմերժեց և տուեց իր ունեցածը:

Վերջապէս, երբ նա հասաւ մէկ անտառ, արդէն մութն էր. այդտեղ դարձեալ նորան մօտեցաւ մեկը և խնդրեց նորանից մի շապիք: Աղջիկն ասաց ինքնիրան՝ «արդէն գիշեր է, ոչ ոք ինձ չի տեսնի, ես կարող եմ իմ շապիկս հանել». և հանելով իր շապիկը, տուեց այդ էլ նորան:

Եւ երբ նա այդպէս մերկ կանգնած էր անտառում և այլևս բոլորովին ոչինչ չունէր, այդ միջոցին յանկարծ աստղերն երկնքից վայր ընկան և բոլորը դառան չոր ու հարթ սպիտակ դրամ: Եւ նա իր վերջին շապիքն աղքատին ընծայելուն պէս, իսկոյն հագին ունեցաւ մէկ նորը, ամենանուրբ քաթանից:

Յետոյ նա այդ բոլոր փողերը հաւաքեց նոր ստացած շապիքի մէջ և իր ամբողջ կեանքում հարուստ ու երջանիկ մնաց:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՈԶՆԻՆ

(փոխադրությունը Վ. Քրումբախից՝ Պարույր Միքայելյանի
առաջին տպ. Երևան, Հայպետհրատ, 1960)

Ոզնին ուզեց բախտը փորձել,
Աշխարհով մեկ պտույտ գործել.
Դե որ աչքին բույնը նեղ էր,
Հո չէ՞ր մնա նստած տեղը:

Ինչքա՜ն լավ է շրջել հանդարտ,
Անցնել կանաչ դաշտ ու անտառ:
Գնաց Ոզնին, գնաց, գնաց,
Մի ծառի տակ նստեց հոգնած:

Բայց վեր թռավ հանկարծակի,
Քիչ էր մնում՝ լեղին ճաքի.
Ժանդարմ Աղվեսն իր մոտ կանչում
Եվ անձնագիր է պահանջում:

Թղթերի մեջ պակաս չկար,
Թե չէ գլխին փորձանք կգար:

Շունչ քաշելով թեթևացած՝
Ոզնին սարից իջնում է ցած:

Ահա ինչ–որ փոքրիկ քաղաք.
Չորս կողմը տուն ու աշտարակ:
Զանգի ղողանջ... ժամը տասին
Ոզնին հասավ մայր դարպասին:

«Հա՜ց, հա՜ց», փորն է աղաղակում,
Բայց ո՞վ կտա այս քաղաքում:
Հացթուխ Առնետն այնպե՜ս գոռաց.
– Դո՛ւրս, մուրացկա՛ն, կորի՛ր, ի՞նչ հաց:

Բայց լսելով այս աղմուկը,
Տնից ելավ օրհորդ Մուկը
Ու փող տվեց խոսքով քաղցր.
Դե նա գիտեր՝ ինչ է քաղցը:

Մի խանութ Ոզնին գնաց:
Երշիկի մեջ աչքը մնաց.
Շունը վրան դանակ քաշեց,
Իր խանութից հեռու քշեց:

Թափառում է Ոզնին տխուր:
Արջամկներն աղեկտուր
Երգ են ասում, երգ վշտալի:
Ոզնին վերջին փողն է տալիս:

* * *

Ա՛յ, սրան են այգի ասում.
Ի՜նչ խնձորներ սիրուն, հասուն:
Ո՞ր քաղցածը կդիմանա:
Ոզնին մտավ... Մարդ չիմանա՜:

Կերավ, փռվեց ծառի տակը,
Բայց այգեպան Նապաստակը
Նրան տեսավ: Նույն վայրկյանին
Վազեց, բերեց ոստիկանին:

Դահիճն եկավ՝ մահակն առած,
Տարավ Ոզնուն՝ ահից սառած.
«Գո՛ղ, – գոռում էր այդ անտաշը, –
Հիմա կեփեմ ես քո ճաշը»:

* * *

Ոզնին փակված մութ զնդանում
Միտք է անում ու վշտանում:
Ողջ ապրուստն է կողքին դրված՝
Մի աման ջուր, մի պատառ հաց:

Բայց հանգիստ չեն թողնում էլի.
Ոզնին բակը պիտի ավլի:
Չար հսկիչն է կանգնում կողքին.
Որ ամեն ինչ անի կարգին:

Բանտարկության ժամկետն անցավ:
Ոզնին ինչքա՜ն ուրախացավ.
Նորից պիտի ազա՜տ շնչի,
Նորից պիտի ազա՜տ շրջի:

* * *

Լողանում է վճիտ առվում,
Տաք ավազի վրա փռվում,
Արևկող է անում անվերջ՝
Առվի ափին, կանաչի մեջ:

* * *

Գնում է նա և իմանում.
Լեռան գլխին, ծառաստանում,
Կա մի ամրոց բարձր ու շքեղ,
Քեռորդին է ապրում այնտեղ:

* * *

Երեկո է: Ի՜նչ խավար է:
Մարդ կկորցնի ճանապարհը:
Թե Սկյուռը չտա խորհուրդ,
Ինչպե՞ս կանցնես անտառը մութ:

Բարձր, բարձր ժայռերի մեջ
Ամրոցն ահա հպարտ ու պերճ:
Ոզնին շուտով տեղ կհասնի:
Քիչ է մնում, արա՛գ, Ոզնի:

Տեղ է հասնում, փնչում է զոհ,
Զանգի լարն է քաշում ձեռքով:
Ի՜նչ գիշեր է: Շողն է լուսնի
Դեմքիդ վրա խաղում, Ոզնի:

Գորշուկն եկավ՝ քեռու որդին,
Ուրախացավ, սեղմեց սրտին,

Հետո Ոզնին՝ վայել ոզնուն,
Գլուխ տվեց տանտիրուհուն:

Ինչե՜ր, ինչե՜ր Ոզնին կերավ.
Համեղ ճաշեր, տապակած հավ:
Մի պահ թվաց, տանն է իրենց...
Ու սեղանը սրտանց օրհնեց:

Երբ ընթրում են ու կշտանում,
Հայտնի բան է, քունն է տանում:
Ուրախ ու գոհ Ոզնին արդեն
Անկողին է մտնում հարդե:

* * *

Լույսը բացվեց: Անուշ–անո՜ւշ
Ծխում են ու զրույց անում,
Եղանակն են գովում տարվա,
Նորություններ պատմում տարված:

Լայն պարսպից որդին քեռու
Ցույց է տալիս դաշտը հեռու:
Փոքրիկներն էլ երգում, ծափում,
Խնձորներ են ծառից թափում:

* * *

Հրաժեշտի սեղանն է բաց:
Ուտում, խմում են սրտաբաց:
Գինին Գորշուկն է պատրաստել,
Թունդ է գինին, ո՜նց է ազդել:

Հին ամրոցից իջնելով ցած,
Լի տոպրակը ուսին գցած՝
Ճանապարհորդ Ոզնին ահա
Նորից բռնեց ուղին անհայտ:

* * *

Կեսօր: Շոգը մարդ է վառում:
Ոզնին կանաչ, զով անտառում
Կերավ երշիկ, խմեց գինի:
Փայտփորը թե՝ «Անո՜ւշ լինի»:

Նոր էր Ոզնին ելել տեղից,
Երբ քիչ մնաց՝ ճաքեր լեղին.
Ուրախ երգը կիսատ մնաց...
Ովքե՞ր էին իր դեմ–դիմաց:

Ոզնին սոսկաց: Խե՜ղճ արարած:
Մթնեց աչքին աշխարհն արար:
Ո՞վ չի սոսկում, երբ անտառում
Ավազակներ են պաշարում:

Ոզնին չունի փրկվելու ճար.
Կզաքիսներ զինված ու չար...
Ամեն մեկը մի դահիճ է...
– Մե՜ղք եմ, – լսվեց Ոզնու ճիչը:

Վրա պրծան, որ շուտ խեղդեն:
Պաղ քրտինքն է հոսում արդեն,
Նա չի կարող նույնիսկ ճչալ...
Լավ է գտավ մի խոր փչակ:
Փնչոց լսվեց հենց այդ պահին:

Եվ պապանձվեց խումբը ահից.
Մի հսկա արջ նրանց տեսավ,
Բերանը բաց վրա հասավ:
Ծունկի եկած, շունչը պահած՝
Թաքստոցից Ոզնին ահա
Հետևում է Բրդոտ քեռուն,
Որից խումբն է փախչում հեռու:

Շո՛ւտ, ժամանակ զուր մի՛ կորցնի,
Արագ փախի՛ր, փրկվի՛ր, Ոզնի՛:
Եվ ականջը ձայնի պահած՝
Ոզնին ծլկեց սարսափահար:

Վազում է նա, հա՜ վազում է:
Խիտ անտառը նվազում է,
Հանկարծ բուն է կռնչում՝ «Ո՜ւ...»:
Ցամաքում է թուքը Ոզնու:

* * *

Վերջանում է անտառն արդեն:
Չորս կողմ կանա՜չ, կանա՜չ արտեր:
Բայց թե վատ է էլի մի բան.
Վարար գետն է փակել ճամփան:

Ի՞նչ կամուրջ է՝ մի հատ գերան,
Տակը հեղեղ փրփրաբերան:
Ոզնին քաջ–քաջ առաջ գնաց,
Բայց սայթաքեց ու ընկավ ցած:

Մի կերպ կախվեց հարթ գերանից
Ու թպրտաց... Խեղճն ի՞նչ անի.
Մահից մի մազ է բաժանում.
Բայց կուղբերն են վրա հասնում:
Կեռավոր ձողն առաջ տանում,
Ծորից բռնում, դուրս են հանում:
Ոզնու կյանքը փրկվեց: Հապա՜:
Ինչքա՜ն է նա երախտապարտ:

* * *

Ոզնին նստած զինետանը,
Պատմում է՝ ոնց եղավ բանը:
Գարեջուր են խմում փրփրուն,
Իրար մաղթում երջանկություն:

* * *

Գործից փախչի՞: Էլ ի՞նչ Ոզնի.
Աշակերտ է արդեն հյուսնի:
Նա ժրաջան կուղբերի հետ
Աշխատում է, դառնում վարպետ:
Շատ օրեր են գալիս, անցնում:
Ոզնին իր վարձն է ստանում,
Նորից ընկնում է ճանապարհ,
Որ թափառի, տեսնի աշխարհ:

* * *

Ով ազնիվ է, աշխատասեր,
Լավ կյանքի է միշտ էլ հասել:
Փողը Ոզնին ինչո՞ւ վատնի:
Խնայում է, որ չհատնի:

Հողամաս է Ոզնին փնտրում.
Իր համար լավ տեղ է ընտրում,
Որ տուն շինի, այգի գցի:
Մուկն է ծախում՝ մի գյուղացի:

* * *

Էլ ի՞նչ դադար, ի՞նչ հանգիստ քուն.
Լուսումութին ելնում իսկույն,
Սղոցում ու մեխում է նա,
Որ վերջապես տան տեր դառնա:

Հյուսնի գործը պրծավ–գնաց,
Եվ պատերն են պատրաստ կանգնած:
Ի՞նչ է մնում, որ էլ անի.
Մի կղմինդրե կարգին տանիք:

* * *

Այգու հողն էլ պետք է տանել,
Մարգեր սարքել, սերմեր ցանել.
Բակի կանաչ գորգի վրա
Թող ծաղիկներ էլ հուրհրան:

Բայց տխուր է ապրել մենակ:
Երկար փնտրում, գտնում է նա
Մի ոզնուհի՝ փոքրիկ, սիրուն:
Եվ դիմում է գեղեցկուհուն:

Մի՜կա, Մի՜կա, քա՜ղցր անուն...
Զրուցում են, մտերմանում:
Հետո Ոզնին մեր պատանի
Նվիրում է մի մատանի:

* * *

Այսօր նրանց հարսանիքն է:
Հյուրե՜ր, հյուրե՜ր. տունը լիքն է:
Պսակվում է վարպետ Ոզնին:
Նպատակին բարով հասնի:

* * *

Ապրում են հաշտ ու երջանիկ,
Դարձած խաղաղ մի ընտանիք:
Միշտ միասին, ուրախ ու գոհ
Առավոտից մինչ երեկո:
Իսկ երբ տարին եկավ, անցավ,
Ի՜նչ գանձի տեր Ոզնին դարձավ.
Աշխարհ եկան մի խումբ որդիք...
Մեծ բախտ չէ՞ սա, բարի՛ մարդիկ:

ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԻՍԱՀԱԿ ՋԻՆԳԵՐ

ՀԱՆԳԱԾ ԼՈՒՅՍԵՐ

(թարգմ. անգլերենից՝ Ալվարդ Ջիվանյանի)

Այդ տարվա ձմեռը սարսափելի էր: Ցերեկը գիշերվա նման մութ էր: Պողպատի պես սև ամպերը սողում էին երկնքով: Պատահում էր՝ կանայք խոհանոցից դուրս էին գալիս կեղտաջուրը թափելու և չէին հասցնում դույլերը դատարկել, որովհետև ջուրն իսկույն սառույց էր դառնում:

Այդ ձմեռ ամեն տարվա նման մոմերն օրհնեցին Հանուկահի առաջին գիշերը: Հանկարծ ինչ–որ տեղից քամի փչեց ու մոմերը հանգցրեց: Այսպես եղավ բոլոր տներում ճիշտ նույն ժամին: Մարդիկ նորից վառեցին մոմերը, բայց երբ կրկին քամի փչեց, ու մոմերը հանգան, նրանք խիստ զարմացան ու գնացին ռաբբիից խորհուրդ հարցնելու: Ռաբբին պատվիրեց կրկին վառել մոմերը: Մի քանի բարեպաշտ մարդիկ փորձեցին մինչև լույս վառ պահել կրկին ու կրկին հանգչող մոմերը: Սա Հանուկահի առաջին գիշերն էր. նույն բանը կատարվեց նաև հաջորդ գիշերները: Գտնվեցին անհավատներ, որ պնդեցին, թե սա մի շատ բնական երևույթ է: Սակայն մարդկանց մեծամասնությունը կարծում էր, որ այս ամենի մեջ ինչ–որ խորհուրդ կա:

Ծեր կանայք ասում էին, որ եղածը պատերազմի կամ համաճարակի նշան է: Ընտանիքի հայրերն այնքան էին մտահոգված, որ մոռացան անգամ երեխաներին նվիրել նրանց Հանուկահի դրամը. կանայք էլ ամեն տարվա նման յուղաբլիթներ չթխեցին: Այսպես շարունակվեց յոթ օր: Յոթերորդ գիշերը, երբ բոլորը քնած էին, իսկ ռաբբին, իր սենյակում նստած, Թալմուդ էր կարդում, դուռը թակեցին: Ռաբբին տեղից բարձրացավ ու բացեց դուռը: Դրսում կանգնած էր մի ծեր կին. ռաբբին նրան ներս հրավիրեց: Կինը նստեց և պատմեց, որ անցյալ տարի Հանուկահից առաջ իր փոք-

րիկ թոռը՝ Ալթեյը, մահացել էր: Նա հիվանդացել էր դեռ ամռանը, և ոչ մի բժիշկ չէր կարողացել օգնել: Երբ Ալթեյը հասկացել էր, որ մահանում է, տատին ասել էր. «Ես գիտեմ, որ մեռնելում եմ, ուզում եմ ապրել մինչև Հանուկահ: Հայրիկն ինձ դրամ կտա, և ես աղջիկների հետ դրիդել կխաղամ»:

Բիլգորեում մարդիկ աղոթում էին, որ աղջնակը լավանա, սակայն Հանուկահից ընդամենը մեկ օր առաջ նա մահացավ:

* * *

Անցել էր ուղիղ մեկ տարի: Ծեր կինը եկել էր ռաբբիի մոտ, որովհետև փոքրիկ Ալթեյի հոգին հայտնվել էր տատին: Աղջիկը եկել էր ասելու, որ ինքը մահացել էր՝ չների ելով մարդկանց, ովքեր չէին ցանկացել ի սրտե աղոթել իր փրկության համար: Ալթեյն ասել էր նաև, որ այդ ինքն է հանգցնում Հանուկահի մոմերը:

Երբ Ալթեյը հայտնվել էր երկրորդ անգամ, ծեր կինը հարցրել էր թոռանը, թե ինչ կարող են անել նրա հոգու փրկության համար: Ալթեյը փորձել էր բացատրել, բայց ծեր կինն արթնացել էր՝ չհասցնելով հասկանալ՝ ինչ է ասում թոռը: Միայն երրորդ հայտնվելուց էր Ալթեյը հայտնել իր կամքը: Աղջիկը ցանկանում էր, որ Հանուկահի վերջին գիշերը Բիլգորեյի մարդիկ ռաբբիի ու ավագների հետ այցելեն իր գերեզմանը ու մոմեր վառեն այնտեղ: Մեծերի հետ երեխաներն էլ թող գան, ասել էր Ալթեյը. թող նրանք յուղաբլիթներ ուտեն ու դրիդել խաղան:

Վաղ առավոտյան, ռաբբին պատվիրեց ժամկոչին տնետուն շրջել, փայտե մուրճով պատուհանների փեղկերը ծեծել ու ասել մարդկանց՝ ինչ պետք է անեն:

Այդ օրը սաստիկ քամի էր փչում. թվում էր՝ ծխնելույզները տանիքներից վայր է բերելու: Մութ ամպերը պատել էին երկինքը: Ոմանք մտածում էին, որ այդպիսի քամուն անհնար է մոմեր վառել: Շատերն էլ պնդում էին, որ ծեր կինն այդ ամենը հնարել էր, կամ ինքը՝ սատանան էր մեռած թոռան տեսքով երևացել պառավին, որպեսզի մոլորեցնի մարդկանց:

Փոթորիկը րոպե առ րոպե սաստկանում էր: Հանկարծ, անսպասելիորեն, մինչ մարդիկ երեկոյան աղոթքն էին ասում, եղանակը կտրուկ փոխվեց: Պղտոր երկին-

քը պարզվեց, քամին հանդարտվեց, մոտակա դաշտերից ու անտառներից տաք հոսանքներ փչեցին: Արդեն Թևեր ամսվա սկիզբն էր, նորալուսինը շրջապատված էր աստղերի սիրուն բույլերով: Բիլգորեյի մարդիկ իրենց երեխաների հետ շտապեցին գերեզմանատուն: Փոքրիկ Ալթելի շիրմի մոտ նրանք մոմեր վառեցին և աղոթք ասացին: Կանայք բոլորին հյուրասիրում էին իրենց պատրաստած յուղաբլիթներով ու ջեմով:

Սառած ճյան վրա երեխաները դրիդել էին խաղում: Ալթելի գերեզմանին ոսկե լույս էր շողում. այդ նրա փոքրիկ հոգին էր հրճվում Հանուկահի տոնին:

Երբեք առաջներում, ոչ էլ դրանից հետո, գերեզմանատանն այդպես ուրախ ու հանդիսավոր չէր եղել, ինչպես այդ տարի՝ Հանուկահի ութերորդ գիշերը:

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(պատառիկներ բրիտանական բանահյուսությունից)
(թարգմ. անգլերենից՝ Ալվարդ Ջիվանյանի)

– Ովքե՞ր են այնտեղ ապրում, – հարցրեց Ալիսը:
– Այն կողմում, – ասաց կատուն՝ աջ թաթը բարձրացնելով, – ապրում է մի փեղուրագործ, իսկ ա՜յ այնտեղ, – կատուն թափահարեց մյուս թաթը, – ապրում է Մարտյան նապաստակը: Որի մոտ ուզում ես՝ գնա՛. երկուսն էլ խելագար են:
– Բայց ես չեմ ուզում խելագարների հետ գործ ունենալ:
– Ի՞նչ անեմ, այստեղ բոլորս էլ խելագար ենք:
– Ինչու՞ ես կարծում, որ ես խելագար եմ, – զարմացավ Ալիսը:
– Պետք է որ լինես, այլապես այստեղ չէիր գա:

Լյուիս Քերոլ

Փիղն այս սիրուն թռչուն է՝
ծառից ծառ է ցատկոտում,
խավրծիլի թփերում
Հսկա իր բույնն է դնում,
Շվշվում է հենց այնպես
Ժիր ու խելառ մոզու պես:

* * *

Զմռան գիշեր մի ամառ
Ճերմակ ձյուն էր անձրևել,
Ոտաբոբիկ մի ջահել
Հոր տրեխները հագին,
Հսկա պարկը շալակին,
Զմրուխտ կանաչ խոտերում
Նստած անտառ էր վազում:

* * *

Թե աշխարհս ծով լիներ,
Եվ ծառերն՝ հաց ու պանիր,
Կապույտ ծովերը՝ թանաք
Ի՞նչ խմեինք էն ժամանակ:

* * *

Գնացի ես կայարան,
Մի մեծ հաչոց շնեց ինձ.
Փղից մի պոկ վարդեցի
Դրա ջարդը մռթեցի:

* * *

Հուլիս փոքրիկ քաղաքում
Լիվերպուլ ամսի վերջին
Ձայն էին տալիս ծառերը,
Թե ծաղկել են ծտերը,
Քամին հասել է դաշտում.
Ուժեղ ձյուն է անձրևում.
Թեև իջնում է հողին,
Չոր են երկինք ու գետին:

* * *

Եկե՛ք, եկե՛ք, երեխե՛ք
Պատմեմ իսկույն ձեզ մի դեպք.
Լուսնից ընկավ մի մարդուկ՝
Ականջի տեղ կանաչ ձուկ:
Հարցրեց սրան ու նրան՝
Ինչպե՞ս գնամ Ճլոխան:

Պետք է գնաս դու հյուսիս.
Լավ է սպասես այս ամիս,
Նա երկար մտածեց,
Կախ գլուխը իր քորեց,
Չամչով շիլան իր կերավ
Ու գնաց ուղիղ հարավ:
Սառն էր շիլան մեր յուղոտ
Բայց նա վառեց ճեռ ու ոտ:

* * *

Երեք խելոք Գոթամից
Կոտրած տաշտով ծով ելան,
Որ ավելի մոտիկից
Աշխարհի բանն հասկանան:
Թե հին տաշտն ամուր լիներ,
Հեքիաթս կերկարեր:

* * *

Կանաչ ծովում, կարմիր ծովում այս անտակ
Տատը ցանեց, ասա քանի՞ մարգ ելակ.
— Այնքան, որքան կարմիր–կանաչ անտառում
Արծաթապոչ ոսկե ձկնիկ է լողում:

* * *

Գետի ափին շատ վաղուց
Ապրում էր մի ջրաղացպան,
Հոգնել էր աշխատելուց
Առավոտից իրիկուն:

Ուստի բան ու գործ թողած՝
Երգում էր նա օրնիբուն,
Ձեռքը գրպանը դրած,
Մի տխուր երգ մոռացված:

— Ա՜խ, ոչ մեկը չի սիրում
Ինձ պես ցնդած ծերուկին,
Ոչ էլ ես եմ, ճիշտն ասած,
Սիրում որևէ մեկին:

ԶԱՄԲԻԿԻ ՁՈՒ

(անգլիական հեքիաթ)

Շատ տարիներ առաջ, ճիշտը չգիտեմ, թե որքան, երկու ջահել հանդիպեցին Սասեքսից մի ծերունու: Սա մեծ դեղին դդումը զարկել էր թևի տակ ու ճոճվելով գնում էր տուն:

Մեր ջահելները Լոնդոնից էին, իսկ Լոնդոնում մարդիկ, ինչպես գիտեք, «բվի պես իմաստուն են», չնայած կյանքում դդում չեն տեսել, ոչ էլ գիտեն ինչ բան է դա: Ծերունուն տեսնելով՝ որոշում են անպատճառ պարզել, ինչ է նրա թևի տակինը:

— Բարի լույս, պարո՛ն,— ողջունում են նրանք ծերունուն:

— Բարև, բարև,— պատասխանում է սա:

— Այդ ի՞նչ ես տանում, չե՞ս ասի:

— Ե՞ս, զամբիկի ձու եմ տանում:

— Իսկապե՞ս, միամիտ–միամիտ հարցնում են լոնդոնցիները, — մենք հեչ չենք տեսել զամբիկի ձու:

— Մեր կողմերում հասարակ զամբիկի ձու շատ կա, — բացատրում է ծերունին, — բայց այս մեկն ազնվացեղ նժույգի ձու է, դրա համար էլ այսպես խոշոր ու սիրուն է:

— Ի՞նչ կլինի՝ մեզ վաճառես,— խնդրում են լոնդոնցիները:

— Դե ի՞նչ ասեմ, — մտմտում է գյուղացին, — գուցե և չափսոսամ ու վաճառեմ, բայց իմ ուզած գնով: Տվե՛ք ինձ մի ոսկեղրամ, և նժույգի ձուն ձերը կլինի:

Երկար բարակ մտածելուց հետո մեր ջահելները վճարում են գյուղացու ասած գինն ու դդումը վերցնում:

— Զգույշ կլինեք, — ասում է գյուղացին, — քիչ է մնացել. շուտով ձվից քուռակ է դուրս գալու:

— Շատ բարի, զգույշ կլինենք, — խոսք են տալիս լռնդոնցիներն ու ճամփա ընկնում:

Հազիվ էին մի քանի քայլ արել, երբ նա, ում ձեռքին դդումն էր, հանկարծ սայթաքեց ու ընկավ՝ դդումը ձեռքից բաց թողնելով: Ճիշտ նույն պահին թփերի միջից դուրս պրծավ մի նապաստակ ու վազեց դեպի մոտակա բլուրը: Իսկ մեր տղաները, մտածելով, որ դա ձվից դուրս եկած քուռակն է, սկսեցին բղավել բլրի ստորոտում բանող մարդկանց.


— Է՜յ, բռնեցե՜ք, բռնեցեք մեր քուռակին: Ի՞նչ ասեմ: Գուցե ինչ–որ մեկը և բռնեց:

ԴԻՄԱՑԻՑ ԵԿՈՂԸ ԴՈՒ ԷԻՐ

Մի իրիկուն քայլում էի մեր գյուղի ճանապարհով: Տեսա մեկը դիմացից գալիս է: Մտածեցի՝ դու ես, դու էլ իմացար՝ ես եմ: Մի փոքր որ մոտեցանք, կարծեցի՝ դու ես, դու էլ մտածեցիր՝ ես եմ: Երբ ավելի մոտեցանք, տեսա, որ իսկապես դու ես, դու էլ տեսար, որ ես եմ: Արդեն հեռու չէինք իրարից, և հաստատ բան էր, որ դիմացից եկողը դու ես, և դու էլ հասկացար, որ մոտեցողը ես եմ:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ





7–21
SEPTEMBER
ՍԵՊՏԵՄԲԵՐ
2009


ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Ցուցահանդեսն իրականանում է Հովհ. Թումանյանի թանգարանի հեքիաթագիտության բաժնի, **fabula armeniaca** ծրագրի նախաձեռնությամբ և Հայաստանում Իռլանդիայի դեսպանության օժանդակությամբ*

Կուրատոր՝ Ալվարդ Ջիվանյան

*The exhibition has been realized by the Section of Fairy Tale Studies, Toumanian Museum and **fabula armeniaca** with the support of the Embassy of Ireland in Armenia.*

Curator: Alvard Jivanyan



ԱՍՏՂԱՄԱՆՈՒԿ
Աստղամանուկ, Թիֆլիս, 1911թ., թարգմ. Կ. Միրիանյան
The Star Child, Tiflis 1911, transl. K. Mirianian

… աստղամանուկը նրբակազմ էր ու սպիտակ, ասես փղոսկրից լինէր յղկուած. նրա գանգուրները նման էին ոսկէ–ծաղկի ոլորտներին, շրթունքներն ասես ալ ծաղկաթերթեր լինէին, աչքերը մի–մի մանուշակ էին վճիտ աղբիւրի մօտ բացուած, իսկ ամբողջ կազմուածքը կասես նարգիզ լինէր հնձուորի ձեռք չդիպած կօյս արօտում ծաղկած: Բայց հենց այդ գեղեցկութիւնն էր, որ թշուառացրեց նրան:


… he was white and delicate as sawn ivory, and his curls were like the rings of the daffodil. His lips, also, were like the petals of a red flower, and his eyes were like violets by a river of pure water, and his body like the narcissus of a field where the mower comes not.



Արքայադուստրն ու թզուկը, թարգմ. Կ. Միրիանյան, Թիֆլիս, 1911թ.
The Birthday of the Infanta, trans. by K. Mirianian, 1911.

Ծիրանաներկ թիթեռնիկները ոսկեփոշիով ծածկված թևիկները շարժելով թրթռում են ծաղկից ծաղիկ, պատերի ճեղքերից դուրս են գալիս փոքրիկ մողեսներ ու տաքանում շլացուցիչ կերպով փայլ տվող արևի ճառագայթների տակ: Շոգից ճրթալով ճաքճքում են հասուն նռները ու ցույց տալիս իրենց ալ, արնածոր սրտերը. իսկ կղբիները (մագնոլիաները) բաց են անում փղոսկրէ գնդակների նման խոշոր ծաղիկները և թանձր, անուշ բուրմունք ծավալում օդի մեջ:

The purple butterflies fluttered about with gold dust on their wings, visiting each flower in turn; the little lizards crept out of the crevices of the wall, and lay basking in the wide glare; and the pomegranates split and cracked with the heat , and showed their bleeding red hearts.
… and the magnolia trees opened their great glove–like blossoms of folded ivory, and filled the air with a sweet heavy perfume.



Մեծարենցը երբևէ չի թարգմանել Ուայլդի հեքիաթները, սակայն Ուայլդի «Իմաստություն սովորեցնողը» առակի նրա գեղեցիկ թարգմանությունն արդեն 1908թ. հայ ընթերցողին բացահայտում է պարաշխարհիկի անսովոր ընկալումը Ուայլդի մոտ:

Metsarents has not translated Wilde's tales, however, his beautiful translation of Wilde's 'The Teacher of Wisdom' revealed to the Armenian reader the Irish writer's poignant understanding of the Otherworldly.

«Երբոր մինակ մնաց, ոտքի ելավ և դեմքը լուսնին դարձուցած ճամփորդեց յոթը ամիս, ոչ ոքի խոսելով ու ոչ ոքի պատասխանելով. յոթներորդ ամսուն վերջերը հասավ այն անապատը՝ որ Մեծ Գետին անապատն է: Քարայր մը գտնելով ուր Հուշկապարիկ մը բնակած էր ատենոք, զայն բնակարան ըրավ ու վրան հանգչելու համար եղեգե անկողին մը շինեց ու եղավ ճգնավոր:

And when he was alone, he rose up and set his face to the Moon, and journeyed for seven moons, speaking to no man nor making any answer. And when the seven moon had waned he reached that desert which is the Desert of the Great River. And having found a cavern in wich a centaur had once dwelt, he took, it for his place of dwelling. And made himself a mat of reeds on which to lie, and became a hermit.



Հեքիաթի նկարազարդման մեջ Սուրենյանցն, անտարակույս, մեծագույնն է հայ գեղանկարիչներից: Ուայլդի հեքիաթների պատկերազարդումը նա իրականացնում է 1909թ. մոսկովյան հրատարակության համար:

Vardges Surenyants, who doubtless, is the greatest among Armenian fairy tale illustrators, made his interpretations of Wilde's tales for the 1909 Moscow edition.










Հայ գրող և թարգմանիչ Կարեն Միքայելյանի մեկնությամբ 1920 թ. Մոսկվայում լույս են տեսնում Օսկար Ուայլդի հեքիաթները:

Karen Mikaelian, an Armenian writer and translator, performed a unique interpretation of Wilde's tales.



Կուսակցական ականավոր գործիչ Արտաշես Կարինյանը գրում է Օ. Ուայլդի հեքիաթների 1920 թ. Մոսկվայում լույս տեսած հայերեն թարգմանության առաջաբանը:


Artashes Karinian, a renowned Soviet political figure wrote the Introduction to the 1920 Armenian translation of Wilde's tales published in Moscow.

Անձնվեր բարեկամը

Ու այսպես, փոքրիկ Հանսը աշխատում էր իր պարտեզում: Գարնան, ամառվան ու աշնան ընթացքում նա շատ երջանիկ էր լինում, բայց երբ ձմեռն էր գալիս, նա ոչ միրգ էր ունենում, ոչ էլ ծաղիկ՝ շուկան տանելու, նա սկսում էր տառապել ցրտից ու քաղցից ու հաճախ անկողին էր մտնում առանց ընթրիքի, եթե չհաշվենք մի քանի հատ տանձաչիր ու մի բուռ կարծր ընկույզը:

The Devoted Friend

So little Hans worked in his garden. During the spring, the summer and the autumn he was very happy, but when the winter came, and he had no fruit or flowers to bring to the market, he suffered a good deal from cold and hunger, and often had to go to bed without any supper but a few dried pears or some hard nuts.



Նուռերու տուն մը, թարգմ.՝
Զապել Շահպազի, Ստամբուլ, 1961


A House of Pomegranates.
Trans. by Zapel Shahpaz, Istanbul, 1961.

Ներկա ցուցահանդեսի խորագիրը փոխառված է Շահպազի արևմտահայերեն թարգմանությունից:

Աստղ–մանուկը

Անգամ մը խորունկ ձիւնակոյտի մը մէջ մխրճուեցան, և դուրս ելան անկէ ճեփ–ճերմակ՝ նման ջրաղացպաններու երբ աղօրիքը կ’աղայ: Անգամ մը սահեցան ողորկ ու կարծր սառին վրայ ուր վաղենիկը սառած էր, և իրենց փայտի խուրձերը դուրս թափեցան տրցակներէն, ստիպուեցան ժողվել և դարձեալ իրարու կապել և անգամ մը այնպէս կարծեցին, թէ իրենց ճամբան կորսնցուցած էին, սոսկալի սարսափ մը պատեց զիրենք, որովհետեվ գիտէին թէ Ձիւնը անգութ է անոնց հանդէպ որոնք իր բազուկներուն մեջ կքնանան: Բայց վստահեցան Սուրբ Մագիստրոսին, որ կը հսկէ բոլոր ճամփորդներուն վրայ, ետ դարձան, խոհեմութեամբ յառաջացան և վերջապէս անտառին սահմաններուն հասան ու տեսան վարը՝ հեռուն հովիտին մէջ, իրենց բնակած գիւղին լոյսերը:
Այնչափ ուրախացած էին իրենց փրկութեան համար, որ բարձրաձայն խնդացին, երկիրը իրենց երեւցավ արծաթէ ծաղիկի մը պէս, և Լուսինը ոսկիէ ծաղիկ մը:

Once they sank into a deep drift, and came out as white as millers are when, when the stones are grinding; and once they slipped on the hard smooth ice where the marsh water was frozen , and their faggots fell out of their bundles, and they had to pick up and bind them together again, and once they thought that they had lost their way, and a great terror seized on them, for they knew that the Snow is cruel to those who sleep in her arms. But they put their trust in the Good Saint Martin, who watches over all travellers, and retraced their steps, and went warily, and at last they reached the outskirts of the forest, and saw far down in the valley beneath them, the lights of the village in which they dwelt.
So overjoyed were they at their deliverance that thy laughed aloud and the Earth seemed to them like a flower of silver, and the Moon like a flower of gold.



Գագիկ Հախվերդյանի 1980թ. լույս տեսած թարգմանությունները միշտ եղել են գրքասերների ու հեքիաթի սիրահարների ուշադրության կենտրոնում:

Gagik Hakhverdian's translations are probably the most complete. They were published in 1980 and are very popular with Armenian bibliophiles and fairy tale lovers.

Ձկնորսը և նրա հոգին

Իսկ առավոտյան, վաղ արշալույսին, Քահանան՝ կրոնավորների ու եկեղեցական երգչախմբի, մոմեր բռնողների և բուրվառ ճոճողների ու մեծաթիվ հավատացյալների ուղեկցությամբ գնաց ծովափ և օրհնեց ծովն ու այնտեղ ապրող արարածներին: Եվ այծամարդկանց օրհնեց նա, և թզուկներին, որ պարում են անտառում, և նրանց, որոնց աչքերը փայլում են, երբ նայում են սաղարթի միջից: Աստծո աշխարհի բոլոր արարծներին նա օրհնեց, իսկ ժողովուրդն ապշած էր և հրճվանքով լեցուն: Սակայն այլևս երբեք և ոչ մի ծաղիկ չծաղկեց Մերժվածների Գերեզմանատանը, ու մնաց ամայի ինչպես նախկինում: Եվ ծովի բնակիչներն էլ այլևս երբեք չեկան ծովածոց, ինչպես սովորաբար անում էին, քանի որ լողալով խորացել էին ծովի հեռուները:


The Fisherman and his Soul

And in the morning, while it was still dawn, he went forth with the monks and the musicians, and the candle-beaters and the swingers of censers, and a great company, and came to the shore of the sea, and blessed the sea, and all the wild things that are in it. The fauns also he blessed, and the little things that dance in the woodland, and the bright-eyed things that peer through the leaves. All the things in God's world he blessed, and the people were filled with joy and wonder. Yet never again in the corner of the Fuller's Field grew flowers of any kind, but the field remained barren even as before. Nor came the Sea-folk into the bays as they had been wont to do, for they went to another part of the sea.



Օսկար Ուայլդ, Եսասեր հսկան, Ընթերցանության գիրք, Երևան, Էդիթ պրինտ, 2007 թ.:
Oscar Wilde. The Selfish Giant./School Reader. Yerevan: Edith Print, 2007.





Օսկար Ուայլդ, Եսասեր հսկան, գրականության դասագիրք, 4–րդ դասարան, Երևան, Մակմիլան–Արմենիա, 2002 թ.:
Oscar Wilde. The Selfish Giant./ School Reader. 4th year. Yerevan: Macmillan Armenia, 2007.

Ուայլդը չէր կարծում, որ իր հեքիաթները հասցեագրված էին մանուկ ընթերցողին, սակայն նրա պատմությունները կանոնավոր կերպով հայտնվում են դասագրքերում և ընթերցարաններում. հեքիաթների պարզեցված տարբերակներ են հրատարակվում ընթերցողական հմտություններ խրախուսելու նպատակով:

Though Wilde never thought his fairy tales were addressed to the nursery, his stories regularly appear in teacher’s editions; retold and simplified versions are printed to develop and encourage reading skills.

Ռուսական հրատարակություններ

Russian Editions





V. M. Sablin's Moscow edition of Oscar Wilde's Tales (1909).
Վ. Մ. Սաբլինի 1909 թ–ի մոսկովյան հրապարակությունը (1909թ.):



Оскар Уайлд. Сказки. Иллюстр. Уолтера Крейна и Джэйкомба Худа. Брокгаузь-Ефрон-Эксмо, 2008.
Oscar Wilde. Fairy Tales. Illustr. by Walter Crane and Jacobs Hood. Moscow: Brokgaus-Efron-Eksmo, 2008.

Великан-Эгоист

Каждый день, возвращаясь из школы домой, дети заходили поиграть в сад Великана. Это был большой и красивый сад, весь в мягкой, зеленой траве, усеянной прекрасными, подобными звездам цветами. В саду росли двенадцать персиковых деревьев, покрывавшихся в раннюю, весеннюю пору сплошной пеленой из нежных перламутрово-розовых цветков, а осенью радовавших обильным урожаем персиков.

The Selfish Giant

Every afernoon, as they were coming from school the children used to play in the Giant's garden. It was a large, lovely garden, with soft, green grass. Here and there over the grass stood beautiful flowers like stars, and there were twelve peach-trees that in the spring time broke out into delicate blossoms and pink and pearl, and in the autumn bore rich fruit.





Кентервильское привидение. Пер. Ю. Кагарлицкого.
Иллюстр. С. Коваленкова. /Антология мировой детской литературы.
Том 7. Москва: Аванта, 2003.
The Canterville Ghost. Trans. by Y. Kagarlitsky. Illustr. By S. Kovalenkov. /
Anthology of Children's Literature. Vol. 7. Moscow: Avanta, 2003.

Кентервильское привидение

Далеко-далеко, за сосновым бором … есть маленький сад. Трава там густая и высокая, там белеют звезды цикуты, и всю ночь там поет соловей. Он поет до рассвета, и холодная, хрустальная луна глядит с вершины, а исполинское тисовое дерево простирает свои руки над спящими.

***

Когда заплачет не шутя,
Здесь златокудрое дитя,
Молитва утолит печаль
И зацветет в саду миндаль –
Тогда взликует этот дом.
И дух уснет, живущий в нем.

The Canterville Ghost

“Far away, beyond the pine-woods,” he answered in a low dreamy voice, “there is a little garden. There the grass grows long and deep, there are the great, white stars of the hemlock flower, there the nightingale sings all night long... All night long he sings, and the cold, crystal moon looks down, and the yew tree spreads out its giant arms over the sleepers.

***

When a golden girl can win
Prayer from out the lips of sin,
When the barren almond bears,
And a little child gives away its tears,
Then shall all the house be still
And peace come to Canterville.

Գրականության ցանկ
Bibliography

1. Oscar Wilde. The Happy Prince and Other Tales. New York: The Leather Library. Date unknown.
2. Полное собрание сочинений Оскара Уайлда. (Сказки) Сь критико-биографическимь очеркомь и пртретом автора под редакцией К.И.Чуковского. Приложение кь журналу Нива на 1912 г. Издание Т-ва А.Ф.Марксь, С.-Петербург
3. Оскарь Уайльдь. Портрет Мистера W.H. Преступление Лорда Артура. Сказки. / Полное собрание сочинений. Том 7. Издание В. М. Саблина. Перевод и предисловие М. Ликиардопуло. Москва 1909.
4. Оскарь Уайльдь. Сказки. Тюрьма. / Полное собрание сочинений. Том 3. Издание В. М. Саблина. Перевод и предисловие М. Ликиардопуло. Москва 1909.
5. Мальчик Звезда. Сказка по О.Уайлду. изложенная В.В.G., рисунки В.В. Спасского. Москва. Издание А.Д.Ступина. 1911.
6. Оскар Уайлд. Гранатовый домик (билингва). Санкт-Петербург: Азбука-классика, 2007.
7. Оскар Уайлд. Счастливый принц (билингва). Санкт-Петербург: Азбука- классика, 2008.
8. Оскар Уайлд. Сказки. / Библиотека великих писателей. Москва: Брокгаузъ-Ефрон/Эксмо, 2008.
9. Оскар Уайлд. Счастливый принц. / Золотая книга лучших сказок мира. Москва: Росмэн, 2001.
10. Оскар Уайлд. Сказка Кентервильское привидение. Антология мировой детской литературы. Москва: Аванта 2003.
11. Պատանի Թագավորը, թարգմ. Կար. Միրիանեանի, պատկերազարդումը՝ Սիմ. Արղության, Թիֆլիս, Տպարան Հերմես, 1912.:
12. Օսկար Ուայլդ, Պրինցն ու ծիծեռնակը, Ալֆոնս Դոդե, Դոֆինի մահը, Թիֆլիս, Հրատարակություն «Հասկեր» ամսագրի,1909, թարգմ. Մ. Բեջանյանի:
13. Օսկար Ուայլդ, Արքայադուստրն ու թզուկը, թարգմ. Կար. Միրիանյանի, / Նվեր մանուկներին, Թիֆլիս, 1911:
14. Օսկար Ուայլդ, Աստղամանուկ, թարգմ. Կար. Միրիանյան, / Նվեր մանուկներին, Թիֆլիս, 1911:
15. Օսկար Ուայլդ, Հեքիաթներ/ Երկեր, թարգմ. Գագիկ Հախվերդյանի,Երևան, Սովետական գրող, 1980:
16. Օսկար Ուայլդ, Նշանավոր ռոկետը, թարգմ. Կար. Միքայելյանի, Մոսկա, Հրատարակություն Հայկական գործերի կոմիսարիատի, 1920:
17. Օսկար Ուայլդ, Անձնվեր բարեկամը, թարգմ. Կար. Միքայելյանի, Մոսկա, Հրատարակություն Հայկական գործերի կոմիսարիատի, 1920:
18. Օքար Ուայլտ, Երիտասարդ թագավորը և պարշումին կծիկը, Հալեպ,. Հրատարակություն հալեպահայ ուսուցչական միության, թիվ 4, 1944:
19. Օքար Ուայլտ, Նուռերու տուն մը, թարգմ. Զապել Մ. Ճահպազի, Ստամբուլ, Վարոլ Տպարան, 1961:
20. Օսկար Ուայլդ, Եսասեր հսկան, / Ընթերցանության գիրք, կազմ. Դ.Գյուրջինյան, Թ.Ալեքսանյան, Ա. Գալստյան, Երևան, Էդիթ Պրինթ, 2007.
21. Օսկար Ուայլդ, Եսասեր հսկան, աշխ. Ռ. Սարուխանյանի, 4–րդ դասարանի գրականության դասագիրք, Երևան, Մակմիլան–Արմենիա, 2002:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ
МУЗЕЙ ОВАНЕСА ТУМАНЯНА
MUSEE HOVHANNES TOUMANIAN

16–26
ԴԵԿՏԵՄԲԵՐ
ДЕКАБРЬ
DECEMBRE
2010

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
МЕЖКУЛЬТУРНЫЙ ДИАЛОГ В КОНТЕКСТЕ ДЕТСКОЙ ЛИТЕРАТУРЫ
DIALOGUES INTERCULTURELS DANS LE CONTEXTE DE LA LITTERATURE ENFANTINE



ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԵՐԵՆՈՎ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ФРАНЦУЗСКАЯ ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА В АРМЯНСКИХ ПЕРЕВОДАХ С РУССКОГО ЯЗЫКА

TRADUCTIONS ARMENIENNES PAR MEDIATION RUSSE DE LA LITTERATURE ENFANTINE FRANÇAISE

Ցուցահանդեսն իրականանում է Ֆրանսիայում Ռուսաստանի և Ռուսաստանում Ֆրանսիայի տարվա շրջանակներում՝ Հովհ. Թումանյանի թանգարանի հեքիաթագիտության բաժնի նախաձեռնությամբ՝ Հայաստանում «Ռուսական համագործակցության» ներկայացուցչության և Ֆրանսիայի դեսպանության օժանդակությամբ:
Կուրատոր՝ Ալվարդ Ջիվանյան:

Выстава проводится в рамках Года России во Франции и Франции в России (2010г.) по инициативе отдела сказковедения Музея О. Туманяна, при поддержке Представительства Россотрудничества в Армении и Посольства Франции в Армении.
Куратор – Алвард Дживанян.

L’exposition se tient dans le cadre de l’Année croisée France-Russie 2010, par l’initiative du département d’étude des contes du Musée Toumanian, avec le soutien de la Représentation de ‘Coopération Russe’ en Arménie et de l’Ambassade de France en Arménie.
Curateur Alvard Djivanyan.



նկ. Լուսինե Եղիազարյանի

Les enfants sont, avant de naître, des lumières dans le ciel bleu.
Victor Hugo

Մինչ իրենց հողեղեն ծնունդը մանուկները լույսեր են կապույտ երկնքում:
Վիկտոր Հյուգո

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԵՐԵՆՈՎ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ֆրանսիական մանկական գրականության հայերեն թարգմանությունների թվում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ռուսերենով միջնորդավորված թարգմանական երկերը:

Թարգմանության պատմության մեջ միջնորդավորված թարգմանությունը թերագնահատված դաշտ է այն հիմնավորումով, որ միջնորդավորված թարգմանությունն իր բնույթով չի կարող համարվել բնագիր տեքստի համարժեքը: Եվ եթե թարգմանությունը բնագրի հնարավոր մեկնություն է, ապա միջնորդավորված թարգանությունն արդեն ածանցյալ մեկնություն է, գրական պրոդուկտ, որ միջանկյալ դիրք է գրավում համարժեք թարգմանության և վերապատումի միջև: Այսպիսով, թարգմանաբանության տեսանկյունից միջնորդավորված թարգմանությունը մշակույթների մերձեցման անցանկալի ուղի է:

Եվ այնուհանդերձ, սխալ է թերագնահատել միջնորդավորված թարգմանությունների կարևորությունը հատկապես մանկական գրականության պատմության, մանկավարժության ու մշակութաբանության տեսանկյունից: Իսկ որպես միջմշակութային հաղորդակցության ձև միջնորդավորված թարգմանությունն առավել հետաքրքիր և բազմաշերտ առնչություն է, քան ուղղակի թարգմանական մեկնությունը, քանի որ ներառում է բնագիր, միջնորդ լեզու և թիրախ լեզու կողմերի յուրատիպ հարաբերություն:

Միջնորդավորված թարգմանությունը, որպես կանոն, նախորդում է անմիջական թարգմանությանը՝ վկայելով այն մասին, որ ընթերցողի, մասնավորապես պատանի ընթերցողի համար առավել էական է գեղարվեստական երկի՝ որպես մշակութային իրադարձության իրազեկությունը, քան բնագրին թարգմանության համարժեքության աստիճանը:

Գրականության պատմությանը հայտնի են միջնորդավորված թարգմանություններ, որոնց դերն անգնահատելի է: Այսպես, «Հազար ու մեկ գիշերների» առաջին թարգմանությունների մեծ մասը (գոնե եվրոպական լեզուներով) արված էին Անտուան Գալանի ֆրանսերեն տարբերակից: Արևելյան հեքիաթների ֆրանսերեն այս թարգմանությունը շրջադարձային դեր խաղաց արևմտաեվրոպական, նաև ռուսական գրական ճաշակի հետագա զարգացման, հեղինակային հեքիաթի ժանրի ձևավորման և անգամ նորաձևության մեջ:

Ֆրանսիական մանկական գրականության ռուսերենով միջնորդավորված հայերեն թարգմանությունները պատկառելի թիվ են կազմում, թեև երբևէ չի եղել լուրջ անդրադարձ այս հարցին, մանավանդ չի եղել դրանք համակարգելու նախադեպ: Ներկա ցուցահանդեսը համեստ փորձ է՝ համատեղ ներկայացնելու ֆրանսիական մանկական գրականության

ռուսերենից արված հայերեն թարգմանական նմուշներ՝ միաժամանակ գնահատելով և վերաիմաստավորելով ռուսերենի՝ իբրև հոգևոր միջնորդի դերը հայ մանկական թարգմանական գրականության կայացման ու պատմական զարգացման ընթացքում:

Նշված թարգմանությունները կարելի է խմբավորել ըստ ժամանակագրության՝ որպես սահմանագիծ ընտրելով խորհրդային շրջանը, որ կամայական ընտրություն չէ, այլ հիմնավորված, քանի որ խորհրդային շրջանը հայ թարգմանական գրականության և լեզվի պատմության մեջ առանձնանում է արմատական փոփոխություններով: Բնական է, որ այս բոլոր շրջաններում եղել են նաև ուղղակիորեն ֆրանսերենից արված թարգմանություններ: Անմիջական ու միջնորդավորված թարգմանությունների քանակական հարաբերակցությունը պայմանավորվում էր տվյալ շրջանի քաղաքական, պատմական, տնտեսական և մշակութային հանգամանքներով:

Մինչխորհրդային շրջանում ֆրանսերենից հայերեն գրական թարգմանությունների մի զգալի մասն արված էր արևմտահայ մտավորականների, հայ թարգմանիչների այն ճյուղի կողմից, որն առանձնանում էր ֆրանսիական մշակույթի ու գրականության քաջատեղյակությամբ: XXդ. սկզբներին, անդառնալի կորուստներ կրելով, արևմտահայ մտավորական միտքը գրեթե պարալիզացվում է՝ հայերենի լեզվական տարածքը ցավալիորեն կրճատվում:

Այս շրջանում ֆրանսերենից ռուսերենով միջնորդավորված հայերեն թարգմանությունների փաստը պայմանավորված էր ռուս և արևելահայ մտավորականության՝ գրողների, թարգմանիչների, մանկավարժների ու հրատարակիչների գրական–մշակութային սերտ առնչություններով: Բավական է նշել Ստ. Լիսիցյանի, Րաֆֆու, Հովհ. Թումանյանի, Ալ. Ծատուրյանի, Դ.Դեմիրճյանի և այլոց անունները:

Խորհրդային շրջանում ուղղակի և միջնորդավորված թարգմանությունների հարաբերակցությունը փոխվում է հօգուտ միջնորդավորված թարգմանությունների: Միջնորդավորված թարգմանությունների վերելքը պայմանավորված էր խորհրդային երկրում ստեղծված մշակութային քաղաքականության բարդ համատեքստով: Ամբողջ խորհրդային երկրով անցնում է նոր լեզվաքաղաքականության արմատական փոփոխությունների ալիքը: Հայաստանում արտաքին գործոնների պատճառած անդառնալի կորուստը լրացվում է տեղական անխոհեմ լեզվական քաղաքականությամբ: Ուղղագրության փոփոխության հետևանքով մանկական թարգմանական գրականության հարուստ ժառանգությունը, գլխավորապես ամփոփված «Հասկեր» և «Աղբյուր» հանդեսներում, ընթերցանության համար դառնում է «անընդունելի»: Իրավիճակը կարող էր փոխվել միայն առկա ամբողջ թարգմանական գրականության վերահրատարակմամբ, որ անիրականանալի խնդիր էր վաղ Խորհրդային Հայաստանում:

Առաջանում է թարգմանական եռանդում գործունեության, մասնավորապես ֆրանսիական մանկական գրականության, թարգմանության անհրաժեշտություն: Ստեղծված նոր պատմամշակութային համատեքստում ռուսերենը դառնում է հոգևոր միջնորդ ֆրանսիական մանկական գրականության հարուստ ավանդույթների և հայ մանուկ ընթերցողի միջև:

Նշենք, որ Հայաստանն առանձնանում էր լեզվական ուրույն կարգավիճակով: Չկար ազգային լեզվի ինտեգրացիայի վտանգ: Էպիկական ու գրական ամողջ ժառանգությունը պահպանվում էր հայերենով և հուսալի ամրագրված էր հայալեզու տեքստերում: Թարգմանական դպրոցն ուներ վաղնջական և ուժեղ ավանդույթներ: Խորհրդային շրջանում հայ–ֆրանսիական մշակութային հաղորդակցության զարգացման համար նոր խթան ծառայեց ֆրանկախոս երկրներից մտավորականության հայրենադարձության ալիքը: Այս ամենի շնորհիվ Հայաստանում ռուսերենի տարածքի ընդլայնումն ընկալվում էր ոչ թե որպես սպառնալիք ազգային լեզվի դիրքերին, այլ որպես հայ–ֆրանսիական մշակութային երկխոսությունը խթանող լրացուցիչ, բայց հուսալի ուղի: Նման միջնորդումը մասնակիորեն փոխհատուցում էր պատմաքաղաքական հանգամանքների և լեզվական քաղաքականության հետևանքով մանկական գրականության կրած ծանր կորուստը:

Ակնհայտ է, որ ռուսերենը ֆրանսիական մանկական գրականության դեսպանի առաքելությամբ Հայաստանում կարող էր հանդես գալ՝ անկախ իր վիթխարի աշխարհագրական տարածքից և միջազգային լայն կիրառումից: Կարևոր է ընդունել այն ուրույն դերը, որ ռուսերենն ուներ ֆրանսիական մշակույթի ու մասնավորապես ֆրանսիական մանկական գրականության տարածման ու թարգմանության հարցում: Ֆրանսիական գրական ավանդույթներն անգնահատելի դեր են խաղացել ռուսական մանկական գրականության ձևավորման հարցում:

Իր հերթին, ֆրանսիացի մանկագիրների էթնիկական միատարրությունը մեկ անգամ չէ, որ խախտվել է ծագումով ռուս գրողների «մեղքով»: Մանկական գրականության մեջ ամենավառ օրինակն է Սոֆի դը Սեգյուրը՝ կոմսուհի Ռոստոպչինան՝ ֆրանսիական մանկական գրականության ամենահին և գեղեցիկ մատենաշարի՝ վարդագույն գրադարանի (bibliotheque rose) հիմնադիրներից մեկը:

Ռուսերենով միջնորդավորված թարգմանությունների տարածումը պայմանավորված էր նաև խորհրդային երկրի փակ քաղաքականությամբ, այլ մշակույթների, այդ թվում ֆրանսիական գրականության հետ մշակութային և լեզվական հաղորդակցության սահմանափակ հնարավորություններով, ռուսերեն հրատարակությունների քանակով ու մատչելիությամբ, ռուսերենին տիրապետող գեղարվեստական թարգմանիչների քանակական առավելությամբ:

Թարգմանական երկերի անժխտելի գեղարվեստական որակը բացատրվում էր ինչպես բնագրի վերստեղծման խնդրում թարգմանչին

ներկայացվող խիստ պահանջների, այնպես էլ լուրջ հրատարակչական գրաքննության առկայությամբ: Էական դեր էր խաղում նաև այն, որ որպես թարգմանիչներ հանդես էին գալիս նաև գրական նշանավոր դեմքեր, ովքեր, չտիրապետելով բնագրի լեզվին, ստեղծում էին բարձրարժեք երկեր՝ հենվելով միջնորդ լեզվի վրա:

Հատկանշական է, որ խորհրդային շրջանում ֆրանսիական մանկական գրականության թարգմանությունների մեծ մասն ուղեկցվում էր նկատելիորեն քաղաքականացված առաջաբանով կամ վերջաբանով: Հաճախ թարգմանական երկերի հրատարակման անցաթուղթ էր ծառայում թարգմանվող հեղինակի քննադատությունը:

Ֆրանսիական մանկական գրականության՝ ռուսերենից արված հայերեն թարգմանությունների ցանկն ընդգրկում է ամենանշանավոր անուններ՝ Շարլ Պերրո, Կոնտես դը Սեգյուր, Ժյուլ Վեռն, Ալեքսանդր Դյումա, Ալֆոնս Դոդե, Հեկտոր Մալո, Անտուան դե Սենտ Էքզյուպերի, Քրիստիան Պինո և այլք:

Արդի շրջանում շնորհիվ հայ–ֆրանսիական մշակութային սերտ կապերի և ֆրանսերեն–հայերեն թարգմանական դպրոցի եռանդուն գործունեության միջնորդավորված թարգմանությունների ծավալը խիստ փոքրացել է, թեև ամբողջապես չի սպառվել:

* * *

Հայ թարգմանական մտքի կենսունակությունն անմեկնելի է. ֆրանսիական մանկանոցի արքայական հատորյակը՝ Փոքրիկ իշխանը, այսօր ունի հայերեն առնվազն հինգ թարգմանական մեկնություն. այդ թվում՝ Սաղաթել Հարությունյանի (ռուս.–ից), Սոֆի Ավագյանի, Կարպիս Սուրենյանի, Սամվել Գասպարյանի, Թերէզ Ոսկերիչեանի (արևմտահայերեն) թարգմանությունները[1]:

Ա. Ջիվանյան

---

[1] Անտարես» հրատարակչությունում շուտով լույս կտեսնի ևս մեկ՝ Նվարդ Վարդանյանի տարբերակը:

ФРАНЦУЗСКАЯ ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА В АРМЯНСКИХ ПЕРЕВОДАХ С РУССКОГО ЯЗЫКА

Несмотря на значительный обьем армянских переводов французской детской литературы, опосредованных русским, не существует целостного исследования или обзора этих переводов. Цель настоящей выставки – оценить и переосмыслить роль русского языка как духовного посредника во франко-русско-армянских переводах, а также определить его значение в исторической эволюции армянской детской литературы.

Хронология опосредованных армянских переводов с французского прослеживается четко: предсоветский, советский, постсоветский периоды. Количественное соотношение опосредованных и прямых переводов французских художественных текстов в эти периоды зависело от ряда исторических, политических и культурных факторов.

В предсоветский, в особенности в предреволюционный период посредничество русского языка во франко-армянских переводах было обусловлено тесными литературными связями восточноармянской и русской интеллигенции: поэтов, переводчиков, издателей и педагогов. В этот же период параллельно осуществлялись прямые, неопосредованные переводы французской детской литературы как на восточноармянский, так и на западноармянский языки.

В раннесоветский период соотношение переводов изменилось вользу опосредованных переводов в связи с изменением политической и, следовательно, языковой ситуации. После первой мировой войны литературная, переводческая и издательская деятельность западноармянской интеллигенции была почти полностью парализована. Выжившая часть литературной элиты сумела эмигрировать в Европу, в страны Ближнего Востока. Армянское языковое пространство резко сократилось.

Существующие прямые переводы с французского на западноармянский, к сожалению, оказались малодоступными, или неприменимыми, так как языком преподавания в Советской Армении был восточноармянский. Детский читатель стоял перед серьезной сложностью восприятия западноармянского литературного языка.

С другой стороны, вследствие введения новой орфографии, являющейся одним из проявлений раннесоветской языковой политики в Армении, уже существующие неопосредованные

восточноармянские переводы оказались несколько анахроничными в языковом плане. Появилась необходимость активной переводческой деятельности, в частности, переводов детской литературы, французской в том числе. Русский язык стал духовным посредником между французским и армянским культурами, между богатыми традициями французской детской литературы и армянским детским читателем.

Отметим, что языковая ситуация в Армении была уникальной. Не было опасений интегрирования исконного языка. Все эпическое и литературное наследие сохранилось на армянском. Армянская переводческая школа имела давние и прочные традиции. В советские годы новым толчком для развития франко-армянской межъязыковой коммуникации стала волна переводчиков-репатриантов из франкоговорящих стран. Всилу сказанного, расширение языкового пространства русского воспринималась не как угроза позициям национального языка, а как дополнительный, но действенный путь расширения франко-армянского межкультурного общения. Подобное посредничество стимулировало развитие и обогащение национальной детской литературы, потерпевшей немалый ущерб вследствие драматических исторических событий и некорректной языковой политики.

Русский язык имел миссию духовного посредника между французской и армянской детскими литературами, помимо своего огромного географического ареала и международного распространения. Определенную роль здесь играло осознание факта уникальности связей французской и русской детских литератур. Именно русский мог взять на себя роль посла французской детской литературы в Армении: французская детская литература имела большое влияние на формирование и эволюцию традиций литературы для детей в России. В свою очередь, этническая монолитность французской литературы иногда нарушалась «по вине» писателей русского происхождения. В детской литературе ярким примером того была графиня де Сегюр, урожденная Ростопчина.

В советские годы в Армении один за другим появились качественные, опосредованные переводы мастеров французской детской и юношеской литературы: Шарля Перро, Гектора Мало, Аьфонса Доде, Жюля Верна и т.д.

Неоспоримое качество этих переводов было обусловлено наличием высоких профессиональных требований к воссозда-

нию подлинника и строгой издательской цензуры. Большинство изданий франко-русско-армянских переводов сопровождалось несколько политизированными, но весьма информативными предисловиями и послесловиями. Нередко ценность переведенных текстов была обусловлена тем, что переводы были сделаны выдающимися творческими личностями, которые, не владея французским, создавали прекрасные армянские переводы опираясь на русский, как на язык посредника.

На современном этапе, благодаря непосредственным франко-армянским культурным контактам и активной школе франко-армянского художественного перевода, объем опосредованных переводов уменьшается. Однако, русский язык продолжает играть роль духовного посредника во франко-армянских переводах, что обьясняется авангардной позицией русских переводчиков в сфере освоения новых французских детских произведений, их большей осведомленностью о современных литературных событиях во Франции.

В отдельных случаях опосредованный перевод появляется раньше прямого армянского перевода благодаря деятельности литераторов, не владеющих языком оригинала, но готовых брать на себя компенсаторную просветительскую роль. Ведь, для читателя, особенно юного, важнее знание художественного произведения, как культурного события, чем степень эквивалентности перевода тексту подлинника. Можно согласиться, что с точки зрения науки переводоведения опосредованный перевод не самый желательный способ межъязыковой коммуникации. Однако, нельзя недооценить их важность с позиции истории и сравнительного изучения детской литературы. Большой интерес аналогичные переводы имеют для педологии, педагогики, культурологии.

Осуществление подобной выставки поможет переосмыслить франко-русско-армянские переводы детской литературы как органичную и ценную часть армянской детской литературы, а также как уникальный аспект франко-русско-армянской межкультурной коммуникации.

А. Дживанян

ESQUISSE DE LA LITTÉRATURE FRANÇAISE POUR ENFANTS TRADUIT EN ARMENIEN PAR MEDIATION

Parmi les traductions en arménien de la littérature française pour enfants, une place particulière occupent les œuvres en traduction relais de la langue russe.

Dans l'histoire de la traductologie, la traduction par médiation est un domaine sous-estimé. La traduction par médiation par sa nature ne peut pas être considérée comme équivalente au texte original. Et si la traduction est l'interprétation possible de l'original, alors la traduction par médiation est déjà une interprétation dérivée, un produit littéraire, qui occupe une position intermédiaire entre la traduction équivalente et le récit. Ainsi, du point de vue de la traductologie, la traduction en relais est un moyen insouhaitable pour le rapprochement des cultures.

Et pourtant, il est erroné de sous-estimer l'importance des traductions par médiation, en particulier de point de vue de l'histoire, de la pédagogie et de culturologie de la littérature enfantine. Et en tant qu'une forme de communication interculturelle, la traduction par médiation est la relation la plus intéressante et à multiples facettes, plutôt qu'une interprétation traduite directe, car cela comprend une relation spéciale entre l'original, la langue intermédiaire et la langue cible.

En règle générale, la traduction par médiation précède la traduction directe, en témoignant du fait que pour le lecteur, en particulier pour le jeune lecteur la sensibilisation sur l'événement culturelle est plus essentielle que le degré d'adéquation de la traduction avec l'original.

L'histoire de la littérature connaît des traductions par médiation et leur rôle est inestimable. Ainsi, la plus grande partie des traductions de Mille et une nuits (au moins dans les langues européennes) a été faite à partir de la version française d'Antoine Galland. La traduction française de ces contes de fées a joué un rôle crucial dans le développement avenir du gout littéraire russe et occidental, dans la formation du genre de conte d'auteur et même dans la mode.

La littérature française enfantine en traductions arméniennes par médiation de la langue russe est assez considérable, même si une réflexion sérieuse n'a jamais été faite sur cette question, en particulier il n'existait aucun précédent sur leur systématisation. La presente exposition est une modeste tentative de présenter conjointement les échantillons arméniens de la littérature française pour enfants traduits à partir du russe, en même temps d'évaluer et de réinventer le rôle de la langue russe en tant qu'intermédiaire spirituel dans l'établissement de l'évolution historique de la littérature enfantine arménienne traduite.

Les traductions citées peuvent être groupées par ordre chronologique. La période soviétique est la ligne de séparation. Le choix n'est pas arbitraire, mais justifié, puisque la période soviétique est caractérisée par des changements radicaux dans la littérature arménienne traduite et dans l'histoire de langue. Il est naturel que pendant toutes ces périodes il y a eu également des traductions réalisées directement à partir du français. Les relations quantitatives entre les traductions directes et par médiation ont été conditionnées par certaines circonstances politiques, historiques, économiques et culturelles de la période donnée.

Pendant la période pré-soviétique une partie considérable des traductions littéraires à partir de français vers l'arménien a été fait par des intellectuels arméniens occidentales, la branche des traducteurs arméniens, qui était différente par ses connaissances de la culture et littérature française. Au début du XXème siècle, suite a des pertes irréversibles, la pensée intellectuelle occidentale arménienne s'est presque paralysée, le territoire linguistique arménien s'est malencontreusement réduit.

Pendant la période pré-soviétique l'existence des traductions arméniens à partir du français en médiation par la langue russe a été conditionné par les liens littéraires et culturels étroites entre les intellectuels russes et arméniens orientales; écrivains, traducteurs, professeurs et éditeurs. Il suffit de mentionner les noms de St. Lisitsian, Raffi, Hovh. Toumanian, Al. Tsaturian, D. Demirtjian et autres.

Pendant la période soviétique, le rapport entre les traductions directes et en relais évolue dans le sens des traductions indirectes. Cette période se distingue par la montée des traductions indirectes, qui était due au contexte culturel et politique complexe crée dans le monde soviétique. La vague des reformes linguistiques-politiques radicaux passent à travers l'ensemble du pays. Les pertes irréversibles en Arménie causées par les facteurs externes ont été complétées par la politique linguistique locale mal avisé. A cause du changement d'orthographe, le riche patrimoine traduit de la littérature enfantine, résumé principalement dans les magazines "Hasker" et "Aghbyur" deviennent "inacceptable" pour la lecture. La situation pourrait être modifiée uniquement par la réédition de l'intégralité de la littérature traduite, ce qu'était un problème irréalisable dans les débuts de l'Arménie soviétique.

Une activité nécessaire vigoureuse de traduction surgit, en particulier pour la littérature enfantine française. Dans le contexte historique culturel nouvellement crée, la langue russe, devient un intermédiaire spirituel entre les riches traditions de la littérature française pour enfants et les jeunes lecteurs arméniens.

Il convient de noter que l'Arménie était différente par son statut linguistique unique. Il n'y avait aucune menace pour l'intégration de la langue nationale. L'héritage épique et littéraire était conservé en arménien, est solidement fixé dans les textes en langue arménienne.

L'école de la traduction avait des traditions solides et anciennes. Pendant la période soviétique pour l'évolution de la communication culturelle arméno-française un nouvel élan a été donné par la vague de rapatriement des intellectuels venant des pays francophones. Grâce à tout cela l'expansion du territoire russe en Arménie a été perçue non pas comme une menace pour les positions de la langue nationale, mais comme un moyen fiable pour stimuler le dialogue culturel arméno-française. Une intermédiation pareille partiellement indemnisait les lourdes pertes de la littérature enfantine à cause des circonstances historico-politiques et des politiques linguistiques.

Il est évident que la langue russe, en ayant pour mission d'être ambassadeur de littérature enfantine française, pourrait se présenter en Arménie indépendamment de son territoire géographique immense et de son large usage international. Il est important d'accepter le rôle unique qu'avait la langue russe dans la diffusion et la traduction de la littérature enfantine française. Les traditions littéraires françaises ont joué un rôle inestimable dans la formation de la littérature enfantine russe.

À leur tour, la monotonie ethnique des écrivains Français pour enfant n'a pas été violé qu'une seule fois par ''faute'' des écrivains d'origine russe. Dans la littérature enfantine un des meilleurs exemples est Sophie de Ségur, la comtesse Rostoptchina, l'un des fondateurs de la plus ancienne et plus belle série littéraire française pour enfants (Bibliothèque rose).

La propagation des traductions par médiation russe a été conditionnée aussi par la politique soviétique fermée, par les possibilités de communication culturelle et linguistique limitées avec les autres cultures, y compris avec la littérature française, le nombre et l'accessibilité des publications en russe, l'avantage quantitative des traducteurs littéraires parlant/maitrisant le russe.

La qualité artistique indéniable des compositions traduites est expliquée par les exigences strictes présentées au traducteur pour la recréation de l'original mais aussi par l'existence d'une censure de publication sérieuse. Un rôle important a joué le fait que des personnages littéraires illustres agissent comme des traducteurs, sans avoir la maitrise de la langue originale, est pouvait créer des œuvres de haute qualité, en se fondant sur la langue intermédiaire.

Il est à noter que dans la période soviétique, la plupart des traductions de la littérature enfantine françaises a été accompagnée par une préface ou une conclusion nettement politisé. Souvent la critique de l'auteur servait comme un laissez-passer des œuvres traduits publiés.


La liste de la littérature française pour enfant, les traductions en arménien à partir de la langue russe comprend les noms les plus distinctifs; Charles Perrault, Comtesse de Ségur, Jules Vernes, Alexandre Dumas, Alphonse Daudet, Hector Malot, Antoine de Saint Exupèrie, Christian Pineau et autres.

Actuellement, grâce aux relations culturelles étroites arméno-française et l'activité ferme de l'école de traduction franco-arménienne, le volume des traductions par médiation a strictement faibli, bien qu'il ne soit pas entièrement épuisé.

* * *

La viabilité de la pensée de traduction arménienne est sans équivoque; le tome royal de la pépinière Française, Le Petit Prince, a au moins cinq interprétation et traduction en arménien, y compris les traductions de Saghatel Haroutyounyan (a partir du russe), Sophie Avagyan, Garbis Sourenyan, Samvel Gasparyan, Thérèse Voskeritchean (en arménien occidentale).

A. Djivanian



Французские народные сказки. Пер. с франц. А. Кулишер и др. Москва: Правда, 1988.

Аннетта набрала полную корзину плодов и снесла больному принцу. Легко угадать, какая награда досталась ей за этот драгоценный подарок: она стала женой принца и жила с ним в счастье и довольстве до конца своих дней. Вот и все.



«Маленькая Аннетта»



Ֆրանսիական ժողովրդական հեքիաթներ, ռուս. թարգմ.՝ Զ. Ղազարյանի, Երևան, Հայաստան, 1974:

Աննետան մի լիքը զամբյուղ պտուղ է քաղում ու տանում արքայազնին: Դժվար չէ կռահել, թե ինչ պարգև է ստանում այդ թանկարժեք նվերի փոխարեն՝ նա դառնում է արքայազնի կինն ու երջանիկ ապրում մինչև իր վերջին օրերը: Ահա և բոլորը:

«Փոքրիկ Աննետան»



Ф. Рабле. Гаргантюа и Пантагрюэль.
Пер. с франц. Н. Любимова. Москва: Эксмо, 2007.

Грангузье был в свое время большой шутник, по тогдашнему обычаю пил непременно до дна и любил закусить солененьким. На сей предмет он постоянно держал основательный запас майнцской и байоннской ветчины, немало копченых бычьих языков, в зимнее время уйму колбас, изрядное количество солонины с горчицей, на крайний же случай у него была еще икра и сосиски.



Ֆրանսուա Ռաբլե, Գարգանտյուան և Պանտագրյուելը, թարգմ. Ն. Զաբոլոցկու ռուսերեն վերապատումից Ե. Թաղիանոսյան, Երևան, Սովետական գրող, 1982:

Կար ժամանակ, երբ հսկա Գրանգուզիեն շատ ուրախ մարդ էր և լավ ուտող: Նրա մառաններում միշտ անպակաս էին լինում խոզապուխտը, տեսակ–տեսակ երշիկները, աղ դրած ու մանանեխով համեմած միսը, խավիարը և յուղալի նրբերշիկները:



Charles Perrault. Contes. Paris: Pocket, 2006.

Il était une fois un homme qui avait de belles maisons à la Ville et à la Campagne, de la vaisselle d'or et d'argent, des meubles en broderie, et des carosses tout dorés; mais par malheur cet home avait la barbe bleue…




Шарль Перро. Истории или сказки былых времен. Пер. с франц. А. Федорова, стихи в тексте – Л. Успенского. Москва: Радуга, 2002.

Жил когда-то человек, у которого были прекрасные дома и в городе, и в деревне, золотая и серебрянная посуда, кресла, украшенные шитьем, и золоченые кареты. Но, к несчастью, у этого человека была синяя борода.




Շարլ Պերրո, Հեքիաթներ, ռուս. փոխադրեց Ա. Ղուկասյանը, Երևան, Արևիկ, 2008:

Ժամանակով մի շատ հարուստ մարդ է լինում: Գեղեցիկ տներ է ունենում, բազմաթիվ ծառաներ, ոսկե ու արծաթ ամանեղեն, ոսկեզօծ կառքեր, հոյակապ նժույգներ: Բայց դժբախտաբար, մորուքը կապույտ է լինում:



Comtesse de Ségur. Mémoires d'un ane. Librairie Hachette. Bibliotheque rose illustrée, 1909.

Je ne me souviens pas de mon enfance; je fus probablement malheureux comme tous les ânons, joli, gracieux comme nous les sommes tous; tres certainement je fus plein d'esprit, puisque, tout vieux que je suis, j'en ai encore plus que mes camarades.




Софья де Сегюр. Записки осла. Пер. с франц. под ред. Н. Ушакова. // Собрание сочинений, т. 1. Москва: Терра: Книжный Клуб, 2009.

Детства своего я не помню; но, по всей вероятности, я был также несчастлив, также миловиден и также грациозен, как и вся наша порода, но умен-то я был непременно, потому что, и теперь, несмотря на преклонные лета мои, у меня более ума, чем у моих товарищей.

Կոնտես դը Սեգյուր, Իշուկի հիշատակարանը, ռուս. թարգմ. Ա. Չիվանյանի (անտիպ):

Մանկությունիցս շատ քիչ բան եմ հիշում: Հավանաբար մյուս բոլոր գեղեցիկ և շնորհալի իշուկների նման դժբախտ էի: Բայց պետք է, որ շատ խելոք եղած լինեմ, քանի որ այս առաջացած տարիքիս էլ ավելի խելացի եմ, քան իմ ընկեր ավանակները:



Hector Malot. Sans Famille. Le Livre de Poche, 2000.

Je suis un enfant trouvé. Mais, jusqu'à huit ans, j'ai cru que, comme tous les autres enfants, j'avais une mére, car, lorsque je pleurais, il y avait une femme qui me serrait si doucement dans ses bras en me berçant, que mes larme s'arretaient de couler.


Гектор Мало. Без Семьи. Пер. с франц. А.Н. Толстой. Москва: Астрель, 2005.

Я – найденыш. Но до восьми лет я этого не знал и был уверен, что у меня, как и у других детей есть мать, потому что, когда я плакал, какая-то женщина нежно обнимала и утешала меня и слезы мои тотчас же высыхали.



Հեկտոր Մալո, Առանց ընտանիքի, ռուս. թարգմ.՝ Լ. Հայրապետյանի, Երևան, Հայպետհրատ, 1958:

Ես ընկեցիկ եմ: Բայց մինչև ութ տարեկան հասակս, այդ չգիտեի և համոզված էի, որ ուրիշ երեխաների նման ես նույնպես մայր ունեմ, որովհետև երբ լաց էի լինում, ինչ որ մի կին քնքշորեն գրկում ու մխիթարում էր ինձ, և արցունքներս իսկույն չորանում էին:



Alphonse Daudet. Jack. 1876.

… il entrvoit tout près de lui une petite maison chargée de vignes, de glycines en fleurs, de rosiers montants, qui la recouvrent jusqu’au faîte de son pigeonnier et de sa tourelle toute rose de briques neuves. Au-dessus de la porte, entre l’ombre flottante des lilas déjà en fleur, une inscription en letters d’or: Parva domus, magna quies. Oh! La jolie maison tranquille, baignée de lumière blonde! Tout est encore fermée pourtant on ne dort pas, car voici une voix de femme, fraîche et joyeuse, qui se met à chanter:

Mes souliers sont rouges,
Ma mie, ma mignonnne.



Ալֆոնս Դոդե, Ջեկ, ռուս. թարգմ.՝ Վ. Դանիելյանի, Երևան, Սովետական գրող, 1981:


… նա տեսնում է փոքրիկ մի տնակ, պաճուճված՝ խաղողի թփերով, ծաղկուն գլիցինաներով, փաթաթվող վարդերով. բույսերը ձգվել և պարուրել էին աղավնատունը և վարդագույն աշտարակը, որը շարված էր նոր աղյուսով: Մուտքի դռան վրա, յասամանի արդեն ծաղկած թփերի ստվերում՝ ոսկեզօծ տառերով գրված էր. Փոքր տուն, մեծ անդորր: Ա՜խ, ինչ հրաշալի, հաճելի տուն է, ողողված արեգակի ջերմ շողերով: Այն դեռ փակ է, բայց ներսում արդեն քնած չեն՝ ինչ–որ մի կին երգեց զիլ, ուրախ ձայնով.

Կոշիկները մեր կարմիր են,
Սիրելի իմ փոքրիկ:




Альфонс Доде. Необычайные приключения Тартарена из Тараскона. Пер. с франц. Н. Любимова. //Антология мировой детской литературы. Москва: Аванта, 2002.

Вдруг окно с шумом распахнулось, и Тартарен в одной сорочке, в ночном колпаке, с намыленной щекой, потрясая бритвой и кисточкой, громовым голосом крикнул:
— На шпагах, господа, на шпагах!.. Но не на булавках!
И вот эти-то замечательные слова, достойные войти в историю, по ошибке были обращены к каким-то соплякам.



Ալֆոնս Դոդե, Տարասկոնցի Տարտարենը, թարգմ.՝(ենթադր. ռուս.–ից). Վ. Թերզիբաշյանի, Երևան, Պետական հրատարակչություն, 1937:

Մեկ էլ հանկարծ պատուհանը շրխկ բացվեց և Տարտարենը շապկանց, գլուխը լաթով փաթաթած, սապոնի սպիտակ փրփուրը յերեսին, ածելին ձեռքում ճոճելով, ահարկու ձայնով վորոտաց.
— Սրով կռվեցեք, պարոննե՛ր, սրով, և վոչ գնդասեղով:
Գեղեցիկ խոսքեր, արժանի պատմության եջերը զարդարելու….



Antoine de Saint-Exupéry. Le Petit Prince. Raduga, 2003.

Tu vois, là-bas, les champs de blé? Je ne mange pas de pain. Le blé pour moi est inutile. Les champs de blé ne me rappellent rien. Et ça, c'est triste! Mais tu as des cheveux couleur d'or. Alors ce cera merveilleux quand tu m'auras apprivoisé! Le blé, qui est doré, me fera souvenir de toi. Et j'aimerai le bruit du vent dans le blé …


Антуан де Сент-Экзюпери. Маленький принц. Пер. с франц. Н. Галь. Изд. Радуга. 2003.

Видишь, вон там, в полях зреет пщеница? Я не ем хлеба. Колосья мне не нужны. Пшеничные поля ни о чем мне не говорят: и это грустно! Но у тебя золотые волосы. И как чудесно будет, когда ты меня приручишь! Золотая пшеница станет напоминать мне тебя. И я полюблю шелест колосьев на ветру. ...

Անտուան դը Սենտ Էքզյուպերի, Փոքրիկ իշխանը, թարգմ.՝ Սաղաթել Հարությունյանի, Երևան, Զանգակ, 2001:


Տեսնում ես, այնտեղ՝ արտերի մեջ, հասնում է ցորենը: Ես հաց չեմ ուտում: Հասկերն ինձ պետք չեն: Ցորենի արտերը ինձ ոչինչ չեն հիշեցնում: Եվ դա շատ տխուր բան է: Բայց դու ոսկե մազեր ունես: Եվ ինչքան լավ կլինի, որ դու ինձ ընտելացնես: Ոսկե ցորենը կհիշեցնի ինձ քո մասին: Եվ ես կսկսեմ սիրել քամուց օրորվող հասկերի շրշյունը:





Անթուան Տը Սէնթ–Էքզիւփէրի, Փոքրիկ իշխանը, թարգմ. Թերէզ Ոսկերիչեան, VanCrane Inc, 2006:

Նայէ, հեռուն, ցորենի արտերը կտեսնե՞ս. ես հաց չեմ ուտեր, ցորենը ինծի համար անօգուտ է: Ցորենի արտերը ինծի ոչինչ կը յիշեցնեն: Եվ ասիկա տխուր բան է: Բայց դու ոսկի գոյնով մազեր ունիս: Հիանալի պիտի ըլլայ եթէ դուն ընտելացնես զիս. ոսկեգոյն ցորենը քեզ պիտի յիշեցնէ, եւ պիտի սիրեմ հովին ձայնը հասկերուն մէջ …



Անտուան դը Սենտ Էքզյուպերի, Փոքրիկ իշխանը, թարգմ.՝ Մ. Գասպարյանի, Երևան, Արեգ, 2010:

Նայիր այն կողմը, տեսնում ես ցորենի արտերը: Ես հաց չեմ ուտում: Ինձ ցորեն պետք չէ: Ցորենի արտերն ինձ ոչինչ չեն հուշում: Եվ դա տխուր է, շատ տխուր: Իսկ դու ոսկեգույն մազեր ունես: Ուրեմն հրաշք բան կլինի, եթե ընտելացնես ինձ: Ցորենը, որը նույնպես ոսկեգույն է , ինձ անընդհատ կհիշեցնի քո մասին: Եվ ես կսիրեմ քամու խշշոցը ցորենի արտում….

Антуан де Сент-Этьен
Маленький принц возвращается
(пер. с венгерского Т. Воронкиной)

Вновь оглядевшись по сторонам, я увидел в маленькой долине крохотный домик и направился к нему. ... Этот милый, звонкий голосок я узнал бы из тысячи других. Вот и сейчас, по происшествии стольких лет, он музыкой прозвучал для моего слуха, радостью отозвался в сердце. Маленький принц бросился мне навстречу. Его золотистые волосы развевались на ветру, так же как и желтый шарф. На нем был его синий плащ с красной подкладкой, а под плащом – новый белый костюм, который очень ему шел.... Я склонился над ним, и мы обнялись.



Кристиан Пино. Как замерзла маленькая жена мясника. пер с франц. — //Сказки. Москва: СП Интерграф Сервис, 1990.

В восемнадцать лет Мари-Гиацинту выдали замуж за мясника. Она была младшей дочерью в бедной семье и обладала единственным богатством – золотыми искорками, светившимися в синих глазах.



Կրիստիան Պինո, Ինչպես սառեց մսագործի փոքրիկ կինը, ռուս. թարգմ.՝ Ա. Զիվանյանի, Բեյրութ, 1994:

Տասնութ տարեկան էր Մարի–Ժասենտը, երբ նրան կնության տվեցին մի մսավաճառի: Մարին իր չքավոր ընտանիքի կրտսեր զավակն էր, և նրա միակ հարստությունը կապույտ աչքերի խորքում փայլող ոսկե կայծերն էին:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌՈՒՍԵՐԵՆՈՎ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Daudet, Alphonse. Jack. Paris: Flammarion, 1973.
Доде, Альфонс. Джек. Пер. с франц. С. Викторовой. Москва: ДетГиз, 1956.
Դոդե, Ալֆոնս, Ջեկ, ռուս. թարգմ.՝ Վ. Դանիելյանի, Երևան, Սովետական գրող, 1981:
2. Daudet, Alphonse. Le Secret de maitre Cornille. Flammarion, 1946.
Доде, Альфонс. Тайна деда Корниля. // Неведомый шедевр. Рассказы французских писателей XIX века. Москва: Молодая гвардия, 1983.
Դոդե Ալֆոնս, Կոռնել պապի գաղտնիքը, ռուս. թարգմ.՝ Ա. Խնկոյանի, Երևան, Լույս, 1983:
3. Daudet, Alphonse. Tartarin de Tarascon. Brooking International, 1996.
Доде, Альфонс. Необычайные приключения Тартарена из Тараскона. Пер. с франц. Н. Любимова. //Антология мировой детской литературы. Москва: Аванта, 2002.
Դոդե, Ալֆոնս, Տարասկոնցի Տարտարենը, թարգմ. բնագրի համեմատ խմբագրեց Վ. Թերզիբաշյանը, Երևան, Պետական հրատարակչություն, 1937:
4. Dumas, Alexandre. Les trois mousquetaires. Gallimard, 1962.
Дюма, Александр. Три мушкетера. Пер с франц. Д. Лившица, В. Вальдман и К. Ксаниной. Москва: Эксмо, 2010.
Դյումա, Ալեքսանդր, Երեք հրացանակիրները, ռուս. թարգմ.՝ Հ. Հարությունյանի, Երևան, Հայպետհրատ, 1953:
5. Malot, Hector. Sans famille. Le Livre de Poche, 2000.
Мало, Гектор. Без Семьи. Пер. с франц. А. Толстой. Москва: Астрель, 2005.
Մալո, Հեկտոր, Առանց ընտանիքի, ռուս. թարգմ.՝ Լ. Հայրապետյանի, Երևան, Հայպետհրատ, 1958:
6. Malot, Hector. Romain Kalbri. Nabu Press, 2010.
Мало, Гектор. Ромен Кальбри. Пер. с франц. А.Толстой. Москва: Астрель, 2005.
Մալո, Հեկտոր, Ռոմեն Կալբրի, ռուս. թարգմ.՝ Լ. Նազարյանի, Երևան, Հայաստան, 1974:
7. Perrault, Charles. Contes. Paris: Pocket, 2006.
Перро, Шарль. Синяя борода: Сказки. Пер. с франц. А Федорова, стихи в тексте – Л. Успенского С.-Пб.: Азбука Классика, 2007.
Պերրո, Շարլ, Հեքիաթներ, ռուս. փոխադր.՝ Ա.Ղուկասյանի, Երևան, Արևիկ, 2008:
8. Pineau, Christian. Contes de je ne sais quand. Editions Hachette, 1952.
Пино, Кристиан. Как замерзла маленькая жена мясника. Пер. с франц. //Сказки. Москва: СП Интерграф Сервис, 1990.

Պինո, Կրիստիան, Ինչպես սառչեց մսագործի փոքրիկ կինը, ռուս. թարգմ.՝ Ա. Զիվանյանի// Ծննդյան պատմություններ, Բեյրութ, 1994:
9. Rablais, Francois. Gargantua et Pantagruel en francais moderne. Editions Nilsson, 1930.
Рабле, Ф. Гаргантюа и Пантагрюэль. Пер. с франц. Н. Любимова. Москва: Эксмо, 2007.
Ռաբլե, Ֆրանսուա, Գարգանտյուան և Պանտագրյուելը, թարգմ. Ն. Զաբոլոցկու վերապատումից՝ Ե. Թաղիանոսյանի, Երևան, Սովետական գրող, 1982:
10. Ségur, Comtesse de. Mémoires d'un ane. Librairie Hachette. Bibliotheque rose illustrée, 1909.
Сегюр, Софья де. Записки осла. Пер. с франц. под ред. Н. Ушакова // Собрание сочинений, т. 1. Москва: Терра: Книжный Клуб, 2009.
Սեգյուր, Կոնտես դը, Իշուկի հիշատակարանը, ռուս. թարգմ.՝ Ա. Զիվանյանի, անտիպ:
11. Saint-Exupéry, Antoine de. Le Petit Prince. Raduga, 2003.
Сент-Экзюпери, Антуан де. Маленький принц. Пер. с франц. Н. Галь. Изд. Радуга. 2003.
Սենտ–Էքզյուպերի, Անտուան դը, Փոքրիկ իշխանը, ռուս. թարգմ.՝ Սաղաթել Հարությունյանի, Երևան, Զանգակ–97, 2001:
12. Verne, Jules. Les enfants du capitaine Grant. Lidis, 1961
Верн, Жюль. Дети капитана Гранта. Москва: Детская литература, 1986.
Վեռն, Ժյուլ, Նավապետ Գրանտի որդիները, ռուս. թարգմ.՝ Ն. Թումանյանի, Երևան, Սովետական գրող, 1978:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ